





Ա Տ Ո Մ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ
ԱՆԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ




ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹՈՒՐՔԵՐՈՒ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՈՂ ԴՊՐՈՑԸ

A
I
13893



Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ
1913



ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

№ 173

ՕՍՄ. ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹՈՒՐԲԵՐՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՈՂ ԴՊՐՈՑԸ

Ճէլայ նուրի պէյի հրատարակ հանած երկու նոր աշխատութեանց առաջինն է Թարիխը Թեհէնէխարը Օսմանիկ՝ «Օսմանեան անկման պատմութիւնը», զոր ևս նախամեծար կը համարիմ թարգմանել՝ «Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը»:

Յարգելի հեղինակին աշխատութիւնը լուրջ ու պատմական ուսումնասիրութեան վրայ հիմնուած, և ինչպէս ձէնապ Շէհապէտարին պէյն էր ըսեր, առաջինն է որ քաղաքացիական քաջութիւնն է ունեցած մատը վէրքին վրայ գնելու, անկումի բոլոր պատճառները թուելու և մասնանշելու, նախապաշարումները թօթափելու ճիգը զորժ գնելով՝ ինքնաքննադատութեան բարձրութեան հասնելու, մէկ խօսքով գիտական աշխատանք մը կատարելու:

Երևոյթը չափազանց մխիթարական է և արժանի լուրջ ուշադրութեան: Կարելի է ըսել որ Երխսուսարդ-բուրի գպրոցը սկսեր է արդէն նոր էվոլյուսիօնի մը կնթարկուիլ, դասականէն գիտականին անցնելով:

Միայն թէ վերանորոգման խմատը կարելի է և երկու կերպով ըմբռնել, — մէկը՝ որ հին գպրոցին ամբողջ-

վին հրամեշտ տարով նորը, ՚րնականը, դիտականը կը հիմ-
նէ, միւսը՝ որ դիտական մեթոտի մէջ խարխափումներու
ենթարկուելով, չկրնալով նախապաշարու մներէ ամբող-
ջովին ազատիլ, սխալ եզրակացութեանց կը հասնի ու
դիտական անուան տակ հինը կը վերահաստատէ :

Ինծի կը թուի թէ յարգելի հեղինակին այս աշխա-
տութիւնը ասկաւին այս երկրորդ պարագային ազդե-
ցութեան տակ կամ շրջանին մէջ կը գանուի :

Երևոյթները դիտելու, թուելու և քննելու մէջ
գրեթէ ոչինչ է զանց առեր. մտրակը ձեռքն առած՝
հեղինակը ուշադրութենէ չէ վրիպեցներ բոլոր այն ե-
րևոյթները, մտայնութիւնները, ուղղութիւնները, բար-
քերը և ըմբռնումները՝ որոնք իրականապէս կազմեր են
այս պետութեան անկման պատճառները կամ ազդակ-
ները : Բայց չէ կրցեր ինք ալ իր ձաղկած նախապաշա-
րումներէն ամբողջովին ազատիլ և իր եզրակացութեանց
մէջ հասեր է վերստին նախկին մէօն-թրքական շովի-
նիզմին՝ թէև աւելի փափկացած և աւելի նրբացած
ձևով :

Այս կէս ճամբան չէ որ մեր ամէնուս ցանկացած
և մեր ամէնուս մտահոգութեան առարկան եղած պե-
տական վերանորոգման պիտի կարողանայ առաջնորդել,
բայց և այնպէս քայլ մըն է առաջդիմութեան, աստի-
ճան մըն է էվոլյուսիօնի, և քայլ մըն ալ, էվոլյուսիօնի
աստիճան մըն ալ, ու ահա կրնանք հասնիլ առողջ,
աննախապաշար և ամբողջովին դիտական եզրակացու-
թեանց. կը հասնինք այն սկզբունքներուն ու օրէնք-
ներուն՝ որոնցմով միայն կարելի է հիմնաւորել վերա-
նորոգուող պետութիւն մը, որոնցմով միայն կարելի է
անցեալի բոլոր դասնութիւններուն վերջ դնել և սպա-
գային հաւատքով դիմել :

Այս պարագան յատկամտութեամբ նկատած է ճէնայ Շէնապէտտին պէյ իր այնքան նուրբ սնով զրուած ու հեղինակին ուզզած բաց նամակ-յողուածովը :

Ճէնայ Շէնապէտտին պէյի ձազկումները երկու գլխաւոր կէտի էին ուղղուած, — բութ գիմուորական ֆաղափարութեան և հպարտակազգերը ձուլելու քաղաքականութեան դէմ :

Սրգարեւ, Ճէյուլ նուրի պէյ լայն մաքերով, Հասմէական և Բիւզանդական կայսրութեանց ու Յրանսական Մեծ Յեղափոխութեան օրինակներով՝ իր քննադատութիւնները հիմնաւորելու աշխատելով հանդերձ, ինչպէս ըսի, չկրնարով մէ՞ն թրքութեան շովինիստական նախապաշարումներէն ազատուիլ, ինկած է հակասութեանց մէջ, և կարծած է թէ վերածնութիւնը կարելի է գլուխ բերել գիմուորական քաղաքակրթութեամբ և ձուլումի քաղաքականութեամբ :

Այս ձախող հեռուութիւնը ո՛չ միայն թրքական՝ այլ համապետական տեսակէտէն ալ անցեալի սխալ կրթչնութիւնն ըլլալով, անհնար է անուշաղիթ թողուլ : Մանաւանդ էփօլիսիանի նոր աստիճանին անցնելու, անցեալին հետ վերջնականապէս ամէն կողմ խզելու համար՝ պարտականութիւն կը զգանք չրտականանալ բնդհանուր տեսութիւններով, այլ մտանալ յարգելի հեղինակին թէզերուն և եզրակացութեանց, աւելի հանդամանօրէն մասնանշելով իր իսկ հակասութիւնները, և դուրս բերելով իր իսկ փաստերէն ու տեսութիւններէն սրամարանօրէն ու պատմականօրէն հեռուող եզրակացութիւնները :

I

Եւ մեր այս ստորասկանութիւնը կատարելու համար պիտի հետեւինք, ըստ կարգի, հեղինակին հետեւած ընդհանուր գծերուն:

Հեղինակը իր սրտամաքննադատական տեսութիւնն ընկու համար, նախ ընդհանուր գծերով կը ներկայացընէ թուրք տարրը՝ Օսմանեան կայսրութեան ծագման ու կազմակերպման շրջանին մէջ: Գուցէ աւելի ճիշտ ըզար բնկ, կը ներկայացնէ Օսմանեան կայսրութեան ստեղծման նպաստող նոյն ժամանակի պայմանները, եւ ապա՝ բաւական անկողմնակալութեամբ դադարաբար կուտայ կայսրութեան մէջ ստեղծուած թուրք ըսուած տարրի կազմութեան, էութեան մասին:

Ճէլալ Նուրի պէյ կ'ըսէ. «Օսմանեան թուրքերը հիմնեցին կայսրութիւնը, երեք ազգեր իրենց նախկին մեծութեան հրաժեշտ տալով, անկախութենէ զրկուելու վտանգին էին հասած» (էջ 22):

Եւ այդ երեք ազգերու կամ պետութեանց — Արաբ, Պարսիկ եւ Արեւելեան կամ Բիւզանդական կայսրութեան — ներքին խռովութեանց, բարքերու անկման ու վատասերման ամփոփումը ներկայացնելէ յետոյ, կը շարունակէ:

— «Ահա Օսմանեան թուրքերը Գուրանէն եկան թէ չէ, նախ աւրուած, կազմալուծուած Գոնիայի Աէլճուքեաններուն ժառանգութեան վրայ նստեցան: Անկէ յետոյ Արեւելեան Հռոմի տիրապետութիւնը ձեռք անցուցին: Այս երկու յաջողութիւններէն յետոյ քուրճ բանակները ⁽¹⁾ մէկ կողմէն Սուրիան, Միջագետքը, Եգիպտոս-

(1) Ընդգծումները մերն են, որովհետեւ անոնց մասին առիթն պիտի ունենանք մեր դիտողութիւններն ընելու:

սը և Պերպերիստանը նուաճելով՝ Արարական կայսրութեան յաջորդեցին, և միւս կողմէ Իրանի մէջ մըխըր-ճուելով՝ տիրապետեցին Պարսկական կայսրութեան ամենակարեւոր մասերը, շիաներով բնակուած կովկասեան շրջանի զրեթէ կէտը» (երես 24) :

Այս տեղ սակայն յարգելի հեղինակը պակաս կը թողու պատմական հետազոտութիւնն ու սա փաստերը թէ՛ թուրքերը Դուրանէն երբ եկան, ինչ թիւ կը կաղմէին, մինչև Գոնիա հասնելնին սր ճանապարհով եկան, սր տեղեր կանդ առին, որքա՞ն ժամանակ տեւեց մինչև որ վերջնական կայան ընտրեցին. թէ արդեօք Սելճուքները միևնոյն Միջին Ասիական Թաթար թուրքցեղին չէին պատկաներ. թէ Սէլջուքները թուրքերէն սրքան ժամանակ առաջ էին եկած, ինչ պատճառներով Սէլճուքեան տիրապետութիւնը ինկած էր և ինչո՞ւ միևնոյն ցեղին ու կրօնին պատկանող Սէլճուքեան պետութեան կը յաջորդէր Օսմանեանը :

Այս բոլոր կէտերուն հետազոտութիւնը, հարցումներն ու պատասխանները բաց թողուած ըլլալով՝ լուսաբանութեան և զէպքերու բնական յարակցութեան մթութիւն առաջ եկած է, և ճիշտ այդ մթութեան պատճառով ալ, առանց պատմական հիմնաւորումի, անհնար կ'ըլլայ ընդունիլ որ Սէլճուքեաններու անկման ժամանակամիջոցին մէջ միայն թուրք մէկ ազգային ուրոյն հատուած Դուրանէն եկած, բանակներ է ունեցած և շնորհիւ այդ զուտ ազգային բանակներուն ալ կատարեր է նուաճումներ, հիմնելով նոր պետութիւն մը :

Միջին Ասիայի ցեղերէն ո՛չ միայն թուրքեր, այլ և Տաճիկներ գանուեր են Փոքր Ասիոյ մէջ ու այս պատճառով ալ մեր լեզուին մէջ թուրքիան կը կոչուի նաև Տաճկաստան. բայց անբնական է ենթադրել որ մէկ ցեղ

իր բնագաւառէն ճամբայ իյնալով անընդհատ արշա-
ւանք ու անընդհատ ճամբայ շարունակած՝ և հասնե-
լով Գանիա, այնտեղ ուրիշ պետութեան մը աւերակ-
ներուն վրայ կանգնած ըլլայ նոր պետութիւն մը:

Պատմութեան ընթացքին՝ մանաւանդ Միջին Ասիա-
յէն շատ են եղեր արտագաղթեր, արշաւանքներ: Եր-
կար և զուցէ աւելորդ իսկ ըլլար անոնց վերջիումն
ընել այստեղ: Բայց պատմական ուսումնասիրութիւն-
ները ցոյց են աուեր և ասորական դատողութիւնն ալ
նոյնը ենթադրել կուտայ որ բոլոր արտագաղթերու և
արշաւաքներու ընթացքին ալ զաղթողներն ու արշա-
ւողները՝ իրենց ճամբուն վրայ կամայ ակամայ դադար-
ներ են ունեցած, կռիւներ են մղած, նուաճումներ են
կատարած, ու այդպիսով միայն ճամբայ են բացած
մինչև իրենց հասնելը այնպիսի միջավայր մը, որուն
աշխարհագրական, անտեսական և այլ պայմանները նը-
պատասար գտած են վերջնական կայան ընտրելու ի-
րենց համար: Եւ անշուշտ, այդ վերջնական կայանն ալ
անտէր ու անտիրական չէր կրնար ըլլալ. հոն ալ պու-
տերազմ մղելու ստիպուած կ'ըլլային, մինչև որ տե-
ղաւորուելու հնարաւորութիւնը գտնէին:

Արդ, կամ ա՛յն է որ Թուրքերն ու Տաճիկներն ալ
Սէլջուքեաններու հետ եկած թաթարական ցեղերէն էին,
և կամ այն է որ՝ եթէ Սէլջուքեաններէն շա՛տ յետոյ,
անոնց անկման վերջին օրերուն էին եկած, պէտք է որ
իրենց անցած ճանապարհի վրայ պատերազմներուն և
նուաճումներուն ալ պատմութիւնը գոյութիւն ունենայ:
Մէր է այդ պատմութիւնը, ինչ որ չկայ ձէլալ նուրի
պէշի զրքին մէջ, և պակաս մըն է տաիկա, ինչպէս
ըսինք:

Գարձեալ, եթէ Թուրքերն ու Տաճիկները Օսման-

ևան տիրապետութիւնը սկսելէ առաջ՝ արդէն եկած հաստատուած էին, ապա ուրեմն հպատակներ էին Աէլ-ձուքեաններուն։ Իսկ եթէ Աէլձուքեաններու իշխանութեան ասկ անդաւարումներ չէին ու նոր էին եկեր արչաւելու, ապա ուրեմն Աէլձուքեաններու անկումի վիճակէն օգտուելով, անոնց զէմ պատերազմ մղելով վերջ զրամ էին անոնց իշխանութեան, իրենցինք հաստատելով այդ քայքայուող Պետութեան աւերակներուն վրայ։

Երկու պարագային ալ, Աէլձուքեան պետութեան մէջ Աէլձուքեան ցեղը, ա՛ղզը գոյութիւն պիտի ունենար։ Ա՛ւր մնաց հապա այդ ցեղը, այդ աղզը։

Այս բարբ միութիւնները բնականաբար կ'առաջուցրնեն տարակուսանքներ՝ պետութիւն մը հիմնելու շափ թուով ու որակով գոյութիւն ունեցած զուտ թրքական ցեղի մը կամ աղզի մը մասին։

Այս տարակուսանքը հեղինակը ինքն իսկ կ'ուժեղացրնէ իր այլ հատուածներով։ Արդէն քացաութիւն չեն նայն զրքին մէջ՝ լուսազոյն վերլուծումներուն կըցուած ու անմիջական կապ չունեցող պարբերութիւնները։ Օրինակ, 52րդ երեսին վրայ, անկման պատճառներէն մէկն ալ, արալիլլուով՝ առհաւութեամբ ժառանգուած յատկութեանց մէջ որոնելէ յետոյ, հեղինակը կ'ուկըցնէ. — «Արդէն թուով քիչ էին, այդ պատճառով ալ թուրք ընկերութեան և աղզութեան մէջ մըտնոյնները բոլորն ալ կա՛մ գինու սր կը դառնային և կամ գինու սրին օժանդակ կ'ըլլային»։

Իսկ Թուրքերու կրամ զանազան աղղեցութիւնները թուելէ յետոյ, 28րդ երեսին վրայ կը վկայէ թէ՛ — «Միջին Ասիայէն եկած առաջին Թուրքերը Հոսմուլուսի ժամանակի Հոսմայեցիներու նման ամէն աղղէ

ազգիկ աւին: Աբար, Պարսիկ, Յոյն, Պալկար, Սերպ,
Պոչնաք, Ֆրէնկ արիւնք թուրք արեան հետ խառնուե-
ցաւ և նուաճուած ազգերու անհասաներէն շատերը Իս-
լամութիւնն ընդունելով՝ թրքութեան նոյնացան (թիւք-
լէշափ)»:

ՅՍրդ երեսին վրայ կը հանդիպինք հետեւեալ պար-
բերութեան. — «Որովհետև պետութիւնք թէև իբրև
թուրք պետութիւն կազմուէր է, բայց ի վերջոյ իր
էութիւնը աւելի ընդհանրացրած է և եզեր է իսլամ
պետութիւն»:

Այս խառնուրդը աւելի շեշտելով, 29րդ երեսին
վրայ կ'ըստի — «Աշխարհի մէջ ո՛չ մէկ ազգ չկայ, ո՛չ
մէկ ազգ չի գտնուիր որ ունենայ այնպիսի վերին խա-
ւեր՝ որոնք թուրքերուն չափ ուրիշ ազգերու եւ ցե-
ղերու հետ իր արիւնն ու ցեղը միացուցած ըլլայ»: Իսկ
ՅԱրդ երեսին վրայ՝ հեղինակը կը ընտրուէ այսպէս.
— «Օսմանտան թուրքերու կազմած ազգը՝ ուրիշներու
հետ չհամամատուելու աստիճան խառնուրդ ըլլալով, ու-
նոր անդամները ապականութեան են յարած, խաթա-
րած են իրենց սոկոսնութիւնն ու ինքնութիւնը, հե-
տեւարար առաջ է եկած այժմեայ վիճակը»:

Ի՞նչ աւելի ազայցայց և խոստովանութիւն՝ որ ե-
րեք կայսրութեանց ժառանգութիւնը զբաւոյ օսման-
եան լայնածաւալ ու հզօր կայսրութիւնը հիմնելու եւ
կազմելու համար՝ բաւարար չափով զուտ թուրք ազ-
գութիւն մը գոյութիւն չէ ունեցեր:

Պետութիւնք եզեր է իսլամ, այդ պետութիւնը
ստեղծելու համար կազմուած բանակները բաղկացեր են
միայն կրօնի զրօշի տակ միացած ամէն ազգէ խառ-
նուրդով մը:

Ասով աւելի հաւանականութիւն կը գտնէ այն են-

Թաղութիւնը որ եթէ Պետութիւնը կոչուեր է Օսմանեան, և ո՛չ Թրքական, անո՛ր համար որ գանուեր է պատմական մեծ անձնուորութիւն մը, կայսրութեան հիմնադիր Մեծ Օսմանը՝ որ կարողացեր է փոքրասնակ թուրք սարբերուն հետ իր գլուխն հաւաքել մահմետական այլ ազգերէ խառնուրդներ, և ապստամբելով արդէն քայքայուող Աէլճուքեաններուն դէմ, և նախ անոնց սահմանին մէջ նուաճումներ կատարելով՝ զենել հիմը այն մեծ կայսրութեան, զոր գուցէ ինք չէր երեւակայեր, և զոր գլուխ բերին իր վեհապանծ յաջորդները:

Մենք մեր կողմէն ոչի՛նչ չենք աւելցնել, այլ մեր տեսութիւնները կը հիմնուորենք հեղինակին իր իսկ վկայութեանց վրայ:

Հեղինակին հետ՝ զիճելի պէտք չէ համարել ուրեմն որ պետութիւնը թրքական չէ: Թրքականը իշխող Օսմանի տունն է, կամ մեր լեզուի բառովը՝ Օսմանեան Հարսաութիւնն է: Պետութիւնը իսլամական է, անոր հիմնարկէքին և ծաւալմանը ծառայող բանակներն ալ եղեր են ո՛չ - զուտ թրքական, այսինքն իսլամական, խառնուրդ բոլոր ցեղերէ:

II

Մեր քննադատած «Անկումի պատմութեան» հեղինակի իսկ վկայութիւններով զուրս բերինք այն եզրակացութիւնը թէ Օսմանեան կայսրութիւնը բարձրագայիս չէ՛ եղեր, այլ իսլամ, այսինքն Մահմետական պետութիւն. Թուրք սարբը թուով քիչ ըլլալով և հիմնուող պետութիւնը միայն մահմետական դիմադրի՞ծ կրելով, ո՛չ - մահմետական բոլոր ազգերէն բազմաթիւ

անհասաները ընդունուեր են նոր պետութեան՝ օսմանեան բանակին մէջ, մէկ պայմանով սակայն որ ընդունուածները իրենք ալ ընդունած ըլլային մահմետական կրօնը:

Հուտ թուրք ասորի թուական նուագութիւնը, արչուող բանակներ կազմելու, անոնց թիւն աւելացրնելու անհրաժեշտութիւնը և այս պայմաններէն առաջացող պետութեան ու բանակի ապագային դուտ կրօնական — մահմետական զիմագիծը՝ առաջ կը բերէին և այն բնական անհրաժեշտութիւնը՝ որ բանակէն դուրս այլ ևս մահմետական չէր մնար, իւրաքանչիւր մահմետական զինուոր էր և գործօն բանակի մէջ կը զբաւնուէր:

Բանակէն դուրս մահմետական չկար ուրեմն և այս զիճակը պիտի տուէր՝ ցորչափ շարունակուէին արչուող, նուածող, փրատպետող պատերազմները:

Ոչ - մահմետականները մահմետականութիւնն ընդունելու և բանակին մէջ մտնելու կը հրապուրէր գրխաւորաբար դանախներ, պատերազմի աւար:

Այս սրբազան ինքն ըստ ինքեան բնական, հասկանալի, և նախկին դարերու բոլոր զինուորականութեան և պատերազմներու ընդհանուր զիմագիծը ըլլալով հանդերձ՝ մենք վերստին կը գիմենք մեր հեղինակին, — «Անկուսի Պատմութեան» բովանդակութեանն ու վկայութեանը:

«... Հասի նման՝ թուրքիան ևս մշտական պատերազմի մէջ էր:»

«Երկու բնկերութեանց և պետութեանց ծագումին ու հիմունքներուն միջև ևս նմանութիւն կայ»:

«Հաստութի հպատակները Հասի առաջին զինուորներն էին: Փամանակին, արդէն Հասը ամբողջ այս զինուորներէն էր բազկացած:

«... Հոռոմի բնակիչները մեծ ուրախութիւնով ու յափշտակութիւնով կը պատերազմէին, որովհետեւ պատերազմէն յետոյ բոլորն ալ մեծ աւարով կը վերադառնային: Հին Հոռոմի մէջ արհեստ ու վաճառականութիւն չկար»: (Երևս 33):

«Այն տեղ միայն աւարի վրայ կը մտածէին ու կը խօսէին: Մոնթէսքիէօ Հոռոմի այս դրութիւնը կը նմանցընէ Թաթարներու մէջ տիրող կարգին...»: (Երևս 33):

«Հոռոմի առաջին շրջանին ևս մեր մէջ ևզամ վիճակը կը տեսնենք: Այն տեղ ևս հարստութեան տիրանալու համար պատերազմի կ'երթային: Մեծ քանակութեամբ աւար առնելէ դուրս հնար չկար: Վաճառականութիւնն ու արհեստները գերիներու աշխատանքի բաժինն էր»: (Երևս 52):

«Օսմանցիներու նուաճողական շրջանին մէջ, Թուրքերը ⁽¹⁾ վաճառականութեան, արհեստի, երկրագործութեան շատ ալ չէին կարող նայիլ...»: (Երևս 52) ⁽²⁾:

«... Որովհետեւ, նախ՝ պատերազմներու և յաղթութիւններու մասնակցելով՝ թշնամիին երկրին մէջ արշաւել ու առատ ապրանք ու հարստութիւն ձեռք բերելը աւելի հեշտ բան էր, երկրորդ՝ յաղթութիւններով արբեցած առանձնաշնորհալ ազգի մը, պատերազմիկ գունդերու համար քիչ մը ծանր կուգային արուեստներ ու արհեստներ:» (Երևս 53):

Սէլճուքեաներն ալ իսլամ պետութիւն էին, բայց անոնք կը կրէին քիչ ու շատ ազգային դիմազիծ: Իսկ Թրքականը կամ Տաճկականը՝ բոլորովին ապազգայ-

(1) Ստորագծումը մերն է, որովհետեւ ինչպէս տեսանք, բանակը կազմուած ըլլալով ամէն ազգի մասմետական տարրերէ, այլ ևս ճիշտ չըլլար զանոնք Թուրք անուանել:

(2) Բնա՛ւ ալ չէին կարող և չե՛ն նայած, չե՛ն հետեւած:

նացած, միմիայն կրօնքով միացած և ամէն ազգերէ առնուած բարեյոնեան խառնուրդ մըն է միայն:

Հեղինակը, սակայն, Հռովմէական ու Օսմանեան կայսրութեանց մէջ նմանազիծեր ցուցադրելով հանդերձ՝ ուշադրութիւն չի դարձներ տարբերութեանց մասին, տարբերութիւններ՝ որոնք կը հեռացնեն երկու քին պատկերը իրենց պատմական դերովն ու արժէքովը:

1. — Հռոմի՝ ինչպէս բոլոր հին ու նոր վարձկան բանակներու և Օսմանեան այդ հուքաուկ դանայիւնով միայն վարձատրուող բանակներու կազմութեան մէջ նմանութիւն չկայ:

2. — Հռոմը չէ՛ կղեր կրօնական պետութիւն և բոլոր խառնուրդները Հռոմի պետութեան մէջ են ձուլուեր ու յուծուեր:

3. — Հռոմը արչաւանքներ կը կտատարէր, բայց միշտ Հռոմ կը վերադառնար: Հռոմը Հայրենիքն էր և նուաճուածները՝ գաղութներ:

Մինչդեռ, Օսմանեանը՝ ամբողջովին հակապատկերն է:

ա. Օսմանեան մահմաական պետութեան բանակները ուրոյն հայրենիք և միակ կեդրոնաւայր չունէին: Անոնք շարունակ կ'արչաւէին, առաջ կ'երթային, առանց վերադարձի նպատակ և կեդրոն ունենալու: Եւ քանի առաջ կ'երթային, թաղաւորանիստ քաղաքն ալ կը փոփոխուէր:

բ. Օսմանեան կայսրութեան համար տիրապետող ազգ, ժողովուրդ չկար, — այլ արչաւող, տիրող բանակ:

գ. Այդ բանակը ամէն տեղ օտար էր և միայն սուրի, հուրի և սուարի միջոցով իշխող:

դ. Օսմանեան կայսրութիւնը միակն է բոլոր այլ մահմաական պետութեանց մէջ՝ որ անօրինակ կերպով

սպազզայիև է եզեր: Բոլոր հին ու նոր մահճատական
պետութիւնները՝ Արարական, Պարսկական, Ապստոսի-
կան, Սէլճուքական, Եգիպտական, Մարոքեան, Միջին
Ասիոյ Սիւլայի, Աֆղանի և այլ խանութիւններն ու պե-
տութիւնները, բոլորն ալ կրեր են ազգային բնոյթ:
Մինչև Չինաստան բոլոր այդ պետութեանց մէջ իշխող
ցեղեր են եզեր թուրք կամ թաթար՝ ինչպէս Օսման-
եանը, և Չէրքէաներ, բայց պետութիւնը մնացեր է
Պարսկականը՝ Պարսիկ, Չինականը՝ Չին, Արարական
կամ Եգիպտականը՝ Արար կամ Եգիպտական, ինչպէս
և Մարոքականը՝ Մարոք, և յն.:

Նոյնիսկ ձէնկիզ խան թիմուր Լէնկեան պետու-
թիւնները, թէև աշխարհաստան նուաճումներով ի-
րենց սահմանները շատ են ընդլայներ, բայց միշտ մնա-
ցեր են Միջին Ասիական պետութիւն և իրենց հայրենի-
քը կեդրոն կամ յետագարձ վայր:

Միմիայն օսմանեանն է որ զուրկ է եզեր այս յատ-
կութենէն, և մենք մասնաւորապէս կանգ կ'առնենք
այս բացառիկ երևոյթին վրայ, որովհետև պիտի տես-
նենք ասոր նոյնքան բացառիկ դերը կայսրութեան
կեանքին ու պատմութեան վրայ:

Հեղինակը՝ որուն շարք մը քննադատութիւնները
անխնայ ու անվերապահ, աննախապաշարեալ են եզեր,
հազիւ թէ նշմարած չըլլար այս երևոյթը. բայց որով-
հետև գլխաւոր նպատակ և ունեցեր՝ ինչպէս ամբողջ Ե-
րիսասարդ թուրք դպրոցը, ստեղծել թուրք ազգութիւն
մը, կրօնափոխութիւնը համարելով իրրև ձուլում կամ
թրքացում, իրաւունք կուտայ մեզի ենթադրելու թէ՛
դիտմամբ անտես առած է այդ բացառիկ երևոյթը և
անխտիր կը դորձած է օսմանցի, օսմանցի բուրք, օսման-
ցի ազգ, միլիթըր խալմիյի (խալմ ազգ) բառերը կամ
թերմիւնները՝ թրքութեան իմաստով:

III

Յունական ու Հռոմէական հին մեծութիւնները, Ճարտնական նորագոյն վերածնունդը, սուսական, գերմանական ժամանակակից գինուորականութեան վրայ հիմնուած պետութիւնները կամ առհասարակ միլիթարիզմական տիրապետութիւնները, անգլիական, ֆրանսական, իտալական և այլ մեծ պետութեանց հետևած դադիթային քաղաքականութիւններն ու անոնց գրուած գիրքերը, բոլոր հին ու նոր պետութեանց մէջ գործ գրուած դուլումները, Հումայեցիներու և Օսմանցիներու գինուորականութեամբ ունեցած մեծամեծ յաջողութիւնները, — այս ամէնքը կը ներշնչեն երիտասարդ քննադատին՝ ձէլայ Նուրի պէյի մէջ նորանոր յոյսեր և ան արդէն գոյ համարելով մեծ թուրք ազգութիւն թուրքիոյ մէջ, իր քննադատութեանց և տեսութեանց բնթացք կուտայ գէպի յոյսերն ու երազները ամնող ճանապարհով, որով կ'իյնայ անել հակապետութեանց մէջ:

Կայսրութիւնը ունեցեր է երկու գլխաւոր շրջան, — նուաճողական արշաւանքներու և աշխարհակալութեան շրջանը. ապա՝ պաշտպանողական, յարձակումներու գէմ պաշտպանուելու կամ նահանջի շրջանը: Երկու շրջանին մէջ ալ, մինչև Սուլթան Մահմուտ Բ. Օսմանեան կայսրութիւնը ունեցեր էր այդ հաւքատքները, բազմաթիւ տարրերէ բաղկացած ապազգային — մահմտական բանակը:

Բայց կարելի է ըսել որ կայսրութեան սկզբնական շրջանի բանակին կազմը յետագայ շրջաններու կազմին բոլորովին նմանը չէր: Վերջինները կը կազմէին Եէնիչերիները՝ որոնք Սուլթան Օրխանի և Մուրատ-Խիւտա-վէնտիկարի ժամանակներուն հաստատուած, արդէն

կայսրութեան փառքի գաղաթնակէտին հասած չրջաններուն, և թէ՛ անկման չրջաններուն մէջ՝ առանձինն առաձնաշնորհեալ փարսա կը ձևացնեն:


Եկնիշէրիներու կազմը կը տարբերէր և անո՞վ որ և առանձնապէս խնամք կը տարուէր հաւաքելու քրիստոնեայ մանուկներ և սրտասնիներ, մահմաականացրնելով զանոնք ու Եկնիշէրի Օճաղիին կը յանձնուէին և ասոնցմով կը կազմուէր բանակը:

Ահա այս կերպով կազմուած ու հաստատուած պետութեան ստացած ծաւար և հասած փառքի գաղաթնակէտն է որ աչքի առաջ ունենալով, անոր անկման պրաձառները թուելով ու խարազանելով հանդերձ թուրք քննողատար չի տատանիր մոլեռանդ հաւատարով մը բնելու թէ— «Օսմանեան իշխանութիւնը հիմնուած է իրրև զինուորական իշխանութիւն մը, և զարգացած ու անկման է ևնթարկուած իրրև այդպիսին: Վստահ բլլանք որ վերստին զինուորականութեամբ նոր կեանք պիտի ստանայ ու առաջադիմէ ան»: (Երևս 2):

Զինուորականութեան երիտասարդ հաւատացեալը իր հաւատքին իրը սպասցոյց և կենդանի օրինակ՝ ի միջի այլոց կը բերէ Բրուսիան: — «Ֆրանսայի մեծ յարձակո մներէն յետոյ Բրուսիա շատ լաւ հասկցաւ թէ իր թերութիւնները զինուորականութեան մէջ կը գտնուին. Ֆրանսայի բանի բնդունել առած պայմաններէն զտրու Գերմանիա իր ամբողջ ուժը զինուորական կազմակերպութեան ու վերակազմութեան նուիրեց:» (Երևս 62):

Բայց իմ քննողատութեանս զլիաւոր առարկան երիտասարդ հայրենասէրին այս հաւատքը չպիտի բլլայ, որովհետև ինծի կ'երևի թէ անոր այս և այլ նման ազգեր որքան ալ աշխարհակալական անցեալ փառքերու կորստեան կսկիծին և այդ կորուստները վերստանալու

A 13893



ցանկութեան հետեւանք ըլլան, բայց և այնպէս անոր մէջ մտեր է արդէն միլիթարիզմի սարսափները. և ինքն է դարձեալ որ միլիթարիզմին դէմ ամենաուժգին կերպով կը խօսի, բացառանչելով, — «... Նախկին թուրք աշխարհակալները բոլորն ալ զինուորական պետութիւն կը հիմնէին: Աթիլլայի, ձինկիզ Խանի և Թիմուր Լէնկի պետութիւնները այս կարգէն էին: Այս երեք թուրք աշխարհակալները աշխարհի էն մեծ կայսրութիւնները հիմնեցին. արդեօք այս մեծ պետութիւնները ապրեցան» (երես 39): «Ժամանակին Աղեքսանդր Մեծն ալ Մակեդոնեացէն մինչև Հնդկաստան զնաց. բայց ինչ եղաւ անոր պետութիւնն ալ» (երես 40):

Թէև ուրիշ տեղ մը՝ ճէլայ Նուրի պէյ վերստին գովքը կ'ընէ զինուորա թեան և զինուորականութեան՝ որ Թուրքին ժառանգական անանձնայտակութիւնն է եղեր և միշտ իր բաղզն է շիներ՝ շնորհիւ այդ յատկութեան, իբր ապացոյց կը յիշէ. — «Պամանցիները միայն իրենց նուաճման շրջանէն ի վեր չէ՛ որ զինուոր են: Բացի Խանի տոհմին Սուլէյման շահին հպատակող մասէն՝ արդէն սաղմիկ, կարիճ, սրիտափրա, ասկեր օղլի ասկեր ազգի մը կը պատկանէր: Թուրքերը հնուց ի վեր պատերազմը իրենց համար միակ զբաղումն են համարեր և անոնք Ասիան մէկ ծայրէն միւսը շատ անգամներ տիրեր ու նուաճեր են: Աշխարհի էն մեծ կայսրութիւնը — ինչպէս բոլորին յայտնի է — Ասիոյ մէջ Թուրքերը հիմնեցին» (երես 56):

Աս արդէն զգացումի և դատողութեան մէջ տեղի ունեցող կսխալ է:

Երխասարդ հրապարակագիրը չի մաներ այն հարցերուն մէջ՝ թէ ինչո՞ւ Թուրքերը պատերազմիկ ցեղ են եղեր: Կը մտնայ մինչև իսկ իր բրած հարցումին պա-

աասխանք՝ թէ ինչո՞ւ նախկին թուրք կայսրութեանց հետքն անգամ չէ մնացած: Այս հակասութեանց մէջ ահամայ կ'իյնայ Ճէլայ նուրի պէյ, որովհետեւ այդ անհետացած կայսրութեանց յիշատակներով է որ կը կարծէ ողևորել այն բազմարիւն սարրք՝ որ թուրք կը համարէ ինք: Իր զգացումները չեն ներեր ընդունելու՝ որ սրտեստականօրէն ազգութիւն չի՝ ստեղծուիր և գուցէ չի նշմարեր որ մասմնտական պետութեան անկման էն զլխաւոր պատճառներէն մէկն այ՝ մասմնտական բանակէն աւաջ եկած խառնուրդի բազմարիւնութիւնն է: Ասելի ճիշդ կ'ըլլայ գուցէ ըսել՝ թէ նըշմարելով հանդերձ յաճախ աննշմար կը թողու:

Այնու ամենայնիւ, հեղինակին դատողութիւնը աւելի զերիշխող կը հանդիսանայ, ուստի ան կը քննադատէ ու կը դատադատէ զինուորականութիւնը, միշիրարիլը, ներկայացնելով զինուորականութեան բոլոր վատթար պատկերները:

— Աւարը անվերջ չէ . . . :

«Ահա Հումի գինուորները՝ որ նախ օտարները, և ապա Ասիայ ու Ախրիկէի ազգերը կողոպտելով և կրճափելով մերկացնելէ յետոյ Հումն այ կողոպտել սկսան» (երես 34):

«Աւարը վերջապէս կը հասնի, շրջակայ ազգերը զգաստութեան շրջանի մէջ կը մտնեն: Սկիզբը, յաղթութեան ողևորութիւններով կուրի դաշտ նետող գինուորը այլևս կը ծուլանայ, կը յոգնի, կը ձերանայ և պետութիւնն ալ անկումի անդունդը կ'իյնայ» (երես 41):

«Իշխանութիւնը միայն գինուորութենէ չէ՝ բողկացած վարչական ճիւղն ալ ունի: Ներքին, ֆինանսական և անտեսական խնդիրներուն այնքան ալ կարևորութիւն չընծայող, զանանք իրենց սրտին մօտ չզգա-

ցող ընկերութիւնները վերջապէս քայքայման կ'ենթարկուին» (երես 32) :

Այսպէս, հեղինակը թուելէ ետք Հոսմէական և Օսմանեան կայսրութեանց օրինակներով գինուորութեան շարիքները և եէնիչէրիութեան գործած անկարգութիւնները, զեղծումները, ըմբոստութիւններն ու աղէտները՝ կ'անցնի կայսրութեան անկման այլ պատճառներուն :

Ըստ հեղինակին, այդ պատճառներու շարքին կը պատկանին .

1. — Սանձարձակ իշխանութիւն՝ հետեւանք գինուորականութեան :

2. — Անաշխատութիւն, անարդիւնարերութիւն՝ հետեւանք գինուորականութեան :

3. — Թուրք աշխատաւորութեան անտեսական ու ֆիզիքական անկուճը՝ հետեւանք գինուորականութեան և օւստականութեան :

4. — Թանգիմաթի, սահմանադրականութեան վիժում, օրէնքներու անբաւարարութիւն և անգործարութիւն՝ հետեւանք միմիայն Եւրոպական ընդօրինակութեան սխտեմին, երկրի պայմաններէն ու ազգային բարքերէն ու ընդունակութիւններէն բղխած չ'ըլլալուն :

5. — Ասեւտրական, ճարտարուեստական և երկրագործական ասպարէզներուն մէջ յետամնացութիւն՝ հետեւանք համատատասխան օրէնքներու չգոյութեան :

Դիտելի է որ այս ամէնը հեղինակին կողմէ կը քննադատուին միայն թուրքի՝ և ս'չ թէ Օսմանցիի հայեցակէտով, այլ և միմիայն թուրքի համար: Օսմանցիութիւնը հեղինակին համար՝ ինչպէս և բոլոր Երեսասարգ թուրքերուն կամ անոնց գարոցին համար, համաձայն է թուրքի: Կարելի է ըսել որ մահմետական այլ

ցեղերն ալ կը մնան օսմանցիութեան իմաստէն դուրս :

Յ.— Եւ վերջապէս, անկման պատճառներէն գուցէ զերագոյնը հեղինակը կը գտնէ ներքին աններդաշնակութիւնը, թուրք տարրի զանազան ցեղերէ ու ազգերէ կրած ազդեցութիւնները, փոխանակ արիչները ձուլելու վասնզիս ենթարկուիլը :

Եւ հեղինակին, ինչպէս զանազան նիւսնանկերով այլ «Երիտասարդ Թուրքերուն» կամ անոնց զգրոցին իտէպն է ձուլումը :

IV

Արդէն բաւական ամփոփ զազատար մը առինք հեղինակին կողմէ անկման պատճառներ նկատուածներու մասին :

Այդ պատճառներուն վրայ հեղինակին դարձուցած ոչազբութեան և քննադատական ոգիին մէջ է որ մեծ մասամբ անոր անկախ միտքը կ'արտայայտուի :

Պատճառներու մասին ալ մենք վերտօին կը դիմենք հեղինակին վկայութեանց :

ա) «Ամբողջ ու մն ու իշխանութիւնը, վարչութեան զեկը՝ զինուորին ձեռքն յանձնելը Հասի, Ռասաստանի և մեր մէջ վատթարագոյն հետևանքներ առաւ » : (Երես 38) :

«Նոյնպէս պետութեան զեկը մէկ զինուորական հրամանատարի յանձնուիլը և կամ անոր կողմէն գրաւուիլը՝ Նարոզէոն Պոնտփարթի մը կրեւան զալուն պատճառ կ'ըլլայ, և անիկա ազգի մը համար միշտ դժբազդութիւնն է » : (Երես 39) :

«Կրկնակի կ'ըսենք որ օսմանեան պետութիւնը հիմնուեցաւ իբրև զինուորական իշխանութիւն մը : Զին-

ուորական իշխանութեան մը գոյութիւնն ու անուկանութիւնը ամէն բանէ աւելի հնազանդութեան կը կարօտի: Առաջին օսմանեան ընկերութեան մէջ ալ հնազանդութիւնը ծայր աստիճան էր: Վեհապետը կարծես հրամանատար մըն էր և հասարակութեան անդամներն ալ անոր իւրաքանչիւր հրամանին հնազանդ գինուորներ: Այն ժամանակ թագաւորը միայն ընդհանուրին ուժէն բարձր գլուխ մը չէր, այլ նաև պարզապէս անհասներու ինչքին ու կեանքին տէր, զոնէ անոնց իւրաւատէրը *فردوس* կը ներկայանար: Հետեւաբար, անհասական և ընդհանուր իրաւանց մէջ շատ տարբերութիւն չկար...»:

«Զինուորական իշխանութիւն մը, և հետեւաբար միապետութիւնը՝ միայն բռնապետ կրնայ ըլլալ:

«... Առաջին օսմանցիներն ալ այս գինուորական բարքերով մեծցած և այդ կերպով վարժուած էին: Այդ պատճառով ալ Սուլթաններու իշխանութիւնը չափ ու սահմանէն դուրս էր: Մեծ վէճերներու գլուխները կրտսերի տուող, բոլոր օրէնքներու հակառակ՝ կամայականութեամբ վարուող մեր թագաւորներու թիւը մէկ հաս չէ: Մեր կայսրերու է՛ն վեհապանծներն անգամ Եալուզ Սուլթան Սէլիմները ու Սուլթան Մէհմէմէտ յաղթողներն ալ այդպիսի վարմունք են ունեցեր»:

«... Անհասին մօտ ազատութեան ընդունակութիւնը ջնջուած էր: Ազիզ, շիտակ անուղ միապետական ու կամայական վարչութիւնը՝ սպառեր, ընդարձացուցեր էր ժողովուրդին քով գտնուած հարկաւոր վարչական ընդունակութիւնները...» (Երես 77):

«Բռնապետութեան անբաժան և բնական հետեւանքն է զուլումն ու հարստահարութիւնը, վերջապէս անվարչականութիւնը: Եւ եթէ այդ անվարչականու-

թիւնը դարերով տեսէ, երկիրը բոլորովին կը կորսնցնէ իր կենսականութիւնը, ինչպէս մեր մէջ այդպէս է եղեր» : (Երես 78) :

«Դժբաղդարար մեր երկրին մէջ վարչական ընդունակութիւն չի տեսնուիր : Թէև Օրխանի ու Մուրաա Խիւսաովէնտիկարի ժամանակները վարչական կարեւոր հիմեր գրուեցան, բայց այդ անընդունակութիւնը արդեւք է եղած գրուած հիմերը պահպանելու : Այո՛, աշխարհավարութեան մէջ մեր անկարողութիւնը անկասկած է : Կարող եմ բնել որ Արեւելեան Հարցը իր ամբողջ իմաստովը՝ աշխարհավարական, կամ տեղի հիշարը, անվարչադիտութեան հարց է» : (Երես 79) :

Բ. — «... Ինչպէս քանիցս կրկնեցինք, Միջին Ասիայէն Հռոմէական երկիրն եկող թուրք յաղթականները առեւտուրի ու արհեստի, աշխատանքի ու արդիւնազորութեան մէջ առաջը լիմնու համար Արեւելք չէին եկած : Հարստակ ազգերը կ'աշխատէին ու տիրողը կ'ուտէր : ... Տեսնական տարրական օրէնքներն անգամ մասձող ղեկավարները (չէ՛) չէին կրնար գրադեցնել : Ընչա է որ այս գրութիւնը ռազմիկներն ու յաղթողները բարեկեցութեան և ճիւղութեան մէջ կը պահէր, բայց յախտեան չէր կրնար տեսել : Հէնց որ տիրապետութեանց վերջ արուեցաւ՝ տնտեսական պայմաններուն անուշադիր վերաբերման վատ հետեւանքները հասկցուեցան : սակայն, բանը բանէն անցեր էր : Թուրք ազգը մտցաւ աշխատիլը, նուաձող մարտիկութեանն ալ մօտան վաղուց անցեր էր» (Երես 86) :

«Երկրի մէջ քափիթալիսաներու և նախաձեռնութիւն ունեցողներու բացակայութեան հանգէպ՝ եւրոպացի քափիթալի ու կարողութեան տէրերը մշտապէս մեզ՝ մանաւանդ ազգաւ ժողովուրդը կը գերեն» (Երես 88) :

Գ. — «Օսմանն Ղազիի պետութիւնը հիմնուած օրէն
ի վեր նիւթական ու անտեսական մեր սխալներուն մէջ
շարունակեր ենք մնալ : Մեր մէջ ամէնէն ուելի անար-
գանքի ենթարկուած գիտութիւնը անկասկած անտե-
սագիտութիւնն է : Ո՛չ արդիւնարեւութեան ենք հետե-
ւած և ո՛չ ալ ծախսելու մէջ անտեսագիտական օրէնք-
ներուն ենթարկուած :

« . . . Այս վիճակէն օգտուալները ազգեցիկներն
(միւթէզալիպէ) են : Հետեւ փայրերու մէջ առանց զրա-
մի, անաէր և անճարակ մնացած երկրագործները՝ վաշ-
խառուներու, ազգեցիկներու և ազաներու սղորմած
թեւարկութենէն զուրս՝ ապրելու ուրիշ սրասստարան
չեն գտած : Անոնք ալ բնականաբար քիչ ժամանակի
մէջ ձեռք են դրեր գիւղացիներու սեփականութեանց
վրայ, զանոնք իջեցուցած են իրենց իսկ սեփականու-
թեանց վրայ՝ հիւրի ու գերիի տախիճանին : 1912ին
Թուրքիոյ մէկ քանի մասերը միջնադարեան շրջանի
մէջ կը գտնուէին տակաւին» (Երես 91) :

« . . . Թուրք չեղող օսմանցի տարրերը շարունակե-
ցին աշխատիլ, և շատ տեղեր վաճառականութիւնն ու
արուեստները անոնց մենաշնորհ մնացին . . . » (Երես 87) :

«Առաջները գրական, յետոյ բացասական կեր-
պով⁽¹⁾, բայց միշտ ու շարունակաբար օսմանցի Թուր-
քերը սրասերազմելու ստարաստ վիճակի մէջ կը զըտ-
նուէին Վերջին ժամանակները՝ ներքին խռովութիւններն
ալ շատցան : Թէ՛ զանազան ցեղերու գարթնումի և թէ՛
Լարսագայիներու, մանտանց Ռուսներու զրդումով՝

(1) Այս պարբերութիւնը պէտք է հասկնալ հաւանականաբար
այն մտքով որ պատերազմները կը մղուէին նախ յարձակողական,
աշխարհակալութեան համար, և ապա, անկման շրջանին, յարձա-
կուսներու գէժ պաշտպանելու համար :

ապստամբութիւնները բազմաշան . տարի չեղաւ որ առանց ապստամբութեան անցնէր :

«Այս խռովութեանց պատճառով ալ միշտ զինուորի անհրաժեշտութիւնը ակներեւ էր :

«Անա այս ներքին ազդեցութեանց հետեւանքով՝ թուրք ցեղը հետզհետէ յողնեցաւ . ուժասպառ եղաւ : Զինուորութեան գոյջողը , պատերազմներու և սպարաւորութեանց մէջ մեանողը ու վիրասորուզը թուրքերն էին : Այս պատճառով ալ թուրքին արտերը չէին մշակուեր , կ'ամայնային : Անատոլի մէկ զիւղէն ուստիան պատերազմին կամ Եէմէնի անսպասաները մեկնող Մեհմեմէտ Խան զերազարծին՝ իր արախն տեղ մացառնոց մը դանէր : Ասոր հակառակ , միւս ցեղերը ո՛չ պատերազմի կ'երթային , ո՛չ ալ պատերազմի ու սպարաւորութեանց մէջ իրենց անձը կը զոհէին : Այս անհասար մրցումին մէջ թուրքերը շատ բան կորսընցուցին , նուազեցան , սպառուեցան» (Երես 27) :

Եւ հեղինակը բաղդաւոր քայլ կը համարէ Սահմանադրութեան վերահաստատութենէն յետոյ ո՛չ-մահմանականներու ևս զինուորացրութիւնը , որովհետեւ , ըստ իրեն , չնորհիւ այդ սխաւեմին «զանէ թուրք ցեղն ալ թուրքիոյ մէջ միւս ցեղերուն հետ հասարակեան () վրայ դրուելով՝ մէկ քանի տարի յետոյ մահմանական և ո՛չ-մահմանական , մանաւանդ մահմանական զիւղերու միջև՝ բարդութեամբ ու բարեկեցութեան , հանգստութեան և անդորրութեան այնքան ալ տարբերութիւն չի՛ մնար . . . » (Երես 59) :

Երրորդ հիմնապատճառի վերլուծման մէջ յարգելի հեղինակը կ'ենթարկուի հակասութեանց , չի կրնար սրամարանական հետեւողականութեան և նախապաշարումէ անկախ միտք պահպանել . և ո՛չ միայն թուրքն

ու մահմետականութիւնը կամ այլ մահմետական տարրերու նկատմամբ ուրիշ ոչ չնայող և ոչ չհարգող հարգանքներէ որ այս երկրին մէջ չնորհի ոչ-մահմետականներու զինուորադրութենէ զերծ ըլլալուն, թուրք և սահասարակ մահմետական զիւղացիներու ու ս'չ-մահմետական զիւղացիներու միջև նիւթական բարգաւաճման մեծ տարբերութիւն է առաջ եկեր. ս'չ-մահմետականը բարգաւաճեր, երջանկացեր է, իսկ մահմետականը թշուառացեր :

Այսքան ակներբե անհետեւողականութիւն, իրականութեան այսքան ակներբե միտմիտ շրջում՝ անուազն սպասելի չէր ձէլալ նուրի պէյէն :

Յարգելի նեղինակը կը մտնայ որ մէկ քանի տող, մէկ քանի էջ առաջ և յետոյ ինքն է հաստատողը թէ՛

Այս երկրին անկման ու բոլոր դժբաղատութեանց մայր պատճառը՝ թուրքերու անխաբար զաւարտութիւնն է եղեր .

Թէ թուրք և մահմետական տարրերը՝ իրրե տիրող, կորսնցուցեր են աշխատանքի բնագոնակութիւնը՝ «ոչ-մահմետականը կ'աշխատէր և մահմետականը կ'ուտէր միայն .»

Թէ աւար, կողոպուտ, դանիմէթ՝ մահմետական տիրապետողներու, ինչպէս Հոսմայեցիներու սովորական բարքն էր դարձեր :

Արդ, այսպիսի պայմաններու մէջ անհուտարութեան նժարի ծանրութիւնը ս'ր կողմը կը մնայ, — տիրողին թէ տիրապետողին, կողոպտողին թէ կողոպտողին : Կարելի է այսքան անհիթեթ ենթադրութիւն :

Հասանականարար ձէլալ նուրի պէյ պիտի պատասխանէ թէ այդ ամէնը վերագրելի են իշխանութեան պատկանող տարրերուն . թէ մահմետական զիւղացին՝

ինքն ալ ճնշուածներէն ըլլալով հանդերձ, զինուորութիւնը զինք կը զնէր ստորաստիճանի և անհաւասար վիճակի մէջ՝ հանդէպ ո՛չ-մահմետական զիւղացիին։

Այս դատողութիւնը կէս ճշմարտութիւն միայն կը շօշափէ։ Նախ՝ բոլոր մահմետականներն ալ չէին զինուորագրուէր, ինչպէս օրինակ՝ Քիւրաք, Աւնաուաք՝ որոնք մինչև մեր օրերն ալ ամբողջովին չեն նուաճուած, ընդհանուր օրէնքներուն չեն ենթարկուած և կիսանկախ վիճակի մէջ են. երկրորդ՝ ո՛չ-մահմետականներէն զինուոր չառնուիլը ո՛չ թէ անոնց օգտին է եղեր, այլ ի մեաս անոնց, ՚էնց այդ իսկ պարագան կեալուրիև ու միւսյիւկիև անհաւասարութեան, կեալուրին կեանքը, ինչքն ու պատիւը խաւամին գութէն, խղճէն, կամքէն ու կամայականութենէն կախուած է մնացեր, և ասոր կենդանի ապացոյցն ա՛յն է եղեր որ կեալուրը իր բնիկ հայրենիքին մէջ հայրենիքի դասկ չէ՛ ընդունուեր, և մանաւանդ զինուոր ըլլալու իրաւունքը չունենալով՝ զէնք կրելու իրաւունքէն ալ զրկուեր է, և զէնք կրելու իրաւունքէն զրկուելով՝ ինքնապաշտպանութիւնը անոր համար յանցանք, սճիր է համարուեր. երրորդ՝ թէև ճիշտ է որ թուրք համարուած կամ սահասարակ խլամ զիւղացիութիւնն ալ ճնշուած է եղեր, բայց այս ճնշումն ալ յարսբերական ու ստատիճանական է։ Եթէ թուրք զիւղացին կը ճընշուէր և կը ճնշուի իրրև զիւղացի և իրրև աշխատուոր՝ աւտականէն, միւթէղայիպէն և կառավարական պաշտօնէութենէն, ինքն ալ, սակայն, իր կարգին՝ իրրև թուրք կամ մահմետական, իրրև տիրող կը ճնշէ անազաք, անիրաւտէրը, կեալուրը։ Մէկը կը ճնշուի իրրև դասակարգ, միւսը կը հարստահարուի, կը կեղեքուի մարդկային ամենատարրական իրաւունք-

ներէն կը գրկուի՝ իրրև ցեղ, իրրև անհաւատ և իրրև
դասակարգ :

Ճէլալ Նուրի պէյ հեռեւողական ու արդար պիտի
ըլլար՝ եթէ իր քննադատական ուղղութիւնը այս պա-
րագային ալ առաջ մղէր, իրականութիւնը չյեղաշրջէր,
և մանաւանդ եթէ իր իսկ աշխարհովը չէ տեսած՝ դոնէ՞
գարերու կնիքը կրող և սարքական դատողութեամբ ալ
անփիճելի եղող այս դաճնակակիժ վիճակը պատկերա-
ցընէր ու իսկական համեմատութիւնը ցայտեցնէր՝
ըսելով :

— Մինչ թուրքը կամ Մաճմեսականը եթէ գինու ու-
րական ծառայութեան կամ պատերազմի դաշտ կ'եր-
թար, յամենայն դէպս սուներ սուանց էրիկ մարդու
չէր մնար, վարող ու ցանող կը գանուէր : կամ եթէ
էրիկ մարդ ալ չէր մնար սուներ՝ կինը կամ կիկները կը
փոխարինէին զայն, մաճմեսականը՝ կրօնի թոյլտու-
ութեամբ ամէն տեղ ուր որ կ'երթար՝ կին տանելու,
ընտանիք կազմելու դիւրութիւնն ու հնարաւորութիւ-
նը ունէր, և եթէ ծայրայեղ պայագային՝ ո՛չ սրաը
վարող ըլլար և ո՛չ ալ կարող ըլլար գանուած վայրին
մէջ նոր ընտանիք մը կազմել, դոնէ իր սեփականու-
թիւնը սեփականութիւն կը մնար և անվարուցանու-
թիւնը կ'արդարանար աշխատող ձեռք չգանուելով :
Բայց ի՞նչ ընէր Քրիստոնեան՝ որ թէև գինուորական
ծառայութեան չէր երթար, թէև պատերազմի դաշտ
չէր մէկնէր, թէև կը վարէր ու կը ցանէր սրաը, սու-
կայն իր սեփականութեան և իր աշխատանքին տէրը
չէր, ինչպէս չէր ու չէ, իր կեանքին ու պատուին ալ
տէրը : իր աշխատանքը միշտ կը վայելէր իսլամը, ա-
ղան, պէկը, հարկահանը, ելն : և անիկա կը սպառուէր,
ու անոր կեանքը դժօխային տառապանքն էր :

V.

Արդէն ցոյց տուի ընդդէմ Նուրի պէյի պատմական-վերլուծական ուղիղ դատադատութիւններէ զերժ այն մասը, ուր շրջելով իրականութիւնը՝ շրջեր էր անհաւասարութեան ծանրութիւնը մահմետական զիւղացիութեան կողմը և ներկայացուցեր էր թուրք կամ մահմետական զիւղացիութիւնը աննպաստ պայմաններու մէջ դրուած՝ գոյութեան կուտի տապաքէզին վրայ:

Հեղինակը միեւնոյն տեսութեան կից կատարեր է այլ շեղում մըն ալ ներքին խռովութեանց, աւելի պարզը՝ տպատամբութեանց վերաբերմամբ, վերազրելով քրիստոնէայ ցեղերու տպատամբութիւնները Եւրոպական Պետութեանց և մանաւանդ Ռուսաստանի դրդման հետեանք:

Հեղինակին տկնարկած խռովութիւնները կամ ապրտամբութիւնները՝ թէև յակնադէմ անուանէ չէ՛ յիշատակած, բայց հասկանալի է որ Յունական, Ռուսական, Աերպիական, Աեյնոնական և Պուլկարական տպատամբութեանց է տկնարկը, որոնց մէջ կարելի չէ հերքել և՛ օտարի, մանաւանդ Ռուսաստանի ալ երբեմնի քաջապետութիւնն ու պաշտպանութիւնը:

Բայց արդեօք օտարի՞ դրդումն է կղեր միաբան պատճառը այդ խռովութեանց ու տպատամբութեանց: Եթէ րոպէ մը այդպէս ընդունելինք, ստիպուած պիտի ըլլայինք հերքել հեղինակին մէկ ուրիշ չափազանց ուղիղ դատադատութիւնը: Ինչպէս տեսանք, ան այս երկրի բոլոր դժբաղդութեանց պատճառը կը համարէ անվարչադիտութիւնը. բացարձակ համոզումն ունի թէ «Արեւելեան Հարց ըսելով՝ պէտք է հասկնայ խարհսիղ ըլլալու հարցը»:

Աւ կ'աւելցնէ, — «Եթէ Ռուսաստանը և անոր հետեւողութեամբ Արեւելեան Հարցի գլխաւոր գերակատարները՝ միւս աւերութիւնները՝ գտած չ'ըլլային օսմանեան կայսրութիւնը այսպիսի անկարգ դրութեան մէջ, չէին կրնար զրգել զանազան տարրերը»:

«Մեր գլխուն եկածները բոլորն ալ այս անվարչագիտութենէն է, վարչական ապիկարութենէ ու զեղծումներէ առաջ եկած են անոնք: Եթէ զանազան տարրեր վերջին ժամանակներս անկախ կառավարութիւններ հիմնել յաջողեցան՝ այս վարչական զեղծումներուն շնորհիւն է...» (Երես 79):

Հետեւաբար, հեղինակին կողմէ բացարձակ հակասութիւն, աններելի սխալ է ենթադրել որ խռովութեանց և ապստամբութեանց զիմազրաւելու համար մշտապէս զինուորութեան կարօտութիւնը անխուսափելի անհրաժեշտութիւն էր:

Սխալ է հետեցնել և բսել թէ՛ Արեւելեան ինքիւրը հէնց որ բացուեցաւ՝ պատերազմի պատրաստ գանուելու զրութիւնը շարունակուեցաւ, որուն նպատակակէտն էր ինքնապաշտպանութիւնը (Երես 56):

Փոխանակ բանակներու և պատերազմներու ետեւ իյնալու, փոխանակ պատերազմներով պաշտպանուելու՝ վարչական բարեկարգութիւն և արդարութիւն գործ դնելով՝ ժողովուրդներուն զանգառներուն և աւերութեանց միջամտութեան պատճառները պէտք էր քննել: Այդպէս չվարուիլ կը նշանակէ յամառութեամբ մնալ զեղծումի, կեղեքումի, հպատակ ազգեր ճնշելու աշխարհավարութեան մէջ, իսկ այսպիսի ինքնասպան յամառութիւնը անհրաժեշտութիւն չէ. հետեւաբար դատապարտելի զրութիւն մը շարունակելու համար՝ նախամեծար համարուած պատերազմները ո՛չ թէ ինքնա-

պաշտպանութեան անհրաժեշտութիւններ էին, այլ դա-
տապարտելի ոճիրներ. որոնք մեր օրերուն ալ կրկնուե-
ցան ու կը կրկնուին:

Հայրենասէր անկախ միտքը պէտք է այս ճշմար-
տութիւնը խոստովանի:

Թանգիմաթի և սահմանադրութեան վիժման և
օրէնքներու անգործադրելի մնալուն վերաբերմամբ՝ հե-
ղինակին տեսութիւնները աւելի անկախ ու ազատ են:

«Եթէ օրէնք մը բաղձացուած չափով չի գործադ-
րուիր և եթէ անոր գործադրութենէն մեծ արդիւնք
մը չի տեսնուիր, կամ այն է որ օրէնքը ժամանակի
պահանջներուն, ազգի կարօտութեանց անհամապատաս-
խան է, և կամ գործադրելու պաշտօն ունեցողները
անկարող են»:

«...Միւթէֆիքի աշխրեք ժողովուրդն ու Եգէա-
կան ծովի կղզիներուն ժողովուրդը, և այս ժողովուրդ-
ներուն միջև Եզսած ահակի տարրերութիւնը ոչադ-
րութեամբ դիտեցէք, և ապա լաւ քննեցէք թէ՛ թան-
գիմաթի ֆէրմաններուն և թէ՛ սահմանադրութեան կողմէ
նոյն ժողովուրդները միեւնոյն հասարակաստիճանի վրայ
նկատուիր, այն ատեն իսկոյն և եթ կը հասկնաք թէ
ինչո՞ւ այդ օրէնքները չգործադրուեցան»: (Երես 45-46):

«Կիւրճանէի թաթիլը Հիւմայիւնը մեծ հանդիսաւո-
րութեամբ կարդացուած ժամանակ՝ ո՛չ թէ հասարա-
կութիւնը, այլ աւազանին անգամ անկէ բան չէր հաս-
կընար: ՅՅի Սահմանադրութիւնը հրատարակուած ժա-
մանակ՝ Օսմանցիները այդ օրէնքը ուրիշ օրէնքներէ,
օրինակ, որսորդութեան ու ձկնորսութեան օրէնքնե-
րէն շատ ալ տարրեր չեն նկատած»: (Երես 46):

«Սուլթան Սէլիմ Գ-ի ժամանակէն ի վեր Եկող պե-
տական մարդիկ՝ եթէ մեր մէջ կրթական ծրագիր մը

մշակէին ու գործադրէին՝ սասրակոյս չկոյ որ 25-30
սասրուան մէջ բնդհանուր դարձնուձ առաջ կուգար,
անոր կը յաջորդէր անանասական յառաջդիմութիւն, և
Ասհմանադրութիւնը ինքնիրեն կը գոչանար:

«Բայց մեր մէջ այս պարագան մտցուեցաւ: Տըն-
տեսական օրէնքներով՝ ազգը հասունցնելու կարգ ու
կազմակերպութիւններով զրոգոզ չեղաւ, որով՝ Թան-
գիմութն ու Ասհմանադրութիւնը պէտք եղած չափով
արդիւնաւէտ չդարձան:

«Նոյն պետական մարդիկը չկրցան քննել ու խմ-
նայ՝ թէ վերջին դարերուն հարստացած երկիրներու
մէջ արտադրուած ազգային հարստութիւնները մեր մէջ
այ ինչպէս կարելի է ստեղծել Պուլիտրիս, Զուճաս-
տան և Սերպիս յառաջդիմեցին, Պոսնիան առաջ ան-
ցաւ, Անգլիական գրուման նեթարկուած եզրագտ-
տի մէջ՝ մերանապի և Անգլիայի վարիչներ մուտք
դասած բլլայնուն շնորհի՛ս՝ յառաջդիմութիւն գոչու-
ցաւ, Հարաւային Ամերիկան յառասուն-չիսուն սա-
րի առաջ ոչինչ բլլայով հանդերձ՝ այսօր իր յառաջ-
դիմութիւնն ու հարստութիւնը նախանձ շարժելու աս-
տիճանին են հասած: Քանաասան, Քէլչիր, Թրանսպար
և Աւստրալիան քսան սասրուան մէջ խելք միտք գար-
մաղնոզ բարգաւաճուձ ցոյց տուին, իսկ Ճարնն աշ-
խարհը գարմացուց: Այս բոլոր կատարելագործմանց
առաջ գալը հարկաւ շարք մը կարգ ու կանոններու
գործադրութեան կը կարօտի: Արօնք են ասանք: Ին-
չո՛ւ մեր մէջ յառաջդիմութիւնը դժուարութիւններով
և հազար տառապանքներով առաջ կուգայ...»:

«Ասոր գաղանիքը դուշակելու համար մեծ կարո-
գութեան հարկ չկայ: Այն երկիրներուն մէջ ընկերա-
յին ու անանասական յառաջդիմութեան պատճառ եղող

բոլոր օրէնքները՝ հաստատուած, և յարատև հաստատակամութեամբ, բարեխիղճ ու լուրջ ջանքերով զօրծ դրուած են: Թուրքիոյ մէջ ո՛չ միայն այդպիսի նոր կարգեր չեն հաստատուիր, այլ և որքան սահմանափակող սուանդութիւններ որ կան, առևտրական ազատութեան և անտեսական ազատութեան հակառակ որքան կարող ու կանոններ և սովորութիւններ որ ունինք, բարոն ալ կատարեալ մոլեռանդութեամբ, ծայրայեղ արդիատութեան յաւակնութիւններով պահպանելու և պաշտպանելու են նուիրուած մեր ամբողջ ուժերը...» (Երևս 48):

Այս հարցին մէջ ևս յարգելի քննադատար ամբողջ ճշմարտութիւնները չէ՛ որ կ'արտայայտէ: Թէև ճշմարտութիւնն ամբողջացնելու համար դիտողութիւնն ու դատարարները չեն որ կը պակասին իրեն:

«Ընկերային յեղափոխութիւն չեղած, ընկերային յեղափոխութիւնը պատրաստելու համար անտեսական ու կրթական յառաջդիմութիւն չդոյսացած՝ քաղաքական յեղափոխութիւն կատարելը՝ կը նմանի պատրանքով սփոփանք դանելուն: Այդ պատճառով ալ մենք մեզի իրաւունք կը համարենք Յուլիսեան Յեղափոխութիւնը բնորոշել ու անուանել յեղափոխութիւն մը ըլլալէ աւելի՝ իբրև պետական հարուած»: (Երևս 49):

Ճէլալ Նուրի պէշի մէջ բոլէ մը կը շողայ արմատական, յեղափոխական ոգին և Ֆրանսական Յեղափոխութեան օրինակով՝ ան կը փորձէ ցոյց տալ թէ ի՞նչպէս կը սկսի մեր երկրին վերանորոգումը:

«Ֆրանսական Յեղափոխութեան ժամանակ, մեր ընկերվարական ընկերները այս մասին ինչ կ'ուզեն թող ըսեն, առաջուց պատրաստուած հասարակական ընդհանուր կարծիք կար: Մայրայեղ անօթութեան հասած

միլիոնաւոր ժողովուրդը՝ տիրող կրօնին, քաղաքական և վարչական գրութեան ու սիստեմին հակառակ գաղափարներ ունէր: Արիւնահեղ քաղաքային սպաներազմ սկսաւ. Վեհապետ, ազնուականութիւն, կառավարական ձեւ, հոգեւորականութիւն, կրօն, մինչև իսկ հաւատքը, ամեն բան տակն ու վրայ դարձուեցաւ: Թագաւորի տեղ բնարոպինախազաններ անցած, ազնուականութիւնը ջնջուեցաւ և միապետութիւնը ռամկալար հանրապետութեան փոխարկուեցաւ...» (Երես 49):

«Ճիշտ է որ մեր մէջ ալ Յուլիսի (?) դէպքերէն յետոյ Ապոխւլ Համիա Բ՝ զանճնկէց եղաւ, բայց Ալ Օսմանի տան վեհապետութիւնը անգրգուելի բնդունուեցաւ, Խալիֆայութիւնը նախադործուեցաւ, Օսմանեան կայսրութեան հիմերը չխաթարեցան, մահմետական հոգեւորականութեան և քրիստոնեայ հեղեւորականութեան վրայ ձեռք դնող չեղաւ, ո՛չ մէկ կրօնի, ո՛չ մէկ դաւանութեան դէմ ելլող չզանուեցաւ...» (Երես 50):

Այս բոլորը լաւ. բայց այս բոլորը ո՛չ միայն միակողմանի. այլ աւելի արդիւնք են քան թէ պատճառ. այդ պատճառներուն մէջ է որ հեղինակը չի մաներ:

Ճիշտ է որ օրէնքներու պակասներ շատ կան մեր մէջ, բայց ամէն բարիք օրէնքէն չի ծնիր և յաճախ օրէնքները չեն որ բարքերն և ուղղութիւնները կը սանդղեն, այլ կեանքի մէջ մուտք գտած բարքերն ու պահանջներն են որ օրէնքով կը նախադործուին:

Մեր օրէնքները թերի են եզեր, որովհետեւ թերութիւնները չեն զգացուիր: Մեր մէջ պակաս չեն քիչ ու շատ քաղաքակրթութեան առաջնորդող օրէնքներ, բայց անոնք ալ անդործադրելի են մնացել՝ որովհետեւ տիրող բարքերն ու պահանջները հակառակ են եզեր նորութեան ու յեղաշրջման:

Իսկ այդ մտայնութիւնը փոխելու համար ալ անհրաժեշտ չէ որ հասարակութեան մէջ կրթութեան ընդհանուր մակարդակը շատ բարձրացած ըլլայ: Եւ մեր մէջ կրթութիւնն ալ բոլորովին անտես առնուած չէ՛ եղեր:

Սխալ է ենթադրել թէ մեր մէջ Խուսրէզ, Բէշիա և Միտհաթ փաշաներու նման վերանորոգիչներ հասարակական զարգացումը անտես են առեր: Ընդհակառակը, Թակիլնարի և Իսլամնարի Խաթիբը հիւմայուններուն հետ միաժամանակ բարձրագոյն դպրոցներ են հիմնուեր, և բողոքի վարիչներ և ուսուցիչներ են բերուեր, և Եւրոպայի գանազան համալսարաններն են զբրկուեր բազմաթիւ ուսանողներ: Սուլթանիէի հիմնարկութիւնը երկրին համար վարիչ մտաւորական ուժեր հասցնելու նպատակ ունէր: Առաջին հիմնուած բոլոր բարձրագոյն վարժարաններուն մէջ ալ սկիզբները ո՛չ մահմետական ուսանողներ չէին ընդունուեր:

Եւ այս օր տասնեակներով, հարիւրներով չէ՛ որ կարելի է հաշուել բարձրագոյն կրթութիւն և մասնագիտութիւններ ստացած սերունդը, անոնք հազարներու կը հասնին: Բայց, հարցը անոր մէջ է թէ անոնցմէ քանին կարող է վարիչ ըլլալ, իսկական, զբաղան ծառայութիւն մատուցանել, քանին է որ նախապաշարումներէ ազատուած է, քանին է որ կատարուածին ու կատարուելիքի մտին յստակ դադարօտ ունի, քանին է որ նախաձեռնութեան ոգի և ընդունակութիւն ունի . . . :

Յարգելի հեղինակին փնտուած կրթեալ սերունդը արդէն կայ ուրեմն, և սակայն ան վերստին կը փնտուէ:

Չենք ուզեր ըսել և պաշտպանել թէ՛ մեր մէջ հանրային կրթութեան պակասութիւն չկայ, բայց այդ կող-

մէն զանգասելու աւելի իրաւունք ունեցողները առհասարակ մասսան և ի մասնաւորի ո՛չ - մահմետական հպատակները, մանաւանդ Հայերն են: Ղեկավար տարրերը, մտաւորականութիւն ըսուած մահմետական դասը չի կրնար արդարանալ իր անկարողութիւնը և անընդունակութիւնը հանրային կրթութեան պակասին վերադրելով:

Ճարտնն ալ Թուրքիոյ հետ զրեթէ միեւնոյն ժամանակ սկսաւ վերակազմութեան՝ թանգիմաթի, և զրեթէ միեւնոյն ձևով. բայց մեր մէջ ամեն սկսուած լաւ ձեւնարկ ազճատուեցաւ, այլանդակուեցաւ, իսկ ճարտն անսայթաք շարունակելով իր ճամբուն մէջ՝ մեզի համար հրաշք համարուող քաղաքակրթութեան մը հասաւ:

Ուրեմն այս անդ ուրիշ գազանիք մը, ուրիշ պատճառներ, ուրիշ ազդակներ կան՝ որոնց շնորհիւ այս երկրին մէջ կա՛մ ուղիղ ճամբան չի գտնուիր և կամ գանուելէն ետք ալ՝ անոր մէջ յարաւեութիւն ցոյց չի տրուիր:

Պատճառներու պատմական վերլուծումը լրացնելու համար, յարգելի քննադատը պէտք է նախ յիշէր՝ որ մեր մէջ արդիացնող իսլամաբի, քանկիսմաբի և մեշուր-քիյիքի ֆէրմաններն ու օրէնքները չեն հրատարակուած Երկրի տիրապետող տարրերի, թուրքերի որոշ դասի և զասակարգերի զգացած պահանջովն ու նախաձեռնութեամբը, այլ արտաքին ճնշման ու ազդեցութեան տակ, բէֆօրմներ պահանջող Եւրոպային բաւարարութիւն տուած ըլլալու համար:

Ընդ է որ Բէշիա, Ալի, Ֆուատ փաշաները զիւսանադիտական ճարտարութիւն գործ դնելով հանդերձ՝ անկեղծ ցանկութիւնն են ունեցեր իսկապէս վերանս-

բողիչներ ըլլալու, անկեղծօրէն ցանկացեր են հրատա-
րակւող օրէնքները գործադրելու, բայց ա՛նպիսի օվ-
կիանոսի մէջ իրենք մի կաթիլ ջուր անգամ չէին կա-
րող ըլլալ :

Ճէլլալ Նուրի պէյին շատ լաւ յատնի պիտի ըլլայ
որ, թանդիմաթը՝ Ղըրբի պատերազմի, Թուրքիան
իրենց զանձովն ու բանակովը պաշտպանող Եւրոպա-
կան Պետութիւններու այդ զո՛ւողութիւնները ստանալու
փոխարինութիւնն է եղեր, և սակայն, ինչպէս միշտ,
այն ժամանակ ալ պակաս չեն եղեր կրքուած պէսա-
կան անձնուիրութիւններ՝ որոնք կայսեր մատուցուած
յիշատագրերով սպառնացել են որ միլիոնը հազարէն չի
կարող թոյլ տալ միլիոնը մանիքսիսի հաւասարութիւն
շնորհող բարեկարգումներու գործադրութեանը :

Ու այդպէս ալ կատարուեր է :

Բարենորոգման ամէն մէկ ֆէրման ու օրէնք հրա-
տարակուեր է միմիայն սպառնացող վտանգը անցնելու՝
և վտանգը անցնելէ յետոյ հինը շարունակելու համար :

Աւազանին ո՛չ թէ չէր հասկնար՝ այլ չէր կամենար :
Այի փաշան մնաւ և իրեն հետ թաղուեցաւ բարենորո-
գումի վերջին յոյսը :

ՅՅի Սահմանադրութիւնը ստեղծուեցաւ Եւրոպան
վերստին խափելու համար : Բացարձակապէս անար-
դար է ըսել որ Երկիրը չէր հասկնար, բայց կրթուած
վարիչները նախամեծար համարեցին այն ժամանակի
հասկացող, օրէնք ու պատասխանատուութիւն պաշտ-
պանող խորհրդարանը ցրուել ու Հայրենիքը նոր ան-
դամահատութեան ենթարկել, Ղարսը, Արտահանը, Պա-
թումը վրայ տալ, մի Պուլղարիա ստեղծել, Սերպիա-
յին, Բուսանիային, Գարատաղին անկախութիւն տալ՝
քան իրական թէֆօրմներ գործադրել, պատասխանա-
տութիւն ընդունիլ :

Հինդ տարի առաջ նոյն սահմանադրութեան վեր-
յայտարարութիւնն ալ՝ Միւրչաէաի խորհրդակցութեան
սպառնալիքի տակ, վերստին Եւրոպան խափելու հա-
մար եղաւ, և եթէ առաջին Սահմանադրութեան վիժու-
մը Միանաա վաշաների գլուխներով ու բիւրաւոր հա-
տակների կոտորածներով չկատարուեցաւ, այնու ամե-
նայնիւ, երկրորդ Սահմանադրութեան անունով գոր-
ծուածները շատ աւելի աղիտաւոր եղան քան նախ-
կինները :

Նախամեծար համարուեցաւ Եւրոպական ու Աֆ-
րիկեան Թուրքիան վրայ տալ՝ քան անկեղծօրէն բէ-
ֆորմներ մտցնել, և նոյն խորէութիւնը գեռ ևս կը շա-
րունակուի վաղը ամբողջ Ասիական Թուրքիան ալ վրայ
տարու համար :

Կրթուածներ, հասկցողներ ևն պակաս : Քաւ լիցի :
Բիւրաւորներ կան, և սակայն քանի՛ հասկցողները,
կրթուածները շատցան՝ այնքան աւելցաւ կեղծիքը,
անբարեացակամութիւնը :

Ահա՛ այս երեոյթի պատճառն է որ երիտասարդ
քննադատը կա՛մ չէ պրպտած, և կամ յստակ ու որոշ
չէ սրաայայտած դայն :

Կրկնութենէ խուսափելու համար՝ մենք դայն պի-
տի լրացնենք Չուլումի Հարցին առիթով :

VI

«Պետութեան առաջին օրէնադրութենէն, Սուլթան
Միւլէյմանի հաստատած հիմնական օրէնքներու մասին
չպիտի խօսիմ. անոնք մեր նիւթէն դուրս ևն : Միայն
թէ այսքանը ըսեմ որ այդ օրէնքները Օսմանեան Կայս-
րութեան նման ընդարձակուած, ճիւղեր արձակած ըն-

կերութեան մը համար բաւական չէին կարող զալ : Կլիմաները, երկրամասերը, ազգերը՝ բոլորն ալ միեւնոյն օրէնքներով և սովորութիւններով . միեւնոյն սխալմով չէին կրնար կառավարուիլ :» (Երես 80) :

Այսպէս կը սկսի ձէլալ նուրի պէշ անվարչակա- նութեան մասին իր քննադատութեանց խառնելով նաև օրէնքներու անբաւականութիւնը : Եւ կը շարունակէ . — «Օրէնք կ'ըսենք, բայց առաջները այժմեայ ըմբռնուած իմաստով օրէնքներ չի կային մեր մէջ : Իւրէմային կողմէ Թրքիի գրքերէն քաղուածքները կամ եզրակացուած արամադրութիւնները չէին կրնար երկիրը կառավարելու համար բաւական ըլլալ : Մանաւանդ ոչ-մահմանական- ները, բայաները, անհնար էր որ մեր այն ժամանակի սխալէմով կառավարուէին : Նոյնպէս օտարականները նոյն սխալէմով ափի մէջ չէին սեղմուիր : Այս պատճա- րով է որ ոչ-մահմանական հպատակներն ու օտարա- կանները Սամանեան ընդհանուր իրաւակարգէն դուրս իրաւունքներու աէր եղան : Կրօնական առանձնաշնոր- հումներու և քափիթիւ յասիօններու ծագումը քննուելու ժամանակ այս պարագաները մուսցութեան պէտք չէ տալ :» (Երես 80—81) :

«Մեր ո՛չ վարչական օրէնքները և ո՛չ դատարա- նական օրէնքները, երբեք կատարելութեան չ'արժա- նացան» :

«Շէրիի դատարանները չէրիին արատ ըլլալու ա- սիճանին հասան : Առևտրական լուչաները, մաքսը, օտարներու ժողովները (որմէ առաջին առևտրական դատարանն է ծագում առած) դատեր կը քննէին : Վերջապէս, կիսատ պառա ֆրանսական առևտրական օրէնքը թարգմանեցին . նոյնպէս Հոլանտական ծովային իրաւունքէն քաղուած ծովային առևտրական օրէնք

մը, ինչպէս և արեւմտեան օրէնսդրութենէն քաղուած պատժական օրէնք մը կազմուեցաւ, բայց որոնք թերի են և պէտքերուն անբաւական: Արեւմուտքի արդարագատական օրէնքները ժամանակի ու տեղի պահանջմանց համաձայն մեր օրէնսդրութեան մէջ փոխադրելու ենք:

«Վերևը յիշուած օրէնքները մեր մէջ հաստատուելէ յետոյ, մեր օրէնսդրական պատմութեան մէջ յետագարձ, ունեւթսիօնէրական շրջան մը առաջ եկաւ:

«Բոյ նարոյկունը թարգմանելով՝ կայսերական իրատէտով մեր օրէնսդրութեան մէջ մտցնելու և հրատարակելու փոխարէն՝ ձէվտէթ փաշայի կազմած աւանդութեանց հաւաքածոն իբրև օրէնք հրատարակուեցաւ. (Դիմել Իսլամութեան մէջ վերանորոգութեան անհրաժեշտութեան մասին մեր ուսումնասիրութեան շարքին):

«Այս երկիրը երկրագործական աշխարհ մը ըլլալով հանգերձ՝ անշարժ կայուածներու, կոյզաժի վերաբերեալ մեր օրէնքներն ու սիստէմները ամենավատ, ամենանախնական, գերազանցապէս միջնադարեան օրէնքներ են: Հողային օրէնքներու հազար տեսակ սահմանափակումները, աշարի սիստեմին անհամար շեղաները, վազըֆի սիստեմին անսպառ անտրամաբանականութիւնը՝ մեր տնտեսական անկման և հետևաբար մեր ընդհանուր անկման է՛ն զլիսաւոր պատճառներն են»: (Երևս 81—83):

«Մեր մէջ անհատը—բացի մէկ քանի օրինական արամադրութիւններէ՝ որոնք միայն միւլլի սեփականութեանց կը պատկանին—իր սեփականութեան տէրը չէ: Վազուֆի զրութիւնը երկիրը աւերակի մըն է վերածած:» (Երևս 83):

Անվերապահ ու անխնայ է ձէլալ նուրի պէյ օ-

ընչքի թերութեանց քննադատութիւններուն մէջ, և եթէ չեմ սխալիր, առաջինն է ինք որ մանաւանդ վախճանութեան, անչարժ սեփականութեանց, հողային օրէնքի և մեջհիլի մասին այսքան յտակօրէն արտայայտուած է :

Այդ բոլոր քննադատական մտքերը մենք կ'ընդունինք արդար ու համարիտ, թէ և թերութեանց մասին ընդհանուր գծերով խօսուած ըլլայ : Եթէ հեղինակը կանգ առնէր խրաքանչիւր օրէնսդրութեան՝ օրինակ, անչարժ սեփականութեան և հողային ընդհանուր այն գծերուն վրայ՝ որոնք քաղաքակրթական, առաջդիմական պահանջներուն կը հակասեն, իր դաւանած անտեսագիտական դպրոցը ակներև կ'ըլլար և մենք առիթ կ'ունենայինք ըստ այնմ մեր վերաբերումը ցոյց տալ :

Այդ հարցերուն մէջ մենք պիտի աշխատինք առանցնապէս օգտուիլ հեղինակին յայանած ուրոյն այլ հրատարակութիւններէն : Արայն թէ, առայժմ այսքանը ըսենք որ օսմանեան հողային օրէնսդրութեան հիմնական սկզբունքին վերաբերմամբ մենք համամիտ չենք կարող ըլլալ : Հեղինակին հայեացքները կը բղխին պուրժուական-անհատական սեփականութեան սահմանափակ հայեցակէտէն, իսկ հողային օրէնքի սեփականութեան պետական բեխքի հայեցակէտէն, որ միջնադարեան և նախամիջնադարեան ըլլալով հանդերձ, ո՛չ միայն արհամարելի չէ, այլ մանաւանդ ցանկալի էր որ այդ սկզբունքը իր մթութենէն լոյս աշխարհ բերուէր, պարզուէր, պաշտպանուէր և հասարակական մտայնութեան և կեանքի սեփականութիւն դարձուէր : Տարաբաղդարար, անհատական սեփականութեան փրօղ մտայնութիւնը, օրէնքի փիլիսոփայութեան ժամանակին ընթացքին ուղեղներէ անհետացումը կորսնցնել տուած են անոր նշա-

նակութիւնը, օրէնքի հիմնական գրղապատճառի հայեցակէտը :

Առաջինն է որ մենք ուշադրութիւն ենք դարձուցած օրէնքի այդ սկզբունքային հիմնական հայեցակէտին վրայ (տեսնել հողային հարցի պրոչիւրը) : Հասարակական ամենամեծ դժբաղդութիւն կ'ըլլար՝ եթէ օրէնքէն անհետացուէր այդ համայնակութեան սկզբունքն ու «հողը հողագործին» հիմնակէտը :

Անհնար է ուշադրութենէ վրիպելնել յարգելի հեղինակին և մէկ ուրիշ խոչոր թիւրիմացութիւնը : Թիւրիմացութիւն կ'ըսեմ, որովհետեւ կը սիրեմ հաւատալ որ աւելի նախապաշարուած մտքի արտայայտութիւն է ան, քան նիւթին լրջօրէն ծանօթանալով, գիտակցարար մէկ սխալ ու անարդար տեսութեան սրաշարանութիւն :

Այդ թիւրիմացութիւնը կը վերաբերի «կրօնական» առանձնաչնորհումներ բռուած հարցին՝ որ ո՛չ մէկ նժանութիւն չունի փափիրքախախտներու նման օտարներուն շնորհուած բացառիկ իրաւունքներուն հետ :

Առանձնաչնորհում բառին իմաստով կը հասկցուի այն միտքը թէ՛ կամ իրաւունքի մը կիրառումը ազատ չթողելով՝ զայն մենաչնորհ դարձնել մէկ անհատի, մէկ ընկերութեան, մէկ տարրի կամ հիմնարկութեան, և կամ այն՝ որ սոցորական, ընդհանուր չեղած բացառիկ իրաւունք մը առանձնաչնորհումով դարձնել անձի մը, ընկերութեան մը, հիմնարկութեան մը :

Իսկ Պատրիարքարաններու և Խախամապետութեան վայելած կրօնական առանձնաչնորհում բռուած իրաւունքներուն մէջ ո՛չ մէկ բացառիկ և անսովոր իրաւունք կայ : Ընդհակառակը, անոնց համար ճանչցուած և ընդունուած իրաւունքները՝ ամենաբնական ու ամենատարրական իրաւունքներ են :

Եթէ կրօններու պաշտամունքի ազատութիւնը անկեղծօրէն կ'ընդունուի, եթէ ոչ — մահմետական կրօններու պաշտամունքը այս երկրին մէջ կը թոյլաարուի, ամենարեւական ու տարրական հետեութիւնն այն կ'ըլլայ որ իւրաքանչիւր կրօնի պաշտօնէութիւն իր ուրոյն վարչութիւնը և իր նիկրարչիմ ունենայ, այդ պաշտօնէութեան փոխադարձ պարտքերն ու իրաւունքները գոյութիւն ունենան, որ կրօնի — եկեղեցիի պաշտօնէութիւնը կամ վարչութիւնը իր հաւատացեալներուն հետ փոխյարարերութիւններ, փոխադարձ պարտքեր և իրաւունքներ ունենայ, այդ յարարերութեանց, պարտքերու և իրաւունքներուն սահմանները զժուած ըլլան և ըստ այնմ իրենց ներքին կեանքը վարեն :

Առանձնաչնորձօ՛ւմ կ'ըլլան այս կարգի իրաւունքները : Եթէ այդ իրաւունքները ետ խլուին, ի՞նչ վիճակի մէջ պիտի գրուին հապա այս զանազան եկեղեցիները, կրօնները, պաշտօնէութիւնները, ինչո՞վ պիտի կառավարուի անոնց ներքին կեանքը, ո՞վ պիտի ըլլայ անոնց վարիչը :

Եթէ այսպիսի անհեթեթութիւն մը չէ կարելի ենթադրել, հապա ո՞րն է Պատրիարքարաններուն արուած իրաւունքներուն մէջ առանձնաչնորձեալը :

Արդեօք առանցնաչնորձօ՛ւմ կը համարուին անոնք որ ո՛չ մահմետական հասարակութիւնները կը վայելին իրաւունքն իրենց սեփական բարեգործական և կրթական հիմնարկութիւններ ունենալու, այդ հիմնարկութեանց և կրօնական հաստատութեանց պահպանութեան համար կալուածներ ունենալու և այդ կալուածները արեւակաւու :

Ո՞ր երկրի, ո՞ր աշխարհին, և ո՞ր ազգին մէջ է որ այդ դրութիւնը և այդ իրաւունքը գոյութիւն չունի :

Եւ միթէ մահմետական կրօնի և կրօնականներու ուրոյն վարչութիւնը գոյութիւն չունի Թուրքիոյ մէջ : Ի՞նչ են հապա Շէյխ-Իւլ-Իսլամութիւնը և Շէյխ-Իւլ-Իսլամը՝ որ նախարարութեան և նախարարական ժողովի մէջ աւագ գիրք ունի :

Կաթոլիկ, օրթոտօքս և բողոքական քրիստոնեայ դաւանութեան պատկանող պետութեանց մէջ անգամ իւրաքանչիւրը իր կրօնական և հասարակական խնդրա-վար ներքին վարչութիւնն ունի :

Արդեօք այս երկրին մէջ պատրիարքարաններու առանձնաշնորհումը ան է որ իւրաքանչիւր ո՛չ-մահմետական ազգ կը վայելէ ամուսնական և կտակային վէճեր քննելու և դատելու իրաւունքը :

Ձրկայ ո՛չ մէկ իրաւասութիւն՝ որ ո՛չ-մահմետական ազգերի պատրիարքարաններուն և խախտմապետարանին մի բացառիկ առանձնաշնորհումը եղած ըլլայ :

Անոնց վայելած իրաւունքները կարելի է ամփոփել հետեւեալներով :

1. — Եկեղեցիի վարչութիւն՝ որին ենթակայ է իւրաքանչիւր եկեղեցիի տնտեսական մատակարարութիւնն ու եկեղեցականութիւնը, ինչ որ Մահմետականներու համար Շէյխ իւլ Իսլամութիւնը և Էվգաֆը գերազանցապէս կատարում են :

2. — Ամուսնական խնդիրներ : Ամուսնութիւնն ու ամուսնական վէճերը իրր կրօնադաւանութեան մասընդունած է նաև մահմետականութիւնը և կը կատարուին ու կը լուծուին մահմետական կրօնաւորի ու շէրիի դատարաններու միջոցով :

Հետեւաբար ո՛չ-մահմետականի ամուսնութիւնն ու վէճերն ալ բնականաբար իւրաքանչիւր եկեղեցիին ու եկեղեցականին պիտի պատկանին :

Թուրքիոյ մէջ՝ ուր քաղաքական ամուսնութիւն չըկայ, գոնէ՛ մահմետականի կողմից չէ՛ որ հակառակ կարծիք պիտի յայտնուէր :

Քաղաքական ամուսնութիւն գտնուած երկիրներու մէջ անգամ, եկեղեցիի իրաւասութիւնները չե՛ն ջնջուած :

Այս տարրական իրաւունքը ո՛չ-մահմետական եկեղեցիներու համար առանձնաշնորհում չըլլալով հանգերձ, անոնք լիովին ալ չեն վայելեր, որովհետեւ ժառանգական իրաւունքները՝ որոնք ամուսնական, ազգակցական ըմբռնումներէն կը բղխին և այդ ըմբռնումները կը տարբերին քրիստոնէութեան ու մահմետականութեան մէջ, այնու ամէնայնիւ ենթարկուած են շէրիի արամադրութիւններուն :

Մենք չէ՛ որ պիտի պաշտպանենք ամուսնութիւնը իբրև եկեղեցիի սեփական իրաւունք, բայց քանի որ պետութեան ընդունած սկզբունքն է, այլ ևս ո՛չ-մահմետականներու համար այդ կիրարկումը առանձնաշնորհում չի կարող համարուիլ :

— Կտակը և վազֆը՝ որոնք իբր մահմետական կրօնի մաս նկատուելով, շէրիի իրաւասութեան են ենթարկուած, տրամաբանօրէն արդարութիւնը կը պահանջէր որ այդ կարգի հարցերու մէջ մահմետական ըմբռնումներէն տարբերող քրիստոնեայ եկեղեցիներն ալ լիազօր ըլլային իրենց վերաբերող կտակային ու վազֆային խնդիրները տնօրինելու, և սակայն վազֆային վէճերը, սեփականութեան վաւերացումն ու ջնջումը մահմետական վազֆային հեղինակութեան ենթարկուած ըլլալէ զատ՝ թէև կտակներու վերաբերեալ պատրիարքարաններու որոշ իրաւունքներ ճանաչուած են, բայց այդ իրաւունքի կիրառութիւնն ալ միշտ միջամտութիւններու և վէճի առարկայ դառցնելով ջնջելու հետամուտ է եղած պետութիւնը :

4. — Կրթական, բարեգործական հիմնարկութիւններու վարչութիւն և մատակարարութիւն :

Այս կարգի իրաւունքները՝ ո՛չ միայն մահմտական և քրիստոնեայ միմիանցից հիմնապէս տարբեր դաւանութեան հետեւանքով, անխուսափելիօրէն պիտի վայելէին ո՛չ-մահմտականները, այլ նաև իւրաքանչիւր համայնքի համար տարրական իրաւունք է ընդունուած քաղաքակրթ աշխարհի մինչև իսկ միևնոյն ազգութեան և կը օնի պատկանողներու մէջ :

Ո՛րն է ապա Պատրիարքարաններու յատուկ առանձնաշնորհումը :

Ի՛նչ կը պահանջուէր : Կը պահանջուէ՞ր որ քրիստոնէական բարքերուն ենթակայ ամուսնական ու անկէ բղխող վէճերը մահմտական ըմբռնումներուն ու օրէնքներուն ենթարկուէին : Կը պահանջուէ՞ր որ եկեղեցա-բարեգործական հիմնարկութեան պատկանող, քրիստոնեայ ըմբռնումներուն ու բարքերուն պատկանող վազըֆներու մատակարարութիւնը դարձուէր մահմտական վազֆի վարչութիւն :

Այդ իրաւունքներն ալ արդէն այնքան միջամտութեանց ենթարկուած են՝ որ իշխանութիւնը՝ Շէրիի դատարաններն ու Վազֆային վարչութիւնները որ ո՛չ մէկ պատեհութիւն չեն փախցըներ պատրուակներ ստեղծելու, որպէս զի աչքի փուշ եղած կրօնա-ազգային-բարեգործական սեփականութիւնները զբաւուին և մինչև ամուսնական-ընտանեկան յարաբերութեանց մէջ չեղիով իշխեն :

Եթէ շարունակուին այս մտայնութիւններն ու այս ձգտումը, Պետութեան գլխին խոշոր խնդիր մըն ալ այս ազգային սեփականութիւնները և կրթական խնդիրները պիտի ըլլան, որոնցմէ չեն կրնար բաժնուիլ հասարակութիւնները, որոնց սեփականազգրկման համար չեն բա-

ւեր ո՛չ թէ Լվզաֆի որոշումները և Շէրֆի վճիռները ,
այլ և ո՛չ մէկ ուժ :

Արդ , Պարզ է որ Պատրիարքարաններու իրաւասութիւնները ո՛չ թէ առանձնաշնորհումներ են , այլ կրօնա-կույտութեան հանրային տարրական , բնական իրաւունքներ :

Պարզ է նաև որ՝ եթէ այս բնական տարրական իրաւունքները պաշտօնական լեզուին մէջ առանձնաշնորհում բառով բնորոշուած են , ասիկա շատ աւելի հետեւանք է եզեր այն մտայնութեան՝ որ թելադրուեր է մահմետական տիրութեան տակ այլակրօններուն պաշտամունքին :

Անկեղծ ու պարզ ըլլանք :

Կա՛մ յստակ կերպով պէտք է ընդունիլ որ այլ ևս այլակրօնները ճշկու ձգտում և նպատակ չի կրնար ըլլալ , և կամ այդ ազատութիւնը «թրքական շահերու տեսակէտէն վտանգաւորը լլայն հաստատելով՝ անոնց իրաւունքներն այլ ջնջելու անհրաժեշտութիւնը պէտք է յայտարարել :

Եւ որովհետև անհնար է այժմ կրօններու ազատութեան դէմ գործելու հաւանականութիւնն ընդունիլ , ապա ուրեմն վերջ պէտք է տալ նախապաշարումներուն , պէտք է սրբազրել «առանձնաշնորհում» որակումը և ընդունիլ անոնց բնական իրաւունքներու հանգամանքը :

Գուցէ յարգելի հեղինակը առարկէ որ իւր առարկան առանձնաշնորհումը յիշուած իրաւունքներու մասին չէ՛ այլ պատրիարքարաններու սիջամտութիւնն է սխտութեան ներքին գործերու մէջ , այսինքն այն՝ որ իւրաքանչիւր պատրիարքարան իրեն ենթարկուած ժողովրդի ինչքին , պատուին ու կեանքին դէմ կատարուող ուղն-ձգութիւններու , զեղծումներու , ապօրինութիւններու ,

յափշտակութիւններու, մի խօսքով հարստահարութիւններ քառին մէջ ամփոփուած և միայն թու քիոյ յատուկ եղած խնդիրներու առիթով թագրիրներ, բողոքներ ներկայացնելու իրաւասութիւնն է :

Բայց պատրիարքարաններու ո՛չ թէ այն կարգի վայելած իրաւունքներուն դէմ պիտի բողոքել՝ այլ այդ բնական իրաւունքը ծնեցնող պատճառին դէմ : Քանի որ ո՛չ միայն քաղաքացիական իրաւանց հաւասարութիւնը երբէ՛ք չէ ճանաչուած ու կիրարկուած այս երկրի մէջ, քանի որ հարստահարութիւնները այս երկրի նորմայ վիճակի կարգն են անցել ու մասնաւոր, բացառիկ երևոյթ չեն՝ ինչպէս ուրիշ երկիրներու մէջ, անխուսափելիօրէն առաջ պիտի դար մի օրգան՝ որի միջոցով հնարաւորութիւնը արուէր հասարակական ցաւերն ու արտունջները ներկայացնելու :

Նոյն իսկ Պարլամենդի մէջ իւրաքանչիւր ազգի ներկայացուցչական բաժնի իրաւունքը չընդունուեցաւ, բայց քանի որ ազգերը գոյութիւն ունին՝ որոնք ունին նաև իրենց ուրոյն սեփական ցաւերը՝ ո՞ր օրգանի միջոցով էր որ այդ իրաւունքը պիտի ներկայացուէր, եթէ Պատրիարքարանները չը վայելէին այդ տարրական իրաւասութիւնը :

Կեանքի անխուսափելի պահանջը եղած այդ պիտի իրաւունքներ օրէնքով չեն ստեղծուի, և սակայն յարգելի հեղինակի գանգառած Պատրիարքարաններու այդ իրաւասութիւնը ո՛չ-մահմետական հասարակութիւններու համար մի բարիք ըլլալէ աւելի չարիք է, որովհետև հասարակական ցաւերը՝ որոնք իւրաքանչիւր ազգի, մասնաւորաբար Հայ ժողովուրդի գոյութեան հետ առնչութիւն ունին, անոր գոյութեանը կ'սպառնան, քաղաքական բնոյթ ունին, իսկ այդ կարգի ցաւերն ու

չարիքները Պատրիարքարաններու վարկաբեկուած, ո՛չ մի ուժի վրայ չը յննուած թագրիրներով ու բողոքներով չէ՛ որ ուշադրութեան կ'առնուին և կը դարձանուին :

Երանի՛ թէ Պատրիարքարաններու այդ գործ դրած իրաւասութիւնը դոյութիւն չունենար և ժողովուրդները այն տեղից չակնկալէին իրենց լացի ու կոծի մխիթարութիւնը : Այն ժամանակ կեանքը կը ստեղծէր ուրիշ օրգան՝ որ կրօնով ու եկեղեցիով պաշտպանուած չէր ըլլար, բայց կը կրէր քաղաքացիութեան, ապրելու իրաւունքի դրական, քաղաքական ոգին ու ինքնագիտակցութիւնը, որով բարերար ազդեցութիւնը կ'ունենար թէ՛ Պետութեան համար և թէ՛ ասնջուող ու սպառուող ազգերու համար :

Իսկ երեւակայի՛ որ աննորմալ պայմաններու մէջ ապրող ժողովուրդները ո՛ր և է օրգան չունենան իրենց հասարակական ցուերն ու պահանջները արտայայտելու համար, այդ արդէն անբնական է :

Հետեւորար, Պատրիարքարաններինը միջամտութիւն չըլլալով, անհետեւանք թագրիրներ մատուցանելու ելին չըլլալով հանդերձ՝ ինքն ըստ ինքեան մի աւանձնաշնորհում չէ :

VII.

Արդէն կը հասնինք հեղինակին է՛ն կարևոր, է՛ն քննադատելի հայեացքներուն : Զուլու մի վաղեմի տենջանքն է այդ, — վաղեմի ցար, է՛ն հիւանդոտ մտայնութիւնը և պատճառը այս երկրի դժբաղդութեանց :

«Օսմանեան տարրերու շատութիւնը մեր անկման ազդակներէն մէկն է : Կ'երեւի ո՛ր մէկ տարրէ կազմուած ու բաղկացած ազգերը ցեղային ու ազգային վէճերէ հեռու գտնուելով՝ ևս աւելի հեշտութեամբ առաջ

կ'երթան : Արդարեւ , ազգային ու կրօնական վէճերն ու կռիւները կը յողնեցնեն ընկերութիւնը , մանաւանդ եթէ տարրերուն մէջ հակադիր տարրերութիւնը մեծ ըլլայ՝ այն պետութիւնը տեսակ տեսակ խռովութեանց ասպարէզ կը դառնայ . . . Մինչդեռ , մէկ տարրէ բաղկացած ազգերու մէջ երեւան եկող ապստամբական խռովութիւնները անցողական բնոյթ կը կրեն : Թէև Յրանսայի մէջ կաթոլիկներու ու բողոքականներու միջև եղած վէճը կարեւոր ապստամբութեանց պատճառ եղած է , և մանաւանդ 1789 Մեծ Յեղափոխութիւնը իր էութեամբ ապստամբութեանց ամենակարեւորն է եղած , այնու ամենայնիւ ասոնք նոյն ազգին պատմութեան մէջ երկարատեւ ժամանակ չեն գրաւած : Քաղաքային պատերազմը վերջ կը գտնէ , ապստամբները անմիջապէս որ իրենց ցանկութեան կը հասնին՝ զործերը իրենց հաւասարակշռութիւնը կը գտնեն , միջավայրը կը խաղաղի : Դժբաղդարար մեր մէջ այդպէս չէ եղած : Հպատակ տարրերը անմիջապէս որ «պատեհութիւն գտած են՝ ապստամբած են . կառավարութիւնն ալ այդ ապրատամբութեանց զիմազրաւելու համար հանգստութենէ և խաղաղութենէ զրկուեր է » (Երես 63-64) :

Ամբողջովին սխալ հետեւութիւններ ու արդիւնքը պատճառի տեղ առնուած զիտակցարար կամ անգիտակցարար նախապաշարունակներ են ասոնք :

Եթէ յարգելի հեղինակը միակողմանութենէ ազատուած ու ամբողջովին պատմա-փիլիսոփայական , զիտական վերլուծման հետեւած ըլլար , պիտի եզրակացնէր որ բոլոր երկիրներու և բոլոր ժամանակներու մէջ ալ ժողովուրդներու մէջ — միասարթ թէ բազմատարթ — եղեր են երեք տեսակի խռովութիւններ՝ ազգային կամ ցեղային , դասակարգային և կրօնական : Այդ երեք կարգի խռովութիւնները կամ կռիւներն ալ մէկ ընդհանուր

չատկանիչ են ունեցեր. — տիրողներու և կամ իրաւա-
տէրերու ու իրաւազուրկներու պայքար :

Տիրողները կ'ըլլան կա'մ ազգ, կա'մ դասակարգ և
կա'մ դաս : Տիրապետողները և իրաւազուրկները կ'ըլլան
թէ՛ միեւնոյն ազգին և թէ՛ տարբեր ազգերու պատկանող
դասակարգեր ու դասեր, երբեմն ալ անխափր դասի ու
դասակարգի մէկ նատուած : Իրաւազրկութիւնը կ'ըլլայ
քաղաքական, անտեսական և կրօնական կամ կուրտու-
րական : Ասոնցմէ որն ալ որ ըլլայ՝ մինչև իրողութիւնը,
այսինքն պատճառը չ'վերցուի մէջակղէն, անոր նետե-
ւանքը եզող խառնութիւններն ու ասպտամբութիւնները
չեն վերնար :

Յարգելի նեղինակը՝ որ անկասկած լաւ ծանօթ է
ընդհանուր, չին ու նոր պատմութեան, գիտէ թէ միայն
Յրանտայի մէջ չէ՛ որ ծագեր են կաթողիկ ու բողոքա-
կան կուիւները և տեղի են ունեցեր սուրբ Բարրոյիսկե-
ոսեան արիւնահոս գիշերներ, այլ և ամբողջ Եւրոպայի,
մանաւանդ Գերմանիոյ ու Անգլիոյ մէջ :

Երիտասարդ քննադատը շատ լաւ գիտէ անչուշտ
թէ միևնոյն ցեղին պատկանող ազգերու մէջ եղած քա-
ղաքական պատերազմներն անգամ վերջ չեն գտներ՝
մինչև որ տիրապետող, իրաւազրկող դասակարգերը չեն
պարտուեր, մինչև որ տեղի տալու չեն ստիպուեր :

Միապետութեան ու աւատականութեան միջև, ա-
ւատականութեան ու բուրժուազիի, պետութեան ու ե-
կեղեցիի միջև պայքարը, պատերազմները դարեր տե-
ւած են և տակաւին կը տեսնեն : Հեղինակը այս ամէնը
չա՛տ լաւ գիտէ, և գիտէ մանաւանդ որ այս կարգի
պատերազմներու մէջ ազգային խորութիւն չի կայ. ա-
նոնք յատուկ են միատարր և բազմատարր բոլոր ազ-
գերուն և բոլոր երկիրներուն : Հեղինակը շատ լաւ գիտէ

Թէ այդ պատերազմները՝ յաճախ արիւնով ներկուած, չեն վերջացած՝ մինչև որ իրաւազուրկները իրենց իրաւունքները չեն նուաճած: Դարձեալ ինքն է ըսողը թէ «ըմբոստացողները անմիջապէս որ իրենց նպատակին կը հասնին, գործերը վերստին հաւասարակշռութիւն կը գտնեն»:

Ե՛րբ այս երկրին մէջ հպատակ ազգերը իրականապէս վայելեցին իրենց ժարդկային քաղաքական, քաղաքացիական, տնտեսական և կրօնական ազատութիւններն ու երաշխիքները, և շարունակեցին խաղաղութիւն ու ապստամբութիւն:

Հեղինակը ինքն է որ ասոր հակառակ վկայութիւն կուտայ. — «Աւստրիա ալ մեզի նման հակամարտ տարրերէ բաղկացած պետութիւն մը ըլլալով հանդերձ՝ մի միայն թաքթով ու լաւ վարչութեան շնորհիւ կը շարունակէ իր գոյութիւնը: Գերմանական կայսրութիւնը կազմուելէ յետոյ թէև քիչ մը փոքրացաւ, բայց ի վերջոյ Պոնա-Հէրտէքի կցումովը վերստին գտաւ իր հաւասարակշռութիւնը և մինչև իսկ ընդարձակուեցաւ:

«Մինչդեռ մեր մէջ, վարչական և լուրջ ծրագիր մը չգործադրուելով՝ պետութիւնը հեռզնեաէ փոքրացաւ...»: (Երես 79—80):

«... Եթէ ուս կառավարութիւնը և անոր հետեւելով Արևելեան Հարցի գլխաւոր դերակատար միւս պետութիւնները չգտնէին օսմանեան կայսրութիւնը խառնաչփոթ զիճակին մէջ, հպատակ տարրերը զրգուելու կարող չէին ըլլար:

«... Եթէ օսմանեան տարրերէն ոմանք վերջին ժամանակներս ուրոյն իշխանութիւններ կամ անկախ պետութիւններ հիմնելու յաջողեցան, շնորհիւ մեր վարչական զեղծումներուն է...»: (Երես 79):

Բայց այս տեղ հեղինակը անսպասելի, պատմական հիմ շունեցող շեղում մը կը կատարէ, նոր թեզ մը երեւան կը բերէ և ոչնչութեան կը վերածէ վարչական զեղծումներուն և անվարչագիտութեան մասին յիշուած բացարձակ, անպայման ճշմարտութիւնը եզոզ իր տեսութիւնները, բնելով — «... Եւ սակայն մէկ ազգէ չբազկացած ընկերութիւններ իրենց գոյութիւնը միմիայն լաւ վարչութիւնով կարող են ապահովել :»

Այս պարբերութեան հակադարձը կ'ըլլայ այն՝ որ օսմանեան կայսրութիւնը եթէ մէկ ազգէ բազկացած ըլլար, կարող կ'ըլլար վատթար վարչութեամբ սպառնակ իր գոյութիւնը :

Երբև՛ք :

Մեր և երբ է տեսնուէր մէկ ազգութենէ բազկացած պետութիւն մը՝ որ վատթար վարչութիւնով պահած ըլլայ իր գոյութիւնը : Աֆղանիստանը, Պոստալան, Պարսկաստանը Մարո՛քը, Ալճէրիան, Թունու՛զը : Ասոնց մէջ ալ կային հպատակ ազգերու խռովութիւններ ու ապստամբութիւններ : Գիտենք որ չի կային, հապա ինչո՛ւ կորսնցուցին իրենց անկախութիւնը :

Եւ արդէն ինքն էր որ իր տեսութեանց սկիզբները կ'ըսէ թէ «ազգ մը՝ իր քաղաքական անկախութիւնը կորսնցնելու համար, յաճախ, նախ և առաջ անկումի ու կազմալուծման ենթարկուած ըլլալու է :» (Երես 21) :

Իսկ եթէ այդպէս չըլլար, բուռ մը թուրքեր կամ տաճիկներ՝ իրենց բազմարդէտ մահմետականներու բանակով նախ Մէլլուկեաններու և ապա Արարական, Պարսկական և Բիւզանդական կամ արեւելեան Հռոմի կայսրութեան չէին կրնար տիրապետել :

Ո՛վ է մեղաւորը որ Օսմանեան կայսրութիւնը ինք ալ՝ իր կարգին, անկումի, կազմալուծումի ճամբուն

մէջ է ինկեր՝ իր «վաթար» վարչութեան, կառավարելու անկարողութեան պատճառով :

Ճէլալ Նուրի պէյ՝ որ այս Պետութեան անդուզականօրէն վեհանորոգչութեան հետամտած Բէշիա փաշաներու նման եզակի պետական մարդիկը կը մեղադրէ թէ անոնք Ֆէրմաններն ու Օրէնքները չի հաստատեցին Երկրին տիրող մտայնութիւնն ու ընդունակութիւնը չտօնելով, թէ անոնք նախ մտայնութիւնները յեղաշրջելով չսկսան վերանորոգչական գործը՝ որպէս զի օրէնքները անգործադրելի չմնային, ինք անոնցմէ անհամեմատ մեծ և չափազանց մեծ յանցանք մը կը գործէ, — պատմական հիմ չունեցող տեսութիւններ՝ որպիսին է Խուրքիոյ մէջ այլատարր ո՛չ-մահմաական ազգերու գոյութիւնը և այդ տարրերու կրօնա-ազգային վարչական ինքնավարութեան բնական իրաւունքը կայսրութեան անկումին պատճառ ցոյց տալով :

Քանի որ այս տարրերէն առաջ եկած ապստամբութիւններն ու անջատումները հեանանք են եղեր տիրող վաթար վարչութեան, ապա ուրեմն անոնք չեն որ պատճառ պիտի նկատուին պետութեան անկման :

Արդիւնքը պատճառի տեղ ցոյց տալ այնպիսի երկրի մը մէջ, ուր խորականութիւնն ու մոլեռանդութիւնը չեն քննուած, ուր րայան (اصراع) ի փոխուելով՝ չէ դադրած կեանքը նկատուելէ, ամենավտանգաւոր փորձն է այդ խորականութեան, ատելութեան, մոլեռանդութեան ուժ տուող այդպիսի մտքեր հրապարակ դնել, քսելով — «կայսրութեան անկման պատճառներէն մէկ ալ իր այլատարր ըլլալն է :»

Հեղինակը ամենամեծ ծառայութիւնը մատուցած պիտի ըլլար, եթէ պատմական վերլուծումէն դուրս բերէր այն իրականութիւնը, որ կայսրութիւնը իր անկումնե-

լով հանդերձ՝ եթէ ցարդ կրցեր է այսքան ալ գոյութիւնը պահել, ասիկա եզեր է միմիայն չորհիւ ո՛չ-մահմետական տարրերու գոյութեանը, անոնց աշխատանքին ու ծառայութեանը, անոնց ստեղծագործութեանը :

VIII.

Երիտասարդ բննադատը՝ ինչպէս տեսանք, փոխանակ հեռետղականօրէն պատմութեան վերլուծիչի դերին մէջ մնալու, շեղուելով՝ կ'աշխատի որպէս թէ պատմականօրէն հաստատել որ թուրքիոյ անկման պատճառներէն մէկն ալ այլատարր ազգերու շատութիւնն է :

Յոյց տա ինք արդէն թէ որքա՞ն սխալ էր այդ տեսութիւնը, որքա՞ն անհամապատասխան պատմական ցուցմունքներուն, և որքա՞ն մանաւանդ վտանգաւոր երկրի վերածննդեան տեսակէտէն :

Այդ սխալ ու վտանգաւոր շեղումը բնականաբար պիտի առաջնորդէր ձուլումի հարցին : Այսպէս ալ եղած է :

Բայց ձուլումի հարցին անցնելէ առաջ ալ, դարձեալ աչքի փուշ կողմ Պատրիարքարաններու մասին խօսելով՝ կ'ըսէ. — «Մեր անկման պատճառ եղող Եւրոպայի թշնամութեան պատճառներէն մէկն ալ, ինչ որ ալ ըսուի, կրօնական մոլեռանդութիւնը, հոգեւորականներու մեղի դէմ ունեցած ուղեգիծն է . . . : Մեր հպատակներէն մէկ մասին քրիստոնեայ ըլլալը մեղի համար դժբաղդութեան պատճառ է եղած : Ասոնք դործիք են եղած որ Եւրոպա մեր երկրին մէջ դեր խաղար : Մեր քրիստոնեայ հպատակներուն Եւրոպական պետութեանց կողմէ պաշտպանուիլը՝ մեր վեհապետական իրաւունքին ուղղակի միջամտութիւն է, որ ո՛չ մէկ կերպով տանկի չէր :

Նոյնպէս, Եւրոպական պետութեանց կրթնելով և անոնցմէ պաշտպանուող Պատրիարքի և հոգևոր պետերու վարչական գործերու միջամտութիւնը չափազանց վնասակար սովորութիւն մըն է :» (Երևս 134-135) :

Սախալուած ենք այս հարցին մօտենալ նաև ուրիշ կողմերով :

Մենք հեղինակին իր խակ վկայութիւններով՝ արդէն ապացուցինք թէ՛՝ ո՛չ-մահմետական տարրերու պաշտպանութեան պատրուակով պետութեանց միջամտութիւնը, հետեւանք է Երկրին տիրող վասթար վարչութեան, թէ՛ հպատակ ազգերու բմբոստութիւններն ու անջատողական ձգտումները ճարահատ արդիւնքն են եղեր մարդկային տարրական իրաւունքներ կարենալ վայելելու անհնարութեան :

Այդ բաւական չէ :

Պետութեանց պաշտպանութիւնն ու միջամտութիւնը միայն քրիստոնեաներուն յատուկ չէ : Քրիստոնեաներէն շատ աւելի թուով մահմետականներուն կը վերաբերի այդ միջամտութեան մեղքը, խոտվութիւն և սպրտամբութիւն շատ աւելի թուով մահմետականներէն առաջ եկած են : Պատմութեան այս իրականութիւնը ուղև մեր այս օրերուն կատարուած իրականութիւնը անտես սունել՝ սա նուազն անբարեխղճութիւն է հըրապարակագրի մը համար՝ որ ծանօթ է բոլոր իրադարձութեանց, և անոր այդ տողերը գրած ժամանակ՝ մահմետական Ալպանիան զէն ի ձեռին ապստամբութեան մէջ, Աւստրիական ու Իտալական պաշտպանութեան տակ էր և է այսօր, իբրև անոնց չնորհիւ ազատագրուած ինքնօրէն ազգ մը :

Եզիպոտսի Մէհմէտ Ալի փաշաները կամ եզիպոտական ապստամբութիւնը, Իմամ Նահանները, Իտրիաները,

Քուլէյթներու, և այլ բազմաթիւ շէյխերը և Թունուզի պէյութիւնը բոլորն ալ մահմետական են, և եղեր են միշտ ապստամբ, անջատողական ու հովանաւորուած անգլիական, ֆրանսական, և վերջերս նաև իտալական պետութիւններէն: Դեռ անցեալ տարի, 1912ին, Իտալիոյ Տրրիպոլիս մուսքը իրրև ազատարար ընդունողը՝ եղեր է մահմետական քաղաքապետն ու քաղաքապետութիւնը:

Համեմատեցէ՛ք այդ բոլոր երկիրներու տարածութիւնը, ազգաբնակչութեան թիւն ու կարևորութիւնը Եւրոպական Թուրքիոյ տարածութեան, յոյն, պուլկար, սերպ, և այլ ազգերու թուին հետ, և պիտի համոզուիք անոնց գեռակշռութեանը:

Հետեւարար եւրոպական միջամտութեան համար կրօնը — քրիստոնէութիւն կամ մահմետականութիւն — բնաւ տարբերութիւն չէ ունեցեր և Եւրոպան աւելի Մահմետականներէն է օգտուեր քան թէ՛ քրիստոնեայ հպատակներէն:

Դեռ այս օր իսկ քրտական հովանաւորութիւն ու պատրուակ է սկսուած Ռուսաստանի համար, և Քուրտը մահմետական ու կիսաթափառական ժողովուրդ է: Նոյնը և այսօր Սուրիան՝ ֆրանսական միջամտութեամբ, Միջագետքը՝ անգլիականով:

Աւելին:

Քրիստոնեաներու համար միջամտութեան պարագաներու տակ, Եւրոպան միշտ և սովէն մէկի համար՝ սկզբները անջատողականութեան հակառակ է եղեր՝ պետութեանց հակամարտ շահերու բերմունքով, միշտ աշխատեր է բարեկարգութեանց պահանջներով, բարեկարգութիւնները մտցնել տալու միջոցներով բաւականանալ. բայց երբևէ ք մահմետական ժողովուրդներու պաշտպանութեան առիթով այդպէս չէ վարուեր. ընդհակառակ-

կը, անոնց անջատողական պահանջները պաշտպանած է միշտ :

Եւս աւելին :

Օսմանեան տիրապետութեան տակ անցած և քիչ ուշատ միասարք մահմետական արար, պղպան, քիւրա ժողովուրդներն ու երկրամասերը մինչև այսօր ալ, մեծ մասամբ, ամբողջովին չհպատակուած և երկրին ընդհանուր օրէնքներուն չենթարկուելով՝ աւելի կամ նուազ չափերով կիսանկախ են եղեր իրենց աւատապետներով, որոնց մէկ մասին համար զարձեպ հեղինակին վկայութեան կը դիմենք :

— «... 1912ին՝ Թուրքիոյ մէկ քանի մասերը միջնադարեան վիճակի մէջ կը գտնուին :

«Միջնադարեան կարգ ու սովորութիւնները շատ տեղեր իրենց ամբողջ ուժովը կը տիրապետեն : Հետաւոր շատ մը վայրերու մէջ ցեղապետներու և շէյխերու ազդեցութիւնը կառավարութեան ու վեհապետներու ազդեցութենէն աւելի է : Անոնք տուրք կ'առնեն, արդարադատութեան վեհապետական իրաւունք (և զուլում) գործ կը դնեն : Անոնց հպատակները, բացի հնադանդութենէ, ուրիշ բան չեն դիտեր : Քուրախատանը, Ալպանիան և Արարիոյ մասերուն մէջ մեծամասնութիւնը այս կերպով կ'ապրի : Հպարտութիւններն ու մեծամտութիւններն իս իջեցնենք, մեր ներքին նահանգները միջնադարեան և Միջին Ասիայի նահանգներէն շատ ալ չեն տարբերիր :» (Երես 91) :

Արդ, եթէ անցեալը և ներկան աչքի առաջ բերենք և անազին տարածութիւններն ու ժողովուրդները համեմատենք, կը տեսնենք որ պետութեան լիակատար նուճում և լիակատար վեհապետական իրաւունք գործ դրած մասերը՝ աւելի կամ նուազ քրիստոնեայ խառն կամ

շատ քրիստոնեայ ազգարնակութիւն ունեցած վայրերն են եղեր, և ո՛չ թէ զուտ մահմետական բնակչութիւն ունեցողները :

Այս համեմատութեամբ և հեղինակին դատողութեամբ եթէ առաջնորդութիւնը՝ ուրեմն պիտի հետեցնէինք որ այս պետութեան անկրկան սրտաւորներէն մին՝ եւրոպական պետութեանց միջաստիճաններուն պատրաստակ զորո՞թի՛ մասնակցական հարստակ ժողովուրդներն են եղած :

Ամենեւին, ո՛չ :

Ակներեւ է ուրեմն թէ հեղինակին տեսութիւնը՝ որ իրեն յատուկ չէ, այլ վերջին դարուն մէջ տգիտարար ստեղծուած մտեւանդ տեսութեան մէկ նսխապաշարուն է, բոլորովին պատմական հիմք չունի :

Ընդհակառակը, մահմետական ժողովուրդները ապրելով միջնադարեան պարմաններու մէջ, ըլլալով կիսանուած ու կիսանկախ վիճակի մէջ, աւելի շատ ազգմէկ ժողովուրդ՝ քան աշխատող ու ստեղծագործող, ի՞նչ պիտի ըլլար այս պետութեան վիճակը, եթէ քրիստոնեայ աշխատող ժողովուրդները գոյութիւն չունենային, անոնց աշխատանքն ու հարկատուութիւնները չըլլային : Եւ ո՛րպիտի հպատակ քրիստոնեայ ժողովուրդներ, որոնք յաճախ ու դարերով երկու տեսակ հպատակութիւն, երկու տեսակ հարկատուութիւն են կրեր — աւատական ու պետական, երկու տեսակ աւարի ու հարստահարութեան են դատապարտուեր — աւատականի ու շրջաօճակականի :

Ըսէ՛ք, ո՞վ է եղեր այս պետութիւնը ապրեցնող ստնտուն, կենսունակ հիւթը :

Ինչ՞ու անտես առնել այս փաստը, այս պատմական իրականութիւնը : Ինչ օգուտ արդեօք : Ընդհակառակը, այդպիսով եթէ մնացորդ վերջին հիւթն ալ ջնջուի, ճակատագրական վերջին քաթասթրօֆը անխուսափելի է :

Այս էջերուն մէջ մենք վաղուց ենք ըսեր, կրկներ որ այսուհետեւ Արևելեկան Հարցը պիտի կազմեն միայն մահմետական ազգերը, և Այպանիայէն յետոյ Սուրիան արդէն կանգնած է սպառնալից :

Եթէ քրիստոնեայ հոգեւորականութիւնը ատելութիւն է սնուցեր, հազա մահմետական հոգեւորականութիւնը չէ՞ որ ըստ մահմետական աւանդութեան, ըստ մահմետական հոգեւորականի պատուէրին — օրական հինգ անգամ կենալուրը օրական հինգ անգամ հրաւիրել իսլամութիւնը ընդունելու : Չէ՞ որ մահմետական կրօնական մօլեռանդութիւնը յարձակողական է, իսկ քրիստոնեայինը պաշտպանողական, գոնեա՛ թուքրիոյ մէջ քանի պետութիւնը մահմետական ըլլալով՝ քրիստոնեայ հոգեւորականութիւնը յարձակողական դեր չէր կրնար ունենալ :

Ինչո՞ւ ուրեմն արդիւնքը պատճառի տեղ ընդունիլ և շարունակել հին նախապաշարումներու պաշտպանութիւնը, որոնք այնքան աղիտարեր են եղեր այս տարաբազդ Երկրին ու Պետութեան :

Իսկ քրիստոնեայ հասարակութեանց կրօնական պետերը կամ պատրիարքները՝ երբեք ալ չեն միջամտեր երկրին վարչութեանը :

Այս ճրի ամբաստանութիւնը եթէ վերածենք իրականութեան, կը տեսնենք որ կատարուածը ո՛չ թէ վարչական միջամտութիւն է, այլ այն՝ որ Պատրիարքարանները, իբրև ներկայացուցիչ՝ իւրաքանչիւրը իր հասարակութեան վերաբերեալ զեղծումներու, ապօրինութեանց և հարստահարութեանց համար կայսերական կառավարութեան ներկայացուցած է բողոքներ, գանգառներ ու խնդրանքներ, որոնք ո՛չ մէկ արժէք չեն ունեցեր, ո՛չ մէկ հետեւանք չեն ունեցեր :

Ըսինք արդէն թէ քանի որ երկրին ազգարնակութիւնը բաժնուած է եզեր երկու խոշոր խտրականութեան՝ մահմետական և ո՛չ-մահմետականի, իրաւատէրի և ո՛չ-իրաւատէրի. քանի որ զեղծումներն ու հարստահարութիւնները ո՛չ թէ բացառիկ, անհատական դէպքեր են եղեր, այլ գրեթէ ընդհանուր, սիստեմաթիկ.—քնական հետեանքն էր անշուշտ որ իւրաքանչիւր հասարակութիւն օրկան մը ունենար՝ իր զանգատները, իր ցաւերն ու բողոքները ներկայացնող, և այդ օրկանը եղեր են քրիստոնեայ հասարակութեանց համար հոգեւոր պետերը կամ Պատրիարքարանները:

Ըսինք նոյնպէս՝ թէ մենք չէ՛ որ պիտի յաշտանէինք հոգեւորականութեան այդ դերը, որ աւելի մնասակար է եղեր քան օգտակար, բայց տիրապետող տարրը ո՛չ թէ դժգոհ՝ այլ գոհ ըլլալու է որ հոգեւորականութեան է մնացեր այդ դերը, որովհետեւ իրերու բնական բերմամբ, անխուսափելիօրէն, հասարակութեանց համար օրկան մը գոյութիւն պիտի ունենար, և եթէ գոյութիւն ունեցած չըլլար իսկ՝ պիտի ստեղծուէր: Այսպանացիք՝ իրբև մահմետական, Պատրիարք կամ հոգեւոր պետ չունէին, բայց ստեղծուեցան օրկաններ՝ որոնք հոգեւոր պետերու չը կրցած կատարածները կատարեցին: Յանցանքը ուրեմն ո՛չ քրիստոնէութեան և ո՛չ հոգեւորականութեանն է, այլ իրերու դրութեանը:

Տարտարազարար, հեղինակը այդ տեղ ալ կանգ չառներ, և անգամ մը սայթաքելէ յետոյ՝ կը գահավիժի ու աւելի վտանգաւոր թէզի կը դիմէ:

Անոր թէզով՝ տարրեր հասարակութիւններ կամ աւելի ճիշտը ազգեր ևս գոյութիւն պէտք չէ ունենային:

IX

Ինչպէս մէկ քանի անգամ ըսինք, ձէլալ Նուրի պէյ իր լայն մտքերով և բողոքական ազատասիրտի սատարձան ազատամիտ և անվերապահ քննադատ մը բլլովով հանդերձ՝ «Երիտասարդ Թուրք» դպրոցի վաղեմի նախագաղափարումով գերուած ու կաշկանդուած, բայց աւելի նրբացած շովէն մըն է :

Այս նախագաղափարման և շովինիզմի հետեւանքն է որ պատմական շարք մը պատկերներ վերիվայր կը չրջէ ու հակասական և անհիմն եզրակացութեանց կը հասնի :

Այդ նախագաղափարումներէն ու անհիմն եզրակացութիւններէն մէկն էր հպատակ քրիստոնեայ ազգութիւնները իբրև անկումի պատճառներէն մէկը նկատելը ։ Ըսի արդէն թէ ձէլալ Նուրի պէյ դեռ ասով ալ չի բաւականար և աւելի վտանգաւոր թէզի կը դիմէ, աւելի հեշտութեամբ ձուլումի հարցին անցնելու համար :

Դիմենք իր թէզին .

«Ամէն ազգ առանձին ազգութիւն մը կը կազմէ՝ որ Օսմանեան ընդհանուր իրաւագոյութեան մը մէջ (حقوق عمومية) տեղ չի կրնար ունենալ : Այս մասնաւոր ազգութիւններէն բարձր՝ ընդհանուր և պաշտօնական ազգութիւն մը կայ, այդ ալ Օսմանցիութիւնն է :» (Երես 74) :

Հեղինակին բացատրութեամբ, Օսմանցիութիւնը աւելի սարդ, աւելի որոշ է : Ան բացէ ի բաց կը յայտարարէ թէ՛ Օսմանցիութիւնը ազգութիւն մըն է, ընդհանուր, պաշտօնական ազգութիւն մը, այսինքն Թրքութիւնը՝ որուն ընդհանուր իրաւասիրութեան կամ իրաւագոյութեան մէջ մասնաւոր ազգութիւնները տեղ չեն կրնար ունենալ :

Այդ մենք վաղուց գիտէինք, բայց մեր գիտցածը կամ ըմբռնածը մեզի այսքան որոշ չէր ըսուած: Մեզի կ'ըսէին թէ Օսմանեցիութիւնը օսմանեան տարրերու կամ ազգերու միութիւնն է (احد امة) . իսկ միութիւնը մասերով, անդամներով կը կազմուի, և հետեւաբար իւրսքանչիւր մաս կամ անդամ միութեան մէջ տեղ կ'ունենայ, ուստի և ընդհանուր իրաւագիրութենէն կամ իրաւագոյութենէն ալ բաժին:

Հոս ձէյալ նուրի կը մերժէ ընդունիլ ինքնորոշ ազգերէ և անդամներէ բազկացած միութիւնը և միութեան անդամներու իրաւագոյութիւնը կամ ընդհանուր իրաւունքին բաժնետիրութիւնը:

Ի հարկէ, իրականութեան մէջ դէպի հպատակ ազգերը գոյութիւն ունեցած վերաբերմունքը մօտ մէկ դարէ ի վեր այդպէս է եղեր, բայց զոնէ տեսականապէս մեզի այդ ոգիով կամ այդքան յստակօրէն չէին պարզած:

Բայց, ճիշտ այդ մտայնութիւնն է որ զոնէ վերջին մէկ դարու յուզումներուն շարժառիթն է եղած. — մէկ կողմէն առ հասարակ օրէնքի ու արդարութեան յարգանքի բացակայութիւն և զուլում, և միւս կողմէն՝ քրիստոնեաներուն մասնատորապէս, և ս'չ-թուրք համարուածներուն ընդհարապէս, իրաւունքներէ զրկանքը մղեր են ակամայ ըմբատութեան ու անջատողականութեան:

Արդ, մարդ սաղչած կը մնայ թէ ինչպէս մեր ժամանակակից թարմ դէպքերն ու փաստերն անգամ բաւական չեն եղած այդ մտայնութիւնը ջնջելու:

Հեղինակին նրբամտութիւնը հօն կը կայանայ՝ որ այդ տողերէն անմիջապէս յետոյ կ'աւելցնէ. — «Ինչպէս անհատական ազատութիւնը ուրիշի անհատական ազատութիւնով սահմանաւորուած է, ազգային ազատու-

թիւնն ալ այդպէս է սահմանափակուած» : (Երես 74) : Այս սկզբունքը, սակայն, հակասութիւն կը կազմէ վերեւի թէզին : Երբ ազգերու ազատութիւնը կը սահմանաւորուի մէկ կամ միւս ազգին ազատութեամբը, բրնականարար թուրքն ալ այդ սահմանին մէջ կը մտնէ, քանի որ օսմանցիութեան մէջ «մասնաւոր ազգութիւններ իրաւագոյութեան տեղ չեն կրնար ունենալ» :

Ահա՛ թէ ինչպէս հեղինակը կը հաշտեցնէ այս ակներև հակասութիւնը : Որովհետև ըստ իր թէզին՝ օսմանցիութիւնը, իմա՛ թրքութիւնը, գերիվեր է քան բոլոր մասնաւոր ազգութիւնները և հետևաբար իրաւատիրութիւնը միայն անոր կը պատկանի . լոցսղ կրեխայի բերանը շաքար դնողի նման՝ «ձուլումի քաղաքականութիւնը չի՛ կրնար գործադրուիլ» ըսելով հանդերձ, հեղինակը կը շարունակէ . — «Օսմանեան կառավարութիւնը իր հովանաւորութեամբ ու պաշտպանութեամբ տակ կը պահէ մասնաւոր ազգերը և ձեռք կ'առնէ անոնց առաջադիմութեան ու կատարելագործման միջոցները . կրօնական առանձնաշնորհումները միմիայն զուտ կրօնի յատուկ ըլլալու պայմանով՝ կը պահուին, և հետևաբար Պատրիարքարաններու և Խախամարաններու կուրտութեան և քաղաքական առանձնաշնորհումները ջնջուած են» : (Երես 74) :

Ինչպէս կը տեսնուի, միջնադարեան «Էմանէթուլլահ», սասուածային աւանդ — ինչպէս կ'ըսէին քրիստոնեաները, իմա՛ կեանքները ջարդէ խնայելու համար — բռնութիւն տեղ բռնած են հովանաւորութիւն և պաշտպանութիւն բռնելու ֆորմուլները, ուրիշ խօսքով, ոչմահմետականները իրաւատէր չըլլալով՝ կուրտութեան կեանքէ ու ինքնազարգացման իրաւունքէ ալ կը զրկուին և կը վերածուին զուտ կրօնական համայնքներու, կրօնական հասարակութեանց, որոնք խնամակալութեան

ենթարկուած են : Հապա մահմետական այլ ազգերը . — հեղինակը անոնց մասին լուռ է : Լուռ է անկասկած խոհեմութեան համար, և սակայն ազգային զգացումով վերազարթնող մահմետական ազգերու հանդէպ՝ ինչպէս օրինակ, Ալպանացիներու հանդէպ, «Երիտասարդ Թուրքեր»ու ունեցած վերաբերումը աչքի առջև ունենալով՝ գիտենք արդէն որ անոնց ազգայնութիւնն ալ այն հարածանքին և այն անիրաւատիրութեան ենթարկուած է՝ ինչպէս քրիստոնեայ ազգերունը :

Ո՛չ թէ քսաներորդ . այլ միջին դարու մէջ անգամ, նոյնիսկ հեղինակին խոստովանած ու ձաղկած տուեալներով՝ այսպիսի տարամերժ միտք պաշտպանել անհնար էր :

Ի այց արդեօք հնարաւոր է այդպիսի ծրագիր մը իրագործել, որ պարզապէս ձուլումի քաղաքականութիւնն է : Այս հարցը վերլուծելէ առաջ, մենք վերստին կը դիմենք հեղինակի ձուլումի մասին ունեցած տեսութիւններուն :

— «Նախկին դարերուն մէջ՝ երկրի մը տիրող յաղթականները ձուլումի քաղաքականութեան հետեւելով, տիրապետուած երկրին ազգութիւնն ալ կը նուաճէին, ինչպէս Արաբները ըրած են . . . » (Երես 64) :

«Այդ կողմէն Թուրքերը այնքան ալ առաջ չեն կրցեր երթալ, անոնք «ազգային» զաղափարին ու տեսականին ուշադիր չեն եղեր : Ամէն բանէն առաջ «կրօն»ին են կարեւորութիւն տուեր, այդ պատճառով ալ թէև կրօնով ձուլեր են Արնաւուաններն ու Պօչնակները, բայց ազգային տեսակէտէն չեն ջանացեր զանոնք Թուրք մեծ ընտանիքին կցել :

«Արդեօք ինչո՞ւ առաջին Օսմանցիները ուրիշներու նման այս կէտին կարեւորութիւն չեն տուեր : Արդեօք

այն ժամանակները հնարաւոր չէր, թէ հնարաւոր էր՝ բայց անհոգ են դառնուած : Այս հարցումներուն վերջնականօրէն պատասխանել շատ դժուար է : Եթէ դիտենք որ լիակատար պատմական վկայութիւններ չունինք և եղած պատմութիւններն ալ միայն քաղաքական պատմութիւններ են, այն ատեն այս դժուարութիւնը աւելի ևս յայտնի կ'ըլլայ :» (Երես 65) :

«Սակայն, կարող ենք մտաւորապէս ըսել որ առաջին Օսմանցիները այս գործին մէջ թէ՛ զանցառու գրանուեցան և թէ՛ չգանուեցան, այն ժամանակներուն, ձուլումը թէ՛ կարելի էր և թէ՛ կարելի չէր . . . » : (Երես 65) :

« . . . Կը կարծեմ թէ անոնց նպատակը այնքան ալ շատ բովանդակալից չէր, ապագայով իրենց ուղեղը չէին յոգնեցնէր, անոնց համար է՛ն կարեւոր հարցը ներկան էր, տարարադղարար Օսմանցիներուն այս հոգեբանական սխալը կը տեսնենք ամէն բանի մէջ, Թուրքերը շատ տեղեր են նուաճեր, տիրացեր և շատ տեղերէ ետ են քաշուեր . . . այս պատճառով՝ մէկ տեղի մէջ մշտապէս մնալ, այն տեղը չէնցնելու և բարգաւաճեցընելու միտքը չին թուրք ընկերութեան մէջ այնքան ալ մուտք չէր գտած : Ասոր հակառակ կարծիքն ալ պաշտպանենք, Թուրքերը ձուլելու շատ աշխատանք թափեցին . . . : Թուրքերը իրենց հաւաքած մանուկները մահմետականացուցին, բոլոր Եւնիչէրիները — անկասկած առաջին Եւնիչէրիները — ձուլուած, թրքացած քրիստոնեաներ էին, անկասկած որ Յաղթող Օրխանի նպատակը ձուլումի քաղաքականութեան մէկ ձևի գործադրութիւնն էր » :

« Ինչուի մէջ ձուլում կը տեսնենք . . . : Ինչո՞ւ միայն լեզուական ձուլում է եղեր ու կրօնականը, ազգայինը

չէ՛ եղեր. — այս պարագաները քննել զժրագղարար մեր կարողութեան սահմանին մէջ չէ: Անասովի նահանգներուն մէջ բնակող, այն եւս ո՛չ թէ ցիր ու ցան, այլ խմբովին ապրող Յոյները իրենց լեզուն մոռցած, բոլորն ալ թուրքերէն կը խօսին ու կ'աղօթեն...»:

«Նայնպէս Հայերու մէկ կարեւոր մասը՝ միայն թուրքերէն կը խօսի. հայ լեզուն նոր կ'ընդհանրանայ. հնուց թուրքերէնը Հայերուն ընդհանուր լեզուն էր»: (*) (Երև 66-67):

Ինծի թող չեմ տար որ ըսեմ թէ հեղինակը պատմութեան տգէտ է և չի գիտեր որ պատմականօրէն թուրքերուն բացարձակապէս անհնար էր հետեւիլ ձուլումի քաղաքականութեան: Այդ ամէնը գիտէ և պիտի ցոյց տամ որ գիտէ: Բայց երևի, ինքն իսկ՝ որ ծագումով թուրք չէ, այդքան ուժեղ թրքանալուն նայելով, կ'ենթադրէ որ այն՝ ինչ որ սկիզբները կարելի չէր, այժմ կարելի է. և այդ ենթադրութիւնը գործադրութեան մէջ զննել տալու նախանձախնդրութեամբ՝ ձուլումի ծրագիրներ իսկ կ'առաջարկէ, ինչպէս առաջարկեց է 1911ին Իթիթիհասի Սալոնիկեան հռչակաւոր գոնկրէին: (Երև 74):

Ձուլումի քաղաքականութիւնը այդքան ուժեղ ու յանդուգն կերպով, նոյն իսկ ծրագրային առաջարկներով պաշտպանելով հանդերձ՝ երիտասարդ հրապարակագիրը պէտք կը զգայ դարձեալ զգուշութեանց գիմել, ըսելով, «Միջանկեալ կերպով սա ալ ըսենք որ մեր այս գլխի բովանդակութենէն չի հասկցուիր թէ մենք ձու-

(*) Արքան սխալ թրքախօս գաւառներ ունինք, բայց երբեք թուրքերէնը Հայուն ընդհանուր լեզուն չէ՛ եղեր: Գաւառներէն ոմանց թրքախօս ըլլալն ալ ո՛չ թէ հին, այլ վերջին մէկ երկու գարի գործ է:

լումի դէմ կամ թեր ենք. մենք այս տեղ դէպքերու ընթացքէն, պատմութենէն կը խօսինք. հարցը չենք քններ ու դատեր փիլիսոփոյական տեսակէտէ:» (Երես 67):

Աւելորդ և միամիտ բացատրութիւն . . . :

Փիլիսոփայական հայեցակէտը պատմութեան վրայ կը յենուի: Ընկերային հարցերու փիլիսոփայութիւնը պատմութենէն կը բղխի և անկէ անբաժան է, իսկ պատմութիւնը այնպէս չեն պատմեր, ինչպէս հեղինակը կ'ընէ: Պատմութեան չոր ու ցամաք դէպքերը պատմել այլ բան է, դատել, քննադատել ու վերլուծելը ուրիշ բան: Ինք կը քննադատէ՝ ու կը վերլուծէ, ո՛չ թէ կը պատմէ հաւատարիմ կերպով:

Յարգելի հեղինակը իր այս մեթոտովը՝

1.—Ամենամեծ ապերախտութիւնը կը գործէ Օսմանեան աշխարհակալներու նկատմամբ, որոնց ո՛չ միայն, իրենց ժամանակի համեմատութեամբ, ռազմական կարողութիւնովը, այլև մանաւանդ աշխարհավարութեան արտակարգ կարողութեամբն է որ հսկայ կայսրութիւնը հիմնուեր է:

2.—Բացարձակապէս կը հակասէ ինք իրեն: Իր վկայութիւնները անվիճելիօրէն կ'ապացուցանեն թէ աննըչան թւով եկւոր թուրքերուն անհնար էր ձուլել բազմամիլիոն բնիկ տարրը:

Ձուլումը կը կատարուի բիրտ և քաղաքակրթական ուժով միանգամայն: Ինչպէս եկւոր, աննչան թւով տարր մը պիտի ձուլէր բնիկը՝ քանի որ ինքը չունէր լեզու, գիր, գրականութիւն, արհեստ, արուեստ և այն ամէնը՝ ինչ որ քաղաքակրթութիւն կը կոչուի:

Ընդհակառակը, թուրքերը իրենք են խրացուցիչ տեղացիներուն լեզուն, գրականութիւնը, բայց ստեղծագործական սոցիալտանքի ո՛չ մէկ ընդունակութիւն ցոյց չեն տուեր:

3. — Այժմ աւելի ևս անհնար է ձուլում գործ դնել, որովհետև, բացի համաշխարհային քաղաքակրթական պայմաններէն, այսօրուայ թուրք ըսուածները այլևս նախկին զուտ արիւն Թուրքերը չեն, այլ բարեկրօնեան խառնուրդ մը, և հետևարար անրնական ու անկարող են թուրք մեծամասնութիւն մը ստեղծելով ձուլումը իրականացնել:

4. — Չունենալով քաղաքակրթութիւն և աշխատանք, հուրի ու սուրի միջոցով բռնի իտրամացումի և կոտորածներու գիւմուելէն, այսինքն ձուլումի քաղաքակա- նութիւնը գործ դրուել սկսելէն ի վեր է որ սկսեր է կայսրութեան անկումը, հետևարար ձուլումը ո՛չ թէ կայսրութեան պահպանութեան և բարդաւաճման՝ այլ անկման պատճառն է:

5. — Փամանակակից քաղաքակրթութեան բերմամբ՝ ո՛չ մէկ երկրի մէջ այլևս ձուլումը չի յաջողիր. առաւել ևս չի յաջողիր բնաւ Թուրքիոյ մէջ:

6. — Թուրքիան չի կրնար իբր ասպաղղային-զուտ իսլամ պետութիւն ապրիլ: Մահմետական ազգերը այլևս չեն հանդուրժեր յանուն կրօնի՝ հպատակի դերին մէջ մնալ, ուստի և Օսմանեան կայսրութեան վերածնունդը կախուած է ոչ թէ ձուլումէն, այլ իրաւաճառասարութենէն, անկախ կրօնէ՝ ազգերու կազմելիք համերաշխ միութենէն:

X.

Անցնինք այժմ յարգելի քննադատին՝ ձէլայ նուրի պէյի այն վկայութեանց, որոնք ամբողջովին կը հերքեն իր ձուլումի տեսութիւնները և կ'ապացուցանեն մեր մատնանշած պատմական ցուցմունքները:

I. Մենք արդէն սկիզբէն ևւեթ, դարձեալ հեղի-

նակին վկայութիւններով ապացուցինք որ Օսմ. կայս-
րութիւնը կազմուեր է Թուրք կամ Տաճիկ հարստու-
թեան՝ Օսմանեան Տան գերիշխանութեան տակ, ապազ-
գայնօրէն, ամէն ազգէ խառն և միմիայն մանմետական
կրօնով ու դանկլակրով միացած ու բազկացած բանակով .
ապացուցինք թէ բանակէն դուրս այդ խառնուրդին մաս
կազմող և աիրող տարր կամ թուրք ազգութիւն գո-
յութիւն չէ ունեցեր. թէ՛ այդ բանակն ալ ուտող, սպա-
սող, աւար տանող, իսկ բնիկ ժողովուրդը աշխատող
ու արդիւնաբերողն է եղեր. թէ՛ — մանմետական բանակի
թուրք փոքրամասնութիւնն ալ յետոյ զանազան ազգե-
րու նեա այնպիսի բազմազան արիւնտով խառնուրդ է կազ-
մեր՝ որուն նմանը ո՛չ մէկ ազգի մէջ տեղի չէ՛ ունեցեր :

Արդ, այս վկայութիւնները վերջիչելէ յետոյ՝ այլևս
միւսնայն վկայութիւնները կրկնել աւելորդ է :

Այժմ տեսնենք թէ այդ ֆիզիքական խառնուրդը
բարոյական և մտաւորական ի՛նչ ազդեցութիւն է կրեր :

«Թուրք աշխարհը շատ մը ազդեցութեանց տակ է
մնացած. ըստ կարգի՝ արաբ, պարսիկ, բիւզանդական,
եւրոպական (عربى) ազդեցութիւնները բաւական փոխած
են Թուրքերու էութիւնը : Ասկէ զատ, տակաւին մէկ
քանի այլ մանր ազդեցութիւններ մեր ուղն ու ծուծին
են խառնուած : Այս ազդեցութիւններով թուրք և օս-
մանցի ազգին ստացած վիճակը ըստ կարելւոյն նկարագ-
րելէ յետոյ՝ պիտի տեսնենք թէ մեր անկուսը որպիսի
ազդեցութիւններէ առաջ է եկած :» (Երես 9) :

«Արարները, Պարսիկները և Յոյները հնադարեան
քաղաքակրթութիւն, լայն ու ընդարձակ լեզու և գրա-
կանութիւն, կարգ ու սովորութիւններ, մանտանդ վա-
յելքի ու կենցաղավարութեան մէջ փորձառութիւններ
ունէին. տեսած, վայելած ազգեր էին :»

«Մինչդեռ, խեղճ թուրքերը Աստիլայի, ձինկիդ
Խանի և ուրիշ մեծ ու փոքր աւարառուներու Լաուէն
վազելով՝ Չինական Մովէն մինչև Եւրոպայի կեղրոնը
իր առջև եկած երկիրները նուաճելու և անոնց պարու-
նակած գանձերն ու հարստութիւնները աւարի առնելու
գրազած ըլլալով՝ Արարներու, Պարսիկներու և Յոյներու
նման՝ քաղաքակրթութեան, ուսման ու գիտութեան,
մինչև իսկ ուրախութեան ու վայելքի մէջ այնքան ալ
առաջ չէին գացեր ⁽¹⁾ : «Այս երեք պետութիւններուն
յաջորդելէ յետոյ, — արդէն քաղաքակրթութեան մէջ
առաջադէմ չըլլալով — այս երեք քաղաքակրթութեան ազ-
գերուն ազդեցութեան տակ չիյնալ, և իրենց լեզուն,
քաղաքակրթութիւնը, կառավարելու սխառմը և նրկա-
րազրի գօրեղութիւնը պահպանել՝ անկարելի է » :

«... Արար ազդեցութեան ունեցած աստիճանը
հասկնալու համար՝ բաւական է քիչ մը թուրք լեզուն
քննել. քննելէք Դոբանէն բերուած թուրք լեզուն և
այժմեայ թուրք լեզուն զիմազիժը, օսմանեան թուր-
քերէնը. արարերէնի մէջ թուրքերէնը պարզապէս խեղ-
դուած է, անհետացածի նման է... » :

«Նոյնպէս և արար հաւատալիքը, աւանդութիւն-
ները, սովորութիւնները, բարքերն ու վարքի ապակա-
նութիւնները վարակելով թուրքերը՝ այլափոխած է
թուրք ընկերութիւնը » :

«Արարական ազդեցութիւնը օսմանեան ընկերութեան
մեծամեծ օգուտներ տալով՝ հանդերձ՝ շատ մեծ մնաս է
տուած » :

(1) Սխալ է ըսել թէ առաջ չէին գացեր, երբե՛ք ալ չեն ու-
նեցեր գրականութիւն, քաղաքակրթութիւն, ուսմանք ու գի-
տութիւն : Ճշմարտութիւնը պէտք է խոստովանիլ իր ամբողջու-
թեամբ և կամ հակառակը պէտք է ապացուցանել Մ. Յ.

«...Եթէ սրարական անկման շրջանի վարքի ու բարքի ապականութիւնները վարակած չըլլային Թուրքերը, այսպէս վատասերուելով սրարական անկումը շարունակելու պատճառ չէին ըլլար :»

«...Իրանի վերջին շրջանին մէջ որքա՞ն անբովանդակ ճոռոմարանութիւն, ուռուցիկ բառեր, վատարարոյութիւն, բռնապետական սխառէմ և անպէտ մտքեր որ կային՝ ամբողջն ալ ժառանգ եղաւ թուրք ընկերութեան՝ որով անոր կազմին խանգարուելուն ալ պատճառ :»

«Ժամանակ էր եղեր որ Օսմանեան ընկերութեան մէջ միմիայն պարսկականին նմանողութիւնը կր կատարուէր : Ամէն բանի նմոյշը Իրանէն կուգար : Թուրք լեզուն որքան որ սրարական ազդեցութեան է ենթարկուած, թուրք գրականութիւնն ալ նոյնքան պարսիկ ազդեցութեան տակ է գանուեր . ճշմարտութիւնն ու զործողութիւնները կը խեղդուէին ուռուցիկ բառակոյտերու մէջ . . .»

«Ազնիւ բարքերէ աւելի վատթար վարքերն են որ ազգի մը, մանաւանդ մեծ անցեալ, քաղաքակրթութիւն չունեցող ազգին փոխանցուելով կը վարակին դայն . խեղճ Օսմանեան Թուրքերու կազմած ընկերութիւնն ալ այդ բաղդի ու փառքի շրջանին մէջ քայքայուած ընկերութեանց վատթար բարքերովը կ'ապականէր ու կը փտաէր :»

«Ասոր վրայ աւելցուցէք մէկ մըն ալ Բիւզանդական ազդեցութիւնը : Բիւզանդիոնը ապականութեան մարմնացումն էր :

«Հնտախտի միքրոպներու նման՝ բիւզանդական անկարգութիւնները մտան օսմանեան ընկերութեան մէջ :

«...Թուրքերը նազելի Բիւզանդիոնի հրապոյրներուն

ու ֆոխքուրքեան չկրգան դիմանալ և կամաց կամաց, ան-
զգայի կերպով անոր դիրկը նետուեցան: Ո՛չ թէ Թուր-
քերը Բիւզանդիոնը՝ այլ Բիւզանդիոնն էր որ նուաճեց
Թուրքերը»:

«Թուրք ընկերութիւնը՝ ինչպէս որ շարունակեր էր
արարական, պարսկական անկման բարքերն ու պայման-
ները, եղաւ նաև Բիւզանդական ապականութիւններուն
շարունակողը: Արարացած, պարսկացած և բիւզանդա-
կանացած Թուրքերը այլ ևս թրքութեան հետ քիչ ա-
ռնչութիւն ունէին» (Երես 24, 25, 26, 27, 28):

«Ներկայ դարու Թուրքերը ա՛նա այս երկարօրէն յիշ-
ուած ազգեցութիւններով բաղադրուած ու գոյացած
տարօրինակ տարր մը կը կազմեն» (Երես 29):

Հարկ կա՞յ աւելի պերճախօս վկայութեան՝ որով ան-
վիճելի է, որ ո՛չ միայն իսկական թուրք ազգութիւն գո-
յութիւն չունի, այլ և եղածն այժտատասեռուած է. զէթ եթէ
վատասեռուած այ չէ, զուրկ է նուաճած ազգերը ձուլելու
համար անհրաժեշտ եղող ազդակներէն. ո՛չ միայն անկարող
է ձուլելու՝ այլ՝ և ստիպուած է ինքը ձուլուելու, կամ աւելի
ճիշտը, վատասեռուելու և բարեկոնեան խառնուրդ մը
կազմելու:

II — III. — «Թուրքերը չի կրցան իրենց ազգային
անհատականութիւնը պահպանել: Թուրքերը թէև ար-
տաքուստ ամէն բան պահեցին, բայց արտաքին ազգե-
ցութիւնները միշտ օսմանեան ընկերութեան մէջ ներ-
գործած ըլլալով՝ անհատականութեան, ցեղային կորովի,
ատկունութեան, աւանդական յատկութիւններու շարու-
նակութեան և վաղեմի նկարագրի պահպանութեան նման
ազգի մը մշտապէս բարձրացնող հիմքը հանդիպեր են
բազմաթիւ արգելքներու և չեն կրցեր կազմաւորուիլ»:

«Այս դարուն մէջ, — ասկէ մէկ քանի դար առաջ

ևս, — ազգերու առաջդիմութիւնը կը ստեղծուէր ազգային հիմերու պահպանութեան շնորհիւ: Ազգ մը, դիտելով շատ մը կէտերէ, շարք մը յատկութեանց սերունդէ սերունդ ժառանգութեամբ կարող է բարձրանալ, այսինքն նախնիքներու հաւաքած շարք մը առանձնայատուկ առաքինութիւններն ու բարձր յատկութիւնները միեւնոյն ազգին մէջ մնալով՝ նոյն ազգին, նոյն բնկերութեան կատարելութեանը կը ծառայեն:»

«Իսկ օսմանեան Թուրքերու կազմած ազգութիւնը անօրինակ կերպով խառնուած բլլալով, անոր անդամներուն ժառանգական բոլոր առանձնայատկութիւնները, անհատականութիւնը արուած ու այժմեայ վիճակն է առաջացած:»

«Երեւան կուգայ որ ազգի մը ուրիշ ազգերու ազդեցութեան տակ մնալը ո՛չ թէ բարձրացման, այլ անկման պատճառ կը դառնայ: Թէև յետամնաց ազգերը ուրիշներու զարգացումէն օգտուելով կարող են առաջադիմել, բայց այդ նպատակին հասնելը պայմանաւորուած է ազգային անհատականութիւնը՝ շարուելուն հետ:» (Երես 30—31):

Ահա՛ այսքան յստակ, որոշ վկայութիւններէ յետոյ՝ աներեւակայելի կերպով յանկարծ ինքն իրեն կը հակասէ հեղինակը, հետեւեալ միտքը յայտնելով.

«... Ընդհատումի շրջան մը չանուցած և կամ նոր ազգերու և ժողովուրդներու հետ իրենց արիւնը չխառնող հին ազգերը դժուարութեամբ կը վերանորոգուին:»

«Արդ, ամբողջ Արևելքը մեծ յոգնութեան մը, թմրութեան մը մէջ կը գանուի: Այս ազգերուն մէջ եթէ կայ չյոգնած և մաքուր արիւնով ազգերու հետ միանալով իր արիւնը մաքրագործուած ազգ մը, ան ալ Թուրք ազգն է:» (Երես 15-16):

Ասոր հետ համեմատեցէք հիմա սա՛ տողերը . — «Ճարտնական պետութիւնն ու ազգը թէև ամբողջովին ընդունեց և բողոքական քաղաքակրթութիւնը, բայց իր անհատականութեան, ցեղին ու արիւնին մէջ պատուածքներ, խանգարումներ չէր ունեցեր, այդ պատճառով ալ երկնային Արեղակի կայսրութեան պետական մարդիկը յաջողեցան իրենց նախաձեռնութեան մէջ . . . » : (Երես 31) :

XI

IV. — Աշխարհի երեսը չկայ ազգ մը որ զուտ արիւն ըլլայ : Պատմութեան աւանդած կամ դեռ մթութեան մէջ անյայտ խառնուրդներով է որ կազմուեր են բոլոր ազգերը, և այդ խառնուրդները տեղի են ունեցեր մեծ ու փոքր ազգերու արշաւանքներով, բայց ո՛չ մէկ ազգ չկայ որ հեռուոր վայրերէ ճամբայ իյնալով ուրիշ հեռուոր վայրերու ժողովուրդները իր մէջ ձուլած և իր սեփական կնիքը դրած ըլլայ :

Բոլոր արշաւող ցեղերը իրենց տիրապետած ցեղերուն մէջ են լուծուեր, կամ առ առաւելն մէկնոր ազգութիւն են կազմեր :

Արեւմուտքի, ժամանակակից քաղաքակրթութեան կեդրոններու բոլոր երկիրնեցն ու ազգերը կրնն են Արեւելքի, մանաւանդ կեդրոնական Ասիայի խաշնարած ու թափառական մոնկոլ-թաթար ցեղերու արշաւանքները . պատմութեան ամենամեծ արշաւանքները անոնցն են եղեր, բայց անոնք բոլորն ալ ձուլուեր են՝ ստեղծելով քաղաքակրթական դեր կատարող ծանօթ ազգերը :

Հեղինակը՝ որ փաստերը տեսնելու և հաւաքելու մէջ սրատես ու բարեխիղճ է՝ անբացատրելի կերպով շեղումներ կատարելով, երբեմն արդիւնքը պատճառի տեղ առնելով՝ հակասութեանց մէջ կ'իյնայ և անբնական եզրակացութիւններու կը յանդի:

Ահա՛ օրինակ մը ևս:

«Եթէ թուրքերը՝ Եւրոպական աղգերու — Գուրանի ցեղերէն եղող Մաճառ ազգի — նման չեն կրցիր առաջադիմել, իսկական պատճառը դարձեալ արար, պարսիկ և բիւզանդական աղղեցութեանց մէջ պէտք է փնտռել»:
(Երես 30):

Ո՛չ, իրական պատճառը այն է որ Մաճառները թուրք, թաթար կամ մոնղոլ չի մնացին, այլ ձուլուելով՝ աշխատանքի, ստեղծագործութեան ընդունակ նոր ազգ մը կազմեցին, ինչ որ Օսմանցիները չի կրցան ընել, և դեռ կը յամառին գոյութիւն չունեցող թուրք ազգը մնալ:

Խոնարհարար սլտի խնդրէի յարգելի հեղինակէն, որ բարի բլլար աչքէ անցնելու Edmond Demolensի «Ինչպէս ճանապարհը կը ստեղծէ ընկերային ախար» կամ «Փողովուրդներու մեծ ճանապարհները» անուն երկնատոր աշխատութիւնը ու նոյն դպրոցին սրատականող այլ հեղինակներու պատմական վերլուծումները:

V. — Ո՛չ փրապետութեան սկիզբը, և ո՛չ ալ փրապետութենէ յետոյ՝ թուրքը բանակէն դուրս, երկրին մէջ ո՛չ թէ փոքրամասնութիւն՝ այլ հաշուի առնուելիք թիւ մը անգամ չէր ներկայացներ: Սեյճուքեան պետութեան անձուկ սահմաններէն՝ Գոնիայի և շրջակայ վայրերէն դուրս, մինչեւ մօտ երկու հարիւր սարի առաջ Անատոլուի մէջ թուրք տարր գոյութիւն չունէր:

Այս բացարձակ ճշմարտութեան, այս բացարձակ իրականութեան ականատես վկան է Ֆրանսացի ճանա-

պարհորդ Թափէրնիէն՝ որ ժէ-րդ դարուն մէջ երեք անգամ ճամբորդեր է ամբողջ Թուրքիան, Պարսկաստանը և Հնդկաստանը, և որուն ժէ-րդ դարուն վերջին քառորդին մէջ հրատարակած պատմութեան վկայութեամբ՝ 1655ին Թուրքառէն սկսած մինչև Թուրքիդ, այդ ահագին տարածութեան վրայ, 20% միայն մահմետական կը գանուէր :

Ուստի, գոյութիւն չունեցող տարր մը ո՛չ կ'արարանար, ո՛չ կը պարսկանար և ո՛չ ալ կը յունականանար : Հետեւաբար, հեղինակին այդ կարգի վկայութիւններն ուսեսութիւններն անգամ պատմական հիմ չունին :

Այսօր ահագին մեծամասնութիւն մը մահմետական կայ վերոյիշեալ շրջանին մէջ : Կարո՞ղ ենք ըսել որ անոնք Թուրք են, քանի որ 200 տարի առաջ անոնք գոյութիւն իսկ չունէին : Կարո՞ղ ենք ըսել որ անոնք Թրքութեան մէջ ձուլուած տարրեր են, քանի որ ձուլող տարր գոյութիւն չունէր : — Իհարկէ ո՛չ, հակառակը ապացուցանող գոնէ մէկ հասիկ փաստ հարկաւոր է, ինչ որ չկայ :

Իրականութիւնն այն է՝ որ հուրի և սուրի միջոցով մահմետականացածներ են անոնք, և ո՛չ Թուրքեր կամ Թրքացածներ :

Այդ մահմետականացումները վերջին երկու հարիւր տարիներու գործն են, և կայսրութեան անկումն ալ այդ փուականներէն սկսած է :

Այս իրականութենէն ի՞նչ կը հետեւի. — Անվիճելի կերպով կը հետեւի որ՝ ցորչափ բնիկ ազգերն ու անոնց կրօնը հալածանքի չէին ենթարկուած, ցորչափ կոտորածները չէին կազմեր պետական բարձրագոյն շահի ըմբռնումը և կ'օգտագործուէին բնիկ ազգերուն աշխատանքը, — ո՛չ խոտլութիւն և ո՛չ ալ միջամտութիւններ

գոյութիւն ունէին և կայսրութիւնն ալ իր ուժին ու փառքին զազաթնակէտին վրայ էր կանգնած :

Բայց, անմիջապէս որ Օսմանեան Տան հանճարեղ ու փառապանծ աշխարհակալներու քաղաքականութիւնը շարունակողներ չգանուեցան, անմիջապէս որ կրօնի ու ազգութեան հալածանքը սկսաւ, — կայսրութեան անկման սկիզբն ալ ծայր տուաւ :

Այդ անկումը հիմնաւորող շարաքաստիկ մտայնութիւնն ու նախապաշարումն է որ մինչև այսօր ալ կը շարունակէ և թոյլ չի տար խիական վերանորոգումի անխախտ հիմերը գնելու :

Ի զուր յարգելի հեղինակը կը կարծէ որ լեզուն ու կրօնը ազգութեան յատկանիշեր են : Լեզուն ու կրօնը միայնակ չեն կարող ազգային ազգակներ ըլլալ : Ապացոյց կ'ուզէք : Պելժիգացիներու ստուար մեծամասնութիւնը ֆրանսասիսու և կաթոլիկ է, բայց չընդունիր որ Ծրանսացի է : Անգլիխիսու ու բողոքական Սկոտլանացիներ բն' ք չընդունիր որ անգլիացի է, իսկ ֆրանսասիսու ժընէվի քանթոնը գերմանասիսու Պերնի քանթոնին հետ միասին Զուիցերիացի է, ինչպէս և Փրուսիացի գերմանն ու Պալարիացի գերմանը Գերմանացի ըլլալով հանգերձ իւրաքանչիւրը Փրուսիացի և Պալարիացի ելն . է, ու երբն' ք ո՛չ մէկը չի՛ զո՛նր իր սեփական ազգայնութիւնը միւսին :

Իմաստութիւնը, զիտականը և հայրենասիրականը ո՛չ թէ բունազգութիկ ազգութիւններ ստեղծելուն, կրօնի, լեզուի և ըն . երևոյթներէն օգտուելու ընդունայն աշխատանքին մէջն է, այլ զանոնք միացնելուն, անոնց մէջ ընդհանուր շահեր ստեղծելուն մէջ է :

VI — Ժամանակակից քաղաքակրթութիւնը, կուլտուրական զարգացումը և գոյութեան իրաւունքի կա-

տարած նուաճումները արդէն հասեր են այն աստիճանին՝ որ այլևս ո՛չ մէկ ձուլում չի կատարուիր և չի կրնար կատարուիլ ո՛չ մէկ երկրի մէջ և ո՛չ մէկ փոքր տարրի կողմէ :

Հեղինակը ինքն է արդէն Աւստրիայով տասր օրինակը սուտղը, բայց կը սխալի միայն անով՝ որ կը կարծէ թէ Աւստրիայի դրութիւնը կը տարբերի Թուրքիայէն, որովհետև այնտեղ հպատակ ազգերէն իւրաքանչիւրը իր սեփական միջավայրին մէջ միատարր կ'ապրի : Այնտեղ ալ կան այն խառնուրդները՝ ինչպէս մեր մէջ կը ներկայացնէր Մակեդոնիան, Բայց և այնպէս, Թուրքիոյ մէջ ալ բոլոր ազգերը իրենց սեփական միջավայրն ունին՝ ինչպէս Սուրիան, Պաղեստինը, Եւմէնը, Միջագետքը, Հայաստանը, Քիւրախտանը, ևլն . :

Կը կրկնենք, որ ո՛չ լեզուն և ոչ ալ կրօնը չի կրնար այլևս ձուլումի ազդակ ըլլալ : Նոյն իսկ կուլտուրական գերազանցութիւնը չի կրնար այդ դերը կատարել : Եւ շա՛տ կը սխալի հեղինակը օրինակ ցոյց տալով Ռուսաստանը, ուր հակառակ պետութեան ձևք առած միջոցներուն, ազգային գիտակցութիւնները կը շեշտուին աւելի ուժեղ կերպով : Ռուսական կրթութեան ազդեցութեամբ ազգային լեզուն կորանցուցած (եթէ ցանցաթուով գանուին) Հայը, Թաթարը, Լեհացին, Հրէան, Վրացին և բոլոր հպատակ ազգերը՝ շատ աւելի ուժեղ կերպով ազգային ինքնազխտակցութեան են հասած քան ոչ-ինտելիգենսը :

Նոյն երևուոյթը նաև բոլոր երկիրներու գաղութներուն մէջ, որոնք, օրինակ, Ֆրանսայի, Անգլիայի քաղաքակրթութեան ազդեցութիւնը կը կրեն :

Ո՛չ միայն գաղութներուն՝ այլ և Մայր հայրենիքներուն մէջ, միևնոյն ազգի անտեսական, կուլտուրա-

կան պայմաններով տարրերու ող երկրամասերուն և ժողովուրդներուն մէջ նոյն երեւոյթն է՝ ինչպէս Ռուսաստանի Մօլոտօսիան, Փոքր Ռուսաստանցիները։ Այսպէս քաղմաթիւ օրինակներ կրնանք թուել։

Ժամանակակից քաղաքակրթութեան ստեղծած հասանքն է կեդրոնացում և սպակեդրոնացում միաժամանակ, մէկը միւսէն անբաժան։

Եւ այս ապացոյցը Թուրքիոյ մէջ՝ ո՛չ մէկ երկրի պատմութեան մէջ չաւանուած փայլուն կերպով մը տրբուեցաւ։ Պէտք չէ մոռնալ 1909 մարտի 31էն յետոյ և առաջ բոլոր հպատակ ազգերու անվերապահօրէն և խանդավառութեամբ Սահմանադրական Թուրքիոյ հանդէպ ցոյց տուած դուրդուրանքը։ Եւ երբ մարտ 31ի պետական հարուածէն յետոյ՝ ազատարար բանակը սիւտի արչաւէր մայրաքաղաքին վրայ, բոլոր Յեղափոխական Կուսակցութիւնները զիրենք զրին բանակին տրբամադրութեան տակ։ Ա՛րդ, իրենց արիւնով Սահմանադրական Թուրքիան պաշտպանելու վազող ազգերուն ու կամաւորներուն հանդէպ կեդրոնախոյսի կամ անջատողականի կասկածն ունենալ՝ աւելի քան ոճիր էր։

Բայց Երիտասարդ Թուրքիան իր ձուլումի քաղաքականութեամբ խրոչեցուց, վանեց և ապա հալածեց Հայրենիքի և Օսմանեան Սահմանադրական Պետութեան անկեղծ ու անձնուէր տարրերը։

Ո՞վ է մեղաւորը։

Պատմութիւնը վերլուծողը պէտք է որ այս ճշմարտութիւնը դուրս բերէ և ազգայնակութեան բոլոր խաւերուն մէջ տարածէ ու ժողովրդականացնէ։

Գիտակից հայրենասէրներու՝ որպիսին է յարգելի հեղինակը, նուիրական պարտականութիւնն է թոյլ չտալ համանման նոր սխալներ, անդարմանելի սխալներ։

Համայնքներու, ցեղերու, սո՛ններու և ազգերու բնկերային ու քաղաքական կազմը տարրերու եր է պատմութեան ընթացքին համաձայն՝ ժամանակի, միջավայրի, կուլտուրայի, տնտեսական պայմաններու և ցեղային առանձնայատու թեանց։ Երկար կ'ըլլար այս մասին պատմական բազմաթիւ վկայութիւններ ներկայացնել, և կը կարծեմ թէ հակառակը սնդոզ ալ չկայ։

Հետևարար այն՝ ինչ որ ժԲ. և ժՊ. դարերուն հնարատոր եղաւ Օսմանեան Հարստութեան բանակներ կազմել կրօնի գրօշին տակ՝ և խլամ պետութիւն մը հիմնել, անհնար է այլ ևս նոյն պայմաններով պետութիւն պահպանել։

Արդէն ո՛չ մէկ ժամանակ, անցեալին և ներկային մէջ կրօնը չէ՛ եղեր միադաւան բոլոր ազգերու համար քաղաքական բնի հանուր ընկերութիւն մը կազմող օգակը։ Վկայ մահմետական բազմաթիւ պետութեանց միաժամանակ գոյութիւնը և իրարու դէմ արշաւանքներն ու նուաճողական պատերազմները, ինչպէս՝ Օսմանցիք Արարիոյ, Սէլճուքներու և Պարսիկներու դէմ։

Մենք արդէն տեսանք որ Թուրքիոյ մէջ քրիստոնեաներէն աւելի՝ մահմետական ազգերն են եղեր դժուարանըւած ու կեղբոնախոյս, և հետևարար առ երևոյթս մահմետական պետութիւն ըստածը իր նրկարժամանակեայ գոյութեան կենսական հիւթը միշտ և առաւելապէս ստացեր է քրիստոնեայ տարրերէն։

Եթէ արարական, պարսկական ու բիզանդական քաղաքակրթութիւնները իրենց վատ ազդեցութիւնն ունեցեր են, քրիստոնեայ տարրերը նուիրեր են նաև հեղինակին այնքա՛ն անաշատօրէն նկարագրած վատասերման ազդեցութիւններուն հակառակ՝ վերանորոգչական ամէն նախաձեռնութիւն և ծառայութիւն։

Եթէ թուրք լիզուն և գրականութիւնը առաջադի-
մական է վոյլուստիոնի ենթարկուիք են, եթէ սպազրական
զիր և սպազրութիւն հաստատուեր են, եթէ վարչական
որոշ փոփոխութիւններ ներմուծուիք են, եթէ սրտշ օրէ-
նագրութիւններ մուսք գտեր են թուրքերու մէջ, ա-
նոնք բոլորը կատարուիք են Հայու և Յոյնի նախաձեռ-
նութիւններով: Եթէ մահմետական կամ թուրք նշանա-
ւոր գրողներ, հեղինակներ և գործիչներ յայտնուիք են՝
անսնցմէ առաջ զաղափարը յղացող, աշխատանք գործ
դնող, հիմունքները հաստատող և անսնց ետեւ պահ-
ուողները եզեր են քրիստոնեայ ազգերէն անհատներ:

Ճէլալ Նուրի պէյ իր աշխատութեան մէջ տեղ մը
օտար հեղինակներու կողքին կը յիշէ لای ری - مے, Սրբբի
փաշան կրեատական ծագում ունէր, յունական գրական
նութեան ծանօթ էր, իսկ Կրետացին մահմետական է և
ո՛չ թէ թուրք: Այդպիսի բացառիկ խոչոր դէմքերու
ծագումը՝ ստացած գաղափարներուն և կրթութեան մի-
ջավայրը քննելով՝ աւելի շուտ կարելի է համոզում գո-
յացնել քրիստոնեաներու մատուցած ծառայութեան շա-
փին: Քրիստոնեայ բնելով մենք կրօնը ակնարկել չենք
ուզեր բնաւ: Ընդհակառակը, աշխարհիկ կեանքը կրօ-
նէն ու կրօնականէն անջատելու մասին յարգելի հեղի-
նակին պաշտպանած կարծիքները վաղուց է որ մենք
պաշտպաներ ենք:

Այնու ամենայնիւ, այդ կողմէն հեղինակին առա-
ջադէմ մտքերուն ծանօթացնելու համար մեր բնթերցող-
ները, վերատին կը դիմենք իր իսկ հատուածներուն:

«Արարներու տիրապետութեան շրջանէն յետոյ, մահ-
մետական հոգեւորականութիւնը կրօնը շատ տարօրինակ
կերպով է ըմբռներ: Կրօնը ամէն բան սրբաբակեր է:
Աշխարհային, մասնաւոր գործառնութիւններն անգամ

կրօնի ամենախիստ ազդեցութեան տակ են ենթարկուեր :» (Երես 96) :

«Իւրամի անկման ամենամեծ պատճառներէն մէկը եղող աշխարհային և հոգեւորական խնդիրներու իրարմէ բաժնուած չլլալը, և մարգարէի սրբախօս պատգամներուն հիման վրայ այս երկու տեսակ օրէնքները իրարմէ բաժնել կարելի չլլալը—մենք երկարօրէն բացատրած ենք Իսլամու-եան միջ Վերակոտորութեան «Անհրամեշտութիւնը» (عدم جوب و جدج) գործին մէջ :

«Ինչպէս կրօնքի սովորական գործառնութեանց վերաբերմամբ՝ նոյնպէս և կրօնային հաւատալիքներու մէջ կարգ մը տգէտներ հեռացած են իսլամութեան հիմնական փոխտոխայութենէն : Իսլամութիւնը բեթօրմի նպատակով երեւան եկած ըլլալով հանդերձ՝ անոր պահպանողականութեան հակառակ եղող բարձր ոգին դժբաղտարար մտացութեան տրուած է :»

«... Իւրէման (հոգեւորականութիւնը) ծայրահեղ պահպանողական ուղի է հետեւեր, մեկնութեան բոլոր ճամբաները փակեր է, ազատ մտքով մտածողները խրատօրէն պատժեր է, որուն իրրեւ հետեւանք առաջ է եկեր կրօնական ծանրալուծ բռնապետութիւն... :» (Երես 97, 98) :

«Մեր հոգեւորականութեան՝ մօտ հազար տարի երեւան բերած շնորհը միայն մեծ մեկնարանները օրինակելն է եղեր, ո՛չ իրենք նոր մեկնութիւններ յաջողեր են տալ, և ո՛չ ալ ուրիշներուն թող են տուեր ազատ մտքի սահմաններուն մէջ մտածել, և ասոր շնորհիւ՝ մտքերը թմբեր են, և ուղեղի մեքենան այլևս բանազարութեամբ և փոխտոխայութեամբ զբաղելու անկարող աստիճանի մը վրայ ծիւրեր է :» (Երես 99) :

«Ասպարէզը երբ տգէտներուն և իմաստակներուն

մնալով՝ մտածելու կարողութիւն չի գտնուիր, բնականաբար աւանդութիւններն ալ չափազանց կարեւորութիւն կը ստանան, և մտածելու անկարողները ամէն բանի կը հաւատան :» (Երես 100) :

« . . . Եւ այս պատճառով՝ աշխարհային գործերը հանդերձեակի խնդիրներէն չբաժնուելով, ազգը մնացեր է սոսկադի անշարժութեան ու անկուսի մէջ » : (Երես 100) :

« Մաքի գերութիւն, խղճի վերաբերեալ հարցերը աշխարհային օրէնքներէ ու ընկերային յարաբերական հարցերէ չբաժնել, — ահա այս է մեր անկման սովորական ծնողը : Աշխարհի մէջ ամէն բան ազատութեան յաղթանակովը կը ստեղծուի, մանաւանդ մաքերու ազատութիւնը զբաւելով՝ ո՛չ մէկ վերանորոգութիւն չի կրնար գոյանալ :» (Երես 102) :

Երկար կ'ըլլար այս կարգի մէջ բերումներ ընելը : Հնդկնակին աշխատութեան ամենակարեւոր գլուխն է՝ ուր ազատութեան և ազատամտութեան տենչը իր ամբողջ խոյանքով կը բարձրանայ և որուն համար շնորհատրել միայն կարելի է գինքը : Բայց, չենք կարող գիտել շատ սր բոյոր կրօնական հիմնարկութեանց, մինչև իսկ բոյոր կրօնական ու քաղաքական տիրող քաստաներու մէջ ալ պահպանողականութիւնը, անշարժութիւնը, յետադիմակրօնութիւնը, քննադատութեան արգելումը և մաքի բռնութիւնն ու սարկութիւնը անբաժանօրէն միշտ գոյութիւն են ունեցեր : Քրիստոնեայ և մանաւանդ Եւրոպայի կաթողիկոս - քրիստոնեայ հոգևորականութիւնը աւելի ներողամիտ կամ նուազ կաշկանդող ու նախապաշարեալ չէ եղեր քան իսլամականը :

Բայց Եւրոպայի կամ առհասարակ ոչ - մահմետական ազգերու ինկլիլիզնիս ըսուած մտաւորականութեան մէջ ուժեղ շարժում, ըմբոստացում է առաջ եկեր սարք-

կամտութեան ու բռնամտութեան դէմ, քաղաքական իշխանութիւնը կոխ է մղեր Եկեղեցիի իշխանութեան դէմ և յաղթանակելով ստեղծեր է ներկայ քաղաքակրթութիւնը :

Թուրքիոյ դժբաղդութիւնը միայն անոր մէջ չէ որ կրօնական քաստայի տղիտութիւնն ու նախապաշարումները գոյութիւն են ունեցեր կամ հալածուեր է մաքի ազատութիւնը, երկրայինն ու երկնայինը իրարմէ բաժնելու գաղափարը չէ ունեցեր մահմետական հոգեւորականութիւնը, — այլ ամենամեծ դժբաղդութիւնը անոր մէջ է՝ որ թուրք բտուած տարրին մտաւորականութիւնը երբեք չէ բմբոսաացի այդ բռնութեան և ստրկութեան դէմ, քաղաքական իշխանութեան ու կրօնական քաստայի միջև կոխ չէ բացուեր ու մինչև այսօր ալ իր բոլոր քաղաքական աքթերն ու վարդապետութիւնները կրօնով կը պաշտպանէ, ինչպէս որ կը շարունակէ քաղաքական կեանքը վերանորոգել խալիփական անունով :

Ամենամեծ դժբաղդութիւնը անոր մէջ է նաև՝ որ թուրք բտուած մտաւորականութեան ամենաառաջադէմ համարուածն անգամ, ինչպէս ինքը ձէկլալ Նուրի պէյ, կը շարունակէ պաշտպանել հին աւանդութիւնը, հին նախապաշարումը և չը ճանչնար բնիկ սո-մահմետական տարրերը, կամ աւելի ճիշտը՝ չի՛ բնդունիր սո-թուրքերը գործնականապէս հաւատար քաղաքացիներ, օսմանեան բնկերութեան բաղադրիչներ :

Եւ ասիկա անշուշտ հետեւանք է այն դարուոր մաքի կաշկանդումներուն, ժառանգական աւանդութիւններուն, արալիլիզմին, որանցմէ ազատուիլ հնչալ չէ : Սերունդներ հարկաւոր են, իսկ ժամանակը և չրջապատող պայմանները չեն սպասեր և մեզ հանգիստ չեն թողորաստար համար է որ մենք կը դողանք ու սարսափով կը

դիտենք նաև վաղուան հաւանական փորձութիւնները՝ եթէ այժմէն զերմարդկային ճեղ գործ չդրուի արմատական դարմանին դիմելու և մինչև վերջին օրերը կատարուող սխալները չկրկնելու :

Կոյրերն անգամ կը տեսնեն որ այս երկրին մէջ մահամետական ազգերու ազգայնութեան հարցն ալ սեղանի վրայ դրուած է : Այլևս մահամետականութիւնը օսմանեան պետական կեանքը պահել անկարող է : Զուլում անհնար է, իսկ նոր կոտորածներ, — սա արդէն կ'ըլլայ անխուսափելիօրէն վերջնական ճարճատումը :

Միակ փրկութիւնը, միակ պատմական անհրաժեշտութիւնը, միակ զիանականն է՝ հրաժարիլ օսմանցիութիւնը թրքութեան իմաստով բմբռնելէ և հիմնուիլ, անկախ կրօնի, միմիայն ազգութեանց վրայ :

Ո՛չ թէ պէտք է ըսել որ «մասնուոր ազգութիւններ տեղ չունին օսմանեան իրաւագոյտութեան մէջ», այլ ընդհակառակը, անկեղծ ու միակ նշանաբանը պէտք է ըլլայ սա՛ թէ՛ Օսմանեան պետքեան կամ օսմանեան ֆալսափան ընկերութեան բաղադրիչ իւրաքանչիւր ազգ իր տեղն ունի կայսրութեան ընդհանուր իրաւակարգին, ու իրաւասիրութեան միջ, և քի անկախ կրօնէ՛ իւրաքանչիւր ազգ իր գոյութեան իրաւունքն ունի և իւրաքանչիւր իր գոյութեան շահերով շարկապուած՝ կը կազմէ օսմանեան ընդհանուր իրաւագոյութիւնը :

Եթէ հեղեմակին թուած դարաւոր սարակաժողութիւնը ժառանգականօրէն գոյութիւն ունի, եթէ անոր թուած անկման բոլոր յիշուած պատճառները արդէն թրքական ժառանգական ազգային յատկանիչ կը կազմեն, եթէ այդ բոլորը ջնջելու, նկարագիրները ազնուացնելու, ազատ մաքի ու աշխատանքի սերունդ հասցնելու համար՝ վերստին սերունդներ հարկաւոր են, եթէ ոչ-թուրք տար-

բերը իրենց անիրաւատիրութեան և այլ պատճառներու բերմունքով զերծ են անկման շատ մը ազդակներէն կամ նկարագրային յատկանիշներէն, — կայսրութեան վերականգնումին, թրքական տիրապետութեան գերազոյն շահերը կը պահանջեն օգտագործել ո՛չ-թուրք ազգերու այդ յատկութիւնները, իսկ օգտագործելու միակ նաւարար պայմանն է՝ անոնց գոյութեան իրաւունքը ընդունիլ, զանոնք ևս իրաւտէր դարձնել և ձուլումի քաղաքանութենէ հրաժարիլ :

Համապետական ընդհանուր շահերով առգորուած մեր հայրենատիրական դաւանանքն է որ մեզ թեկադրած է անվերապահօրէն հրապարակ գնել մեր քննադատութիւնները : Կը սիրենք յուսալ որ ճէլալ նուրի պէյերը իրենց պաշտօնանած մտքի ազատութեամբ կը լսեն ճշմարտութեան ձայնը և կը լրացնեն «Երիտասարդ թուրք դպրոցի» բարեչըումը : «Անկման պատմութեան» աշխատանքով առաջին քայլը առնուած է : Յուսանք որ քաջութիւնը չի պակսիր նոր քայլ մը ևս առնելու և մեզի նեա ձեռք ձեռքի սալով՝ իրականացնելու վերանորոգումը :

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԿՐԵՏԱՑԻ ՃԷԼԱԼ ՆՈՒՐԻ ՊԷՅԻՆ

Թուրքիոյ մահմետական կամ մահմետական-թուրք պաշտօնէութիւնն ու մատարականութիւնը սովոր չեն իրենց ընտանեկան անունը իրենց անձնական անունին կցելով ստորագրելու: Հազուադէպ է որ իրենց ընտանեկան անուններով ծանօթ լինին: Ընտանեկան ծագումի որոշիչ անուններուն զանցառութիւնը արդէն այս երկրին պատմութեան վերլուծման համար չափազանց ոչազբաւ երեւոյթ մըն է: Ինծի կը թուի որ անցեալի բազմաթիւ սրբազրութեան կարօտ աւանդութեանց մէջ այս ալ իր առաջնակարգ անհրաժեշտութիւնը ունի:

Եթէ չեմ սխալիր, ձեր աշխատութիւններէն մէկուն մէջ յիշած էք արալիզմի ունեցած ազդեցութիւնը անհատական ու հասարակական նկարագրի, ուստի և կեանքի վրայ:

Տարորդելով ձեր Կրետացի ըլլալը, ինծի կը թուի որ ձեր արժանիքներէն ևւ ընդունակութիւններէն շատ բան կը պարտիք ձեր կրետական ծագումին: Ահրողջ պատմական քաղաքակրթութեան մը, ստեղծագործ անցեալի մը ներարկումն է որ որ արալիզմով անցած է ձեր մէջ:

Այս մտածումներէն թեղադրուած՝ թող տուի ինծի ձեզի գիմելու Կրետացի յատկորոշումով, որուն համար ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ:

Իբր փոխկազմի մէջ ըսուած՝ այս բացատրութենէն

յետոյ, կ'անցնիմ ուղղակի այն նիւթին և նպատակին՝ որուն համար ձեզի դիմել նախամեծար համարեցի :

Թէև քիչ մը ուշ՝ բայց արդէն լարուած հետաքրքրութեամբ և ուշադրութեամբ կը կարդամ ձեր հրատարակած չարք մը աշխատութիւնները : Արդէն թուրքերէն լաւագոյն հրատարակութեանց վաթսուն առ հարիւր ընթերցողները Հայ երիտասարդութիւնը, Հայ մշտաւարականութիւնը և ուսանողութիւնն են :

Դուք դիտեր էք անշուշտ որ ձեր այնքա՛ն արժէքաւոր մտքի արտադրութիւնները ուշադրութեան շանուհեան թուրք մամուլի կողմէն :

Իրաւունքի ու արդարութեան ձեր ձգտումները, պատմական ընդարձակ ծանօթութիւնները, մարտիոզ ու խարազանոզ անվերապա՛ շննադատութիւնները սրքան նորութիւն են մեզի համար, մեզի՝ որ կարօտն ունինք մեր չրջապատի մէջ յոյսի և յոյսի ծագումին, արդարութեան և իրաւունքի պաշտպանութեան ձայնակիցներու :

Ձեր երկերով դուք կը ներշնչէք մեզի այդ յոյսը : Այդ պատճառով ալ, Ազատամարտի ընթերցողներուն ներկայացուցի ձեր Թարիխը Թեհեմինյարը Օսմանիէն, իր ընդհանուր և շիմնական գիծերով : Աշխատեցայ պատկերացնել այն հակասութիւնները որոնք սպրդեր էին ձեր հարուստ անտութեանց մէջ, և կարծեցի ձեր նախաձեռնութեան նպատակով ծառայութիւն մը մատուցած ըլլալ՝ շննադատելով այն եզրակացութիւնները, որոնք չէին ըզխեր ձեր պատմական անտութիւններէն :

Դժբաղդութիւնը անոր մէջն է որ թէև մենք քայլ առ քայլ կը հետևինք թուրք մտայնութեան և հասարակական շարժման կիւղններուն, մենք կը մնանք ձեզի համար անձանօթներ, գուցէ աւելի քան օտարներ, որովհետև դուք մեր լեզուով և մեր հրատարակութիւններով չէք զբաղիր ու չէք կարգար :

Իբր անհատ, իբր քաղաքացի և իբր ազգ՝ ընդհանուր Հայրենիքի մը բաղադրիչ մասնիկներն ենք, և բնականօրէն կոչուած՝ նոյն Հայրենիքին ծառայելու, գործակցելու, և ասոր համար ալ իրարու լաւ ծանօթանալու և դիրար բժրոնելու՝ առանց լեզուական խորութեան: Լեզուն միջոց է և ո՛չ նպատակ:

Նոր վերջացուցի ձեր Քեհնի ևօգրաի ևսագարլսան հուզուղը յիսկի ու անոր կցուած Իսրաւսա վիւճուպր քհնհսխւսը: Այդ գրքին մէջ ձեր խաղաղասէրի իւրացուցած ու պաշտպանած մտքերը, պետութեանց նուաճողական կամ գաղթային ևնկիւրիալիսսակրան քաղաքականութեան վերաբերմամբ յննադատութիւնները՝ բտասցուած ըլլալով ժամանակակից աւաջլնիթաց քաղաքակրթութեան, դեմօկրատական-ընկերվարական աշխարհահայեցողութիւններէն, մեր որդեգրած ընկերվարական վարդապետութեան պատմաիլիստիայութեանէն, վաղո՛ւց արդէն պաշտպանուեր են մեր կուսակցական գրականութիւնով և Ազատաւստի էջերով:

Բայց, բարի եղէք ինծի թոյլ տալու որ ձեզի դիտել տամ թէ՛ միայն միջազգային օրէնքները չեն որ արդարութեան և իրաւունքի դեմօկրատական ըմբռնումներէն հեռի են:

Միայն Եւրոպական կամ Արեւմտեան մեծ տէրութիւնները չեն որ երկու շափ և երկու կշիռ ունին՝ թէ՛ իրարու և թէ՛ օտարներու հանդէպ: Միայն անոնք չեն որ խարութիւններ կը դնեն թոյլերու և ուժեղներու վերաբերմամբ. ու այդ խարութիւնները իրենց աստիճաններով կը տարբերին իւրաքանչիւր պետութենէն և ազգէն մինչև անհատը:

Այդ խարութիւնները գոյութիւն ունին իւրաքանչիւր պետութեան մէջ տիրող տարրին և ցեղին չպատկանող քաղաքացիներու և ազգերու վերաբերմամբ:

Եւ դուք լաւ գիտէք որ այդ խտրութիւնները պայմանաւորուած են և կը տարբերին իւրաքանչիւր միջավայրի ըմբռնութեանով և ըստ ոյժերու փոխյարաբերութեանց: Դուք ալ արդէն կը հաստատէք այս դառն իրականութիւնը, և դուք ևս նոյնպիսի կերպով կը վերաբերուիք ձեզնէ թոյլերուն հանդէպ, — հանդէպ մեզի, օրինակ:

Ինչո՞ւ ուրեմն ազանդաւորի ոճով ու մտայնութիւթիւնով կը ձգտիր ապացուցանել թէ՛ քրիստոնեայ Արեւմուտքը դուրս է թրղած մահմետական պետութիւնները միջազգային իրաւունքէն, թէ՛ քրիստոնեայ Արեւմտեան պետութիւններու ուժը ուղղուած է մահմետականութեան դէմ: Գիտական, պատմական, իրաւունքի ու պետութեան ո՞ր օրէնքն է որ ձեզ կը մղէ վերաբարձել խաչի և մանիկի պատերազմ — նոր ձիւնասի ու Խաչակիրութեան պատերազմներ:

Չէ՞ որ դուք ալ կ'ապացուցանէք որ Չինաստանն ալ, թէև ո՛չ-մահմետական, նոյնպէս լիովին չի վայելեր երոպական միջազգային իրաւունքի պաշտպանութիւնը:

Չէ՞ որ դուք էք հաստատողք թէ ձարոնական պետութիւնը, թէև ո՛չ-մահմետական, այսօր կանգնած է Արեւմտեան պետութեանց հետ հաւասար աստիճանի վրայ և լիովին կ'օգտուի միջազգային իրաւունքներէն:

Արդեօք ձեր կողմէն անարդարութիւն չէ՞ մոռանալ Ղըրբի մի պատերազմը, երբ նոյն երոպական պետութիւնները — թող ըլլայ իրենց շահին համար — եկան իրենց գանձն ու արիւնը զոհելու քրիստոնեայ Ռուսաստանի դէմ՝ մահմետական Թուրքիան պաշտպանելու համար:

Արդեօք ձեր կողմէն անարդարութիւն չէ՞ մոռացութեան մասնել որ վերջին Ռուս-Թրքական պատերազմի ժամանակ, քրիստոնեայ Անգլիան Սան-Սթէ-

Ֆանոյի առջև կանգնեցուց յաղթական քրիստոնեայ
Ռուսաստանի բանակը՝ մահմետական թուրքիան պաշտ-
պանելու համար :

Փաստը այն է ուրեմն, որ կրօններով չէ որ պե-
տութեանց փոխյարարելութիւնները կ'առաջնորդուին,
այլ ուժերով : Արդեօք թուրքիոյ փոխարէն՝ եթէ քրիս-
տոնեայ պետութիւն մը ըլլար և շարունակէր սպասել իր
ուժերը, եթէ շարունակէր վտանգի բողոքներուն ըջֆօրմի,
արդարութեան, հաւասարութեան խտատմանը տալ,
դաշնագրերով յանձնառութիւններ սանանձնել, վտանգն
անցնելէ յետոյ դարձեալ շարունակելու համար հինը,
քայքայումը, վասնումը և զեղծումը, — կը կարծէք որ
պիտի խնայուէր :

Արդեօք խնայուեր են քրիստոնեայ Բոյոնիան, Ֆին-
լանտան, Շվեդիոյ-Հոլշտայնը : Արդեօք մշտապէս վտան-
գի տակ չեն քրիստոնեայ Փորթուկալը, Հոլանտան,
Պելճիզան ելն : Երկար կ'ըլլար ասոնց շարքը, և այդ-
ամէնը դուք շատ լաւ գիտէք :

Եւ սակայն, հակառակ այդ ամէնուն, դուք միա-
կողմանիօրէն, հակառակ պատմութեան, հակառակ
գիտութեան և քաղաքակրթութեան, հակառակ ձեր գի-
մականորում խաղաղասիրութեան պաշտպանի վարդա-
պետութեանը՝ դ՛ուք էք որ պատերազմ կը ծրագրէք
Մահիկի՝ ընդդէմ Ռաչի :

'Իուք կը շարունակէք մեղանշել նաև ձեզի դէմ ձեր
խրաւսս վիւճուպը քահէսխոսով : Կրօնը՝ իրրև խղճի
գործ, երկրային կեանքէն բաժնելու անհրաժեշտութիւնը
յատակօրէն պաշտպանելէ յետոյ, դարձեալ դուք էք որ
ձեզի դէմ հակասելով՝ խրամական կրօնի տակ ընդհա-
նուր յայտարարի կը վերածէք բոլոր այն աղգերը, որոնք
թէև մահմետական, բայց քաղաքական, անտեսական,

կուրտուրական, ազգային և աշխարհադրական ինքնուրոյնութիւններ, առանձին շահեր ու առանձնայատկութիւններ կը ներկայացնեն :

Համխառնութիւնն է այս, չէ՞ :

Դուք ասիկա կ'ընէք Օսմանեան, այսինքն թուրք պետութեան վերածնունդի գործին և սիրոյն համար :

Թուրքիոյ վերածնունդի ցածկութիւնն ու պահանջը մերն ալ է, բայց դիտութեան և պատմութեան դասերն ունեցողները այդ նուիրական գործին համար պիտի չնսուսին հին նախապաշարունակներուն և յամառութեամբ չը պիտի շարունակեն երթալ հակադիտական և հակաքաղաքակրթական անեղ ճանապարհով :

Կ'աշխատիք ազայուցանելու որ խլամութիւնը պահպանողական չէ, վերանորոգիչ ծնունդ ու ոգի ունի : Ծառ բուս : Բայց չէ՞ որ կրօնն ու կրօնականը հոմանիչ չեն և բոլոր կրօններու մէջ կրօնականները պահպանողական են եղեր ու են, չէ՞ որ քաղաքակրթական առաջդիմութիւնները և վերածնունդները կատարուեր են ու կը կատարուին հակառակ կրօնականներու և անկախ անոնցմէ :

Քաղաքակրթութիւնը՝ ինչպէս դուք կը հաստատէք, անկախ կրօնէն, իւրաքանչիւր ազգի ու պետութեան սեղային, աշխարհադրական և այլ ազդեցութեանց տակ կազմուած բնդունակութիւններու, ստեղծուած քաղաքական, տնտեսական ու բնկերային պայմաններու համեմատութեամբ՝ դարերով յաջորդարար միջերուած աշխատանքի արդիւնքն է :

Հետեւաբար, բնական անհրաժեշտութիւնն է թուրքիոյ քաղաքական, կուրտուրական և տնտեսական վերածնունդին համար դիմել միևնոյն ազգային, տնտեսական և կուրտուրական ազդակներուն :

Թուրքիոյ, Օսմանեան պետութեան կամ ընկերութեան առանձնայատկութիւնները, բաղադրութիւնն ու այլ ազդակները հիմնովին կը տարբերին մահմետական այլ աշխարհներէն, ինչպէս և անոնցմէ իւրաքանչիւրը իրարմէ : Հետևարար, իւրաքանչիւր մահմետական աշխարհի վերածնունդը կարող է կատարուիլ իւրաքանչիւրին ինքնայատուկ ազդակներովը :

Արդ, ապացուցանելու կարօտ չէ՛ որ Օսմանեան պետութիւնը կազմուած է Արար, Հայ, Յոյն, Թուրք, ևն. ազգերով՝ որոնք իրարմէ կը տարբերին կրօնով, ծագումով, պատմութիւնով, լեզուով, կուլտուրայով և աշխարհագրական տարրեր մասերով ու առանձնայատկութիւններով :

Պարզ ու որոշ ըսէ՛ք. դուք կ'ընդունի՞ք այն բնական ու պատմական օրէնքն ու անհրաժեշտութիւնը թէ՛ Թուրքիոյ վերածնունդը կարող է և պէտք է կատարուի միայն և միայն այս ազգերու ազդակներովն ու համագործակցութեամբը :

Եթէ այո՛, ընդունեցէ՛ք ուրեմն որ ատիկա կարող է իրադործուիլ իւրաքանչիւր ազգի ինքնորոշ կեանքովն ու զարգացումովը : Արդէն այդ բնական ձգտումը ցոյց են տուեր, և այդ բնական պահանջն են դրեր նոյն իսկ մահմետական ազգերը՝ անկախ կրօնէն :

Եթէ ո՛չ, ուրեմն այդ պարագային, դուք Թուրքիոյ վերածնունդը կ'ըմբռնէք հակառակ բաղադրիչ ազգերու, հակառակ մեղի. և իսլամութեան տակ ձեր քողարկուած նպատակն ուրիշ բան չէ՛ եթէ ոչ միայն Թրքութիւնը :

Դուք չէ՛ք ընդունիր ուրեմն օսմանեան ընկերութիւնը կազմող ազգեր, անդամներ :

Այդ պարագային, դուք ո՛չ միայն դիտութեան, պատմութեան և բնութեան դէմ կ'երթաք, այլ և շա-

փաղանց միամիտ էք, ենթադրելով որ 300 միլիոնի գանազան մահմետական ազգեր իրենց ինքնութիւնը կը զոհեն կամ հնարաւորութիւնը կ'ունենան զոհելու՝ ձեր այդ բացարձակ կեօխար անարդարութեան, ծայրայեղ կեկեռիալիզմին, շովինիզմին համար:

Եթէ այս չէ նպատակնիդ, եթէ կ'ընդունիք օսմանեան ընկերութիւնը իր բաղադրիչ, անբաժան, բայց իւրաքանչիւրը իր ինքնագոյութեան իրաւունքովն ու միութեամբը, ինչո՞ւ հապա օսմանեան պետութեան վերածնունդի հարցը կը ձեւակերպէք իսլամութեան դատով և կերպարանքով:

Եւ զտրմանալին այն է մանաւանդ որ ձեր ձեւակերպած այդ իսլամական դատի յաղթանակին համար, դուք իսլամութեան կոչ կ'ընէք դաշնակցելու՝ քրիստոնեայ Արեւմուտքի ընկերվարական բանակին, ճնշուած կամ իրենց քաղաքական անկախութիւնը կորսնցուցած ազգերու — Ֆինլանտացիներու, Բալթիկներու, Սպիտակ Ռուսերու, Լեհներու, Իրլանտացիներու, Վրացիներու, Ալգաս Լօրէնցիներու, եւնի հետ:

Դուք կ'առաջադրէք ասոնց բոլորին գիտական ու քաղաքակրթական ուժը միացնել 300 միլիոն իսլամութեան թուին, և ասով ապահովել յաղթանակը իսլամական կեկեռիալիզմին՝ ընդդէմ արեւմտեան քրիստոնեայ կեկեռիալիզմին:

Դուք բոլոր օտարներուն դաշնակցելու պէտքը կը զգաք՝ բաց ի մեզմէ, մենք՝ որ այս երկրին, այս պետութեան բնիկները, քաղաքացիները, կենակիցներն ենք:

Մենք օսմանեան քրիստոնեայ ազգերս, անտես կ'առնուինք . . . :

Նախամեծար պիտի համարէի բոպէ մը ենթադրել որ դուք չէք անդրադառնար ձեր ծրագրի ամբողջ պատ-

կերպն, չէք անդրադասնար որ դուք անդգոտարար
ֆուզէք շարունակեց երկու հարիւր տարուայ քանդումն
ու աւերը՝ որուն միեւնոյն ժամանակ անուզոք ու խարա-
զանոց քննադատը կ'ըլլաք:

Չեմ կասկածիր որ կը սիրէք մեր բոյրերն նուիրու-
կած Հայրենիքը. և սակայն նոր դասնութիւններ, նոր
գծադրութիւններ կը պատրաստէք անոր այդ մտայ-
նութիւնով: Ենայեցէ՛ք իրեն:

Ինձի չեմ թոյլ տար ենթադրելու որ դուք գիտու-
թիւնն ու քաղաքակրթութիւնը, ընկերվարութիւնն ու
ձեռուած ազգերն անգամ կ'ուզէք շահագործել մեզի
դէմ, իրաւունքի ու արդարութեան դէմ՝ համխառնու-
կան եւկիւրխայիզներն համար:

Բայց մի՛ կասկածիք. անոնք այդքան միամիտ չեն
ըլլար: Դուք ասով նոր պատրանքի մը կ'ենթարկէք
դէմոքրատական այխարհը ձեզի դէմ:

Չեր բնական դաշնակիցն ու գործակիցը ամենէն
տառջ մենք ենք: Նախ մեզի՛ տուէք ձեր ձեռքը՝ ո՛չ
յանուն համխառնութեան, այլ յանուն օսմաննան միու-
թեան, յանուն իրաւունքի և արդարութեան: Չե՛ք
տուէք՝ անկեղծ ու մտքուք սկզբունքներով: Այդ պա-
րտդային միայն յողթանակը ազահով է:





